Բահայի հավատ

Մերի Պերկինս, Ֆիլիպ Հեյնսվորթ

The Baha'i Faith

Mary Perkins
Philip Hainsworth

Ward Lock Educational, 1934
ISBN 0 7062 3939 3
© Mary Perkins, Philip Hainsworth, 1980

Տպագրվում է Հայաստանի բահայիների Ազգային Հոգևոր ժողովի հավանությամբ, 2017թ

Ներածություն

Բահայի հավատը Բահաուլլայի հետևորդների կրոնն է: Արաբերենից թարգմանաբար Բահաուլլա նշանակում է «Աստծո Փառք»: Բահաուլլայի հետևորդներն իրենց անվանում են բահայիներ[1]:

Բահայի հավատը համաշխարհային կրոններից ամենաերիտասարդն է: Այն սկիզբ է առել 1844թ-ին Իրանում: Այսօր Բահայի հավատը ներկայացված է ավելի քան 100 000 վայրերում աշխարհի համարյա բոլոր երկրներում և տարածաշրջաններում: Բահայիները պատկանում են տարբեր սերունդների, ազգերի ու մշակույթների: Բահայիների գրականությունը թարգմանվել է մոտ 800 լեզուներով:

Չնայած Բահայի հավատը ծագել է Իրանում՝ մահմեդական երկրում, այն նույնքան տարբերվում է իսլամից, որքան քրիստոնեությունը՝ հուդայականությունից: Իր գոյության առաջին հարյուրամյակի ընթացքում այն ներխուժել է աշխարհի բոլոր անկյունները: Բահայի հավատն իր մեջ է ներառում բոլոր ժողովուրդների և սոցիալական խմբերի ներկայացուցիչներին: Այն ամբողջ մարդկությանն առաջարկում է խաղաղության, սիրո և միասնության ճանապարհ, հոգևոր փորձառության, ոգեշնչման և ուրախության ուղի:

Բահայիների միջազգային համայնքը միջազգային հասարակական կազմակերպություն է, որը սերտորեն համագործակցում է ՄԱԿ-ի հետ Երկրի վրա խաղաղության հաստատման, մարդու իրավունքների պաշտպանության և մեր մոլորակի ժողովուրդների լրիվ տնտեսական և սոցիալական զարգացման գործում: 1970թ-ից Ընկերակցությունն ունի խորհրդատվական իրավունք ՄԱԿ-ի Տնտեսական և Սոցիալական Խորհուրդում (ՏՆՏՍՈՑ), ներկայացուցիչներ ՄԱԿ-ի Նյույորքյան և ժնևյան գլխավոր գրասենյակներում, ինչպես նաև ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի վերաբերյալ ծրագրում (UNEP), որի նստավայրը գտնվում է Նայրոբիում: Միջազգային համայնքի ներկայացուցիչներ կան նաև Վիեննայում, Հռոմում, Բանգկոկում, Ադդիս-Աբեբայում, Սանտյագոյում և Նումեայում (Նոր Կալեդոնիա):

Այդքան տարբեր մաշկի գույն, ավանդույթներ և սոցիալական փորձ ունեցող մարդկությանը բահայիներն առաջարկում են նոր կենսակերպ՝ իր հիմնական գծերում պարզ, սակայն բավականին բարդ՝ մարդկանց պահանջմունքները բավարարելու համար հիմնարար սկզբունքների կոնկրետ կիրառության դեպքերում:

Այս գիրքը ծառայում է որպես Բահայի կրոնի ներածություն: Այն ոչ մի կերպ չի հավակնում դառնալ նոր համաշխարհային կրոնի համակարգված շարադրություն: Այս պարզ և տարածված ներածությունը նպատակ ունի նկարագրել Բահայի հավատի պատմությունը, սկզբունքները և դիրքը, որն ընթերցողների մոտ հետաքրքրություն կառաջացնի հարցի հետագա ուսումնասիրության հանդեպ:

Մենք վստահ ենք, որ Բահայի հավատի խորացված ուսում-նասիրությունը կգրավի ընթերցողին և նա հարյուրապատիկ անգամ կվարձատրվի:

Մերի Պերկինս, Ֆիլիպ Հեյնսվորթ

Ինչպես է ծագել Բահայի հավատը

Իրան

Իրանը բաղկացած է լայնարձակ սարահարթերից, որոնք բոլոր կողմերից շրջապատված են բարձր լեռներով, երկրի կենտրոնում գտնվում է Մեծ Աղի անապատը, հյուսիսում՝ Կասպից ծովը և Թուրանի անապատը, հարավում՝ Պարսից ծոցն ու Հնդկական օվկիանոսը:

Որպեսզի գնահատենք այն պայմանները որոնցում ծագել է Բահայի հավատը, պետք է նկատի ունենալ, որ 19-րդ դարի սկզբում ամբողջ Միջին Արևելքը գտնվում էր քաղաքական, տնտեսական և սոցիալական անկման մեջ:

Իրանի ժողովուրդը, որն անցյալում ստեղծել էր մեծ քաղաքակրթություն, 1800թ-ին թուլացել էր և մեկուսացել համաշխարհային պատմության ընթացքից: Մի խումբ մարդիկ ապրում էին շքեղության մեջ, այն ժամանակ, երբ մեծամասնությունը տառապում էր աղքատությունից, հիվանդությունից և տգիտությունից: Բարեփոխումներ անելու փորձերը կանգ էին առնում լայնորեն տարածված կոռուպցիայի, կաշառակերության և իշխանության չարաշահման պատճառով:

Իրանի բնակչության մեծամասնությունը մահմեդականներ էին, սակայն երկրում կային նաև զրադաշտական, հուդայական և քրիստոնեական հավատների հետևորդներ: Տարբեր կրոնների հետևորդների միջև չէր մարում փոխադարձ անհանդուրժողականությունը: Միաժամանակ Իրանը մեծ նշանակություն ուներ իսլամի, ինչպես նաև քրիստոնեության համար, քանի որ այդ երկիրը հիշատակված է երկու կրոնների Սուրբ Գրվածքներում: Պատվելի հայր Խ. Բոնարը, ով 19-րդ դարի սկզբին գրել է բիբլիական մարգարեների մասին, ընդունում էր Աստվածաշնչի մարգարեությունը Ասորեստանի, Էլամի և Իրանի վերաբերյալ, չնայած խոստովանում էր, որ չի հասկանում այն պատճառները, որոնցով այդ վայրերը պետք է դառնան այդքան օրհնյալ «վերջին օրերին»:

Ավետյացի փնտրտուքները

18-րդ դարի վերջում Շեյխ Ահմադ անունով կրթված և առաքինի կյանք վարող մահմեդականը ճամփա ընկավ դեպի Պարսից ծոցի կղզիներից մեկը: Այդ ուղուն նրան դրդեց այն համոզմունքը, որ շուտով Երկրի վրա կհայտնվի «Ավետյացը»՝ մեծ մարգարեն, որի մասին հիշատակվում է Իսլամի Գրվածքներում:

Շեյխ Ահմադը հավատում էր, որ Աստծո Դեսպանորդը, որի գալուստը կանխագուշակված էր հնուց, կդառնա մարդկության մեծագույն ուսուցիչը, որին սպասում էին բոլոր ժողովուրդները: Շեյխ Ահմադը ենթադրում էր, որ աշխարհում Նրա հայտնվելը մարդկության համար կնշանավորի նոր՝ խաղաղության և բոլոր կրոնների միավորման դարաշրջանի սկիզբը:

Սկզբում Շեյխ Ահմադն ուղևորվեց Իրաք՝ Նեդջեֆ, իսկ հետո Քերբելա՝ մահմեդականների սուրբ քաղաք: 680թ-ին Քերբելայում նահատակվել է իմամ Հուսեյնը՝ Մուհամմեդ մարգարեի թոռը: Հենց այստեղ՝ Քերբելայում, իր քարոզչական գործունեությունը սկսեց Շեյխ Ահմադը, որից հետո մեկնեց Իրան: Այստեղ նա հանդիպեց մի երիտասարդի Սեյիդ Քազիմ անունով (սեյիդը տիտղոս է, որը նշանակում է, որ տվյալ անձը Մուհամմեդի սերունդից է): Լսելով Շեյխ Ահմադի ուսմունքի մասին՝ Սեյիդ Քազիմը կտրեց-անցավ ամբողջ երկիրը նրան հանդիպելու համար: Շեյխ Ահմադը նրան ուրախությամբ դիմավորեց: Նա հասկացավ, որ նրա մեջ գտել է մի մարդու, ում հետ կարող է կիսվել իր գիտելիքներով և իր սրտի ձգտումներով: Նրանք սկսեցին միասին աղոթք կարդալ և սովորել, ճանապարհորդել և ուսուցանել այլ մարդկանց:

Շեյխ Ահմադն իր հետևորդ նշանակեց Սեյիդ Քազիմին: Իր ուսուցչի մահից հետո Սեյիդ Քազիմը մնաց Քերբելայում և շարունակեց այնտեղ քարոզել Ավետյացի գալուստի լուրը: Նրա աշակերտներից մեկը Մուլլա Հուսեյնն էր: Նա մաքուր սիրտ ուներ, ձգտում էր ճշմարտության և ուներ հիանալի աստվածաբանական կրթություն: Սեյիդ Քազիմը հասկացավ, որ կարող է իր հույսը դնել Մուլլա Հուսեյնի վրա և ուղարկեց նրան Իրան հատուկ առաջադրանքով: Միաժամանակ շարունակում էր

աճել Սեյիդ Քազիմի Նոր Հայտնության անխուսափելիության մեջ համոզվածությունը: Նա զգում էր, որ պետք է բարձրացնի վարագույրը, որը թաքցնում է Աստծո գանձը, այդ վարագույրը կարող էր խանգարել իր աշակերտներին ճանաչել Նրան, երբ Նա գար: Սեյիդ Քազիմն ասաց նրանց.

«Նա ազնվական ծագում ունի...Մարգարեի սերնդից է... Նա երիտասարդ է և օժտված է բնատուր գիտելիքներով: Նրա ուսմունքը հիմնված չէ Շեյխ Ահմադի քարոզների վրա, այն Աստծուց է: Իմ գիտելիքն ընդամենը կաթիլ է Նրա գիտելիքների անսահմանության առջև, այն, ինչ ես կարող եմ, ընդամենը փոշի է Նրա բարեհաճության և զորության հրաշքների առջև... Նա միջին հասակի է, չի ծխում և տարբերվում է անսովոր աստվածավախությամբ և բարեպաշտությամբ»[2]:

Սեյիդ Քազիմը պատվիրեց իր հետևորդներին ճանապարհորդել բոլոր երկրներով մեկ և փնտրել Ավետյացին՝ զոհաբերելով ամեն ինչ՝ հարմարավետություն, ունեցվածք, և եթե պետք լինի նաև կյանքը:

Վերադառնալով Իրանից Քերբելա՝ Մուլլա Հուսեյնն իր ուսուցչին կենդանի չգտավ: Նա քառասուն օր անցկացրեց պաս պահելով և աղոթելով՝ իր սիրտը պատրաստելով Ավետյացի փնտրտուքի ճանապարհորդության համար: Ոգևորված նրա օրինակով նույնը սկսեցին անել նաև Սեյիդ Քազիմի որոշ այլ աշակերտներ: Քառասուն օր անց Մուլլա Հուսեյնը ճանապարհ ընկավ: Նա իրեն ուղեկից վերցրեց եղբորը և զարմիկին, որոնցից յուրաքանչյուրն այդ ժամանակ հազիվ 20 տարեկան լիներ:

Երեք երիտասարդները լքեցին Քերբելան՝ ոչ մի պատկերացում չունենալով այն մասին, թե որտեղ իրենք պետք է սկսեն իրենց փնտրտուքները: Նրանք կրակոտ աղոթքով դիմեցին Աստծուն և Մուլլա Հուսեյնը զգաց, որ իրեն մագնիսի պես անզսպորեն ձգում է Շիրազը՝ Իրանի հարավում գտնվող քաղաքը, որը հայտնի էր բանաստեղծներով, ծաղկուն այգիներով և սոխակներով:

Մի երեկո Մուլլա Հուսեյնը և իր ուղեկիցները հոգնած, սոված և ճանապարհի փոշով պատված մոտեցան Շիրազի դարպասներին:

Մուլլա Հուսեյնն իր ուղեկիցներին քաղաք ուղարկեց, իսկ ինքը մնաց քաղաքի պատերից այն կողմ՝ մտորելով այն մասին, թե ինչ է իրեն վիճակված գտնել Շիրազում, և որքանով դա նրան կմոտեցնի Ավետյացին:

Այն ժամանակ, երբ Մուլլա Հուսեյնը կանգնած էր քաղաքի դարպասների մոտ, նրան մոտեցավ մի երիտասարդ՝ կանաչ գլխափաթթոցով (ինչը մատնացույց էր անում Մուհամմեդ մարգարեի սերունդից լինելը): Երիտասարդի դեմքից բարյացակամություն էր ճառագում: Նա ժպտաց և հրավիրեց Մուլլա Հուսեյնին՝ մտնել Շիրազ այնպիսի տոնով, կարծես նրանք վաղուցվա ընկերներ էին: Անծանոթի հմայքը, ընկերասիրությունը, կոկիկությունը ճանապարհից հոգնած Մուլլա Հուսեյնի վրա բարերար տպավորություն թողեցին: Անծանոթի ընկերակցությունը դուր էր գալիս նրան: Քաղաք մտնելու և իր տանը հանգստանալու առաջարկին ի պատասխան՝ Մուլլա Հուսեյնը բացատրեց, որ իր ուղեկիցներին քաղաքի դարպասներից ներս է ուղարկել և պետք է նրանց սպասի: *«Նրանց Աստծո խնամքին թող, անկասկած, Նա կպաշտպանի նրանց և կհովանավորի,-* ասաց երիտասարդ անծանոթը և ուղեկցեց Մուլլա Հուսեյնին դեպի Շիրազ:

Բաբի հռչակումը

Երիտասարդին, ով հանդիպեց Մուլլա Հուսեյնին Շիրազի քաղաքային դարպասներից այն կողմ, անվանում էին Սեյիդ Ալի Մուհամմեդ: Երկու ծնողների կողմից էլ Նա Մարգարեի տոհմից էր: Սեյիդ Ալի Մուհամմեդը ծնվել էր 1819թ-ի հոկտեմբերի 20-ին: Նրա հայրը մահացել էր, երբ Սեյիդ Ալին դեռ շատ երիտասարդ էր և պատանու մասին հոգալու պատասխանատվությունն իր վրա վերցրել էր Նրա քեռին: Երբ առաջին անգամ Սեյիդ Ալին դպրոց գնաց, ուսուցիչը Նրան տուն ուղարկեց: Ուսուցչի խոսքերով նա չէր կարող տղային ինչ-որ բան տալ, ինչը նա ինքը դեռ չգիտեր: Ալի Մուհամմեդն ուներ անսովոր բնածին գիտելիքներ, որոնք վերցված չէին գրքերից կամ ինչ-որ մեկից: Այդ գիտելիքն օգնում էր Նրան պատասխանել ամենադժվարին

հարցերին, այդ թվում այնպիսիքներին, որոնց պատասխանն անգամ ուսուցիչները չգիտեին:

Պատանի տարիքից Ալի Մուհամմեդը սկսեց աշխատել իր քեռու հետ առևտրական գործակալությունում՝ Շիրազում և Բուշիրի նավահանգիստում զբաղվելով նրա գործերով: Շուտով Նա հարգանք վաստակեց համեստության և գործերում արդարության, բարեպաշտության և աստվածավախության, գիտելիքների լայնության և խորության, վեհանձնության և լավ վարքի շնորհիվ: Երբ Նա հանդիպեց Մուլլա Հուսեյնին, Սեյիդ Ալի Մուհամմեդն արդեն տաս տարի առևտրով էր զբաղվում: Նա ամուսնացած էր իր մոր զարմուհու հետ, բայց նրանց միակ որդին մահացավ, երբ մեկ տարեկան էր: Ահա, թե իրենից ինչ էր ներկայացնում անծանոթ երիտասարդը, ով հանդիպեց Մուլլա Հուսեյնին և քաղաքավարությամբ հրավիրեց Շիրազի խաղաղ ծայրամասի իր համեստ տունը: Մուլլա Հուսեյնը զգում էր, որ նոր ծանոթի ներկայությամբ նրա հոգում աճում էր խաղաղության և երջանկության զգացումը:

Եկավ երեկոյան նամազի ժամանակը - աղոթքի, որը կատարում են բոլոր մուսուլմանները: Երկու երիտասարդները ծնկները ծալեցին աղոթելու համար: Մուլլա Հուսեյնն անկեղծորեն խնդրեց Աստծուն, որ այդ տարօրինակ հանդիպումն օգնի իրեն Ավետյացի փնտրտուքներում: Երբ աղոթքի բառերն արտասանվեցին, նրանք շարունակեցին զրույցը: Զգացված լինելով տանտիրոջ մեծ բարությունից, արժանապատվությունից և քաղաքավարությունից՝ Մուլլա Հուսեյնը նրա առջև բացեց իր սրտի խորը ձգտումները: Նա պատմեց իր ճամփորդության և փնտրտուքների մասին: Ալի Մուհամմեդն ուշադրությամբ լսեց նրան, իսկ հետո հարցրեց, թե արդյո՞ք Սեյիդ Քազիմը հիշատակել է որևէ նշաններ, որոնցով նրա աշակերտները կկարողանային ճանաչել Ավետյացին: Ի պատասխան Մուլլա Հուսեյնը կրկնեց իր ուսուցչից լսածը. «Նա հիանալի ծագում ունի ուղիղ գծով... Նա օժտված է բնածին գիտելիքներով... մարմնական թերություններ չունի...»[3]:

Երբ Մուլլա Հուսեյնն ավարտեց խոսքը, սենյակում մի քանի րոպե լռություն տիրեց: Այնուհետև հանգիստ, բայց տիրական և ուժեղ

ձայնով Սեյիդ Ալի Մուհամմեդն արտասանեց. *«Նայի՛ր, այդ բոլոր նշանները միավորված են իմ մեջ»*[4]:

Մուլլա Հուսեյնը ցնցված էր: Նա սկսեց առարկել: Ավետյացը, ասում էր նա, պետք է մեծ սրբության մարդ լինի, իսկ Նրա Գործը, որը Նա կհռչակի, կդառնա մեծ հզորության Գործ: Սակայն, այդ ամենն ասելով, Մուլլա Հուսեյնը միաժամանակ զգում էր նաև խղճի խայթ և ակնածանք: Դադարեցնելով իր առարկությունները՝ նա մի թուղթ հանեց, որը գրված էր դրանից մի քանի տարի առաջ: Թղթի վրա Շեյխ Ահմադի և Սեյիդ Քազիմի ուսմունքի ամենախրթին հատվածները մեկնաբանելու փորձեր էին արված: Նա խնդրեց տանտիրոջը նայել այդ թղթին: Նա անմիջապես կարդաց այն և Մուլլա Հուսեյնին հանդիպած բոլոր դժվարություններին տվեց պարզ և հստակ բացատրություն: Այնուհետև Ալի Մուհամմեդն ասաց. *«Իսկ այժմ եկավ Հովսեփի սուրահի իմաստը բացահայտելու ժամանակը»*[5]:

Մուլլա Հուսեյնին պատեց հիացմունքն ու մեծագույն ուրախությունը: Հովսեփի Սուրահը (այսինքն գլուխը) Ղուրանի մի մաս է: Մի անգամ Մուլլա Հուսեյնը խնդրեց Սեյիդ Քազիմին իր համար մեկնաբանություն գրել այդ սուրահի վերաբերյալ: «Դա հիրավի վեր է իմ ուժերից»,- պատասխանեց Սեյիդ Քազիմը: «Նա՝ Մեծագույնը, Նա, ով կգա ինձնից հետո, կբացատրի այն քեզ առանց քո խնդրանքի»[6]:

Արտաբերելով այդ բառերը, որոնք կանխագուշակված էին Մուլլա Հուսեյնի ուսուցչի կողմից՝ տանտերը վերցրեց փետուրը և սկսեց գրել: Գրելով բառերը՝ Նա սկսեց մեղեդային ձայնով երգել: Նա կանգ չառավ մինչև չգրեց մի ամբողջ գլուխ, որը կոչվում էր «Տիրակալության սուրահ»: Հիանալով Նրա ձայնով և արտասանված բառերի զորությամբ՝ Մուլլա Հուսեյնը նստեց և լուռ լսեց:

Շիրազի երիտասարդ առևտրականի այդ հայտարարությունը, որը կոչվում է Բաբի Հռչակում այն մասին, որ նա՝ Սեյիդ Ալի Մուհամմեդը, հիրավի Ավետյացն է, Մուլլա Հուսեյնին արվեց 1844թ-ի մայիսի 22-ի արևամուտից երկու ժամ և տասնմեկ րոպե անց: Այդ ամսաթիվն ու ժամը բահայի հավատի հետևորդների կողմից նշվում է որպես մարդկության պատմության նոր դարաշրջանի սկիզբ:

«Ով դու, ով առաջինը հավատաց Ինձ,- հենց այս խոսքերը Նա ասաց Մուլլա Հուսեյնին,- ճշմարիտ եմ ասում, Ես Բաբն եմ, այսինքն Աստծո Դարպասները»[7]*:*

«Բաբ» բառն արաբերեն նշանակում է «դարպասներ»: Այսպես Բաբը հայտարարեց իր մասին որպես խաղաղության և համաշխարհային եղբայրության նոր դարաշրջանի դարպասների: Նա հռչակեց, որ Իր առաքելությունը առավել նշանակալից Դեսպանորդի հայտնվելը կանխագուշակելն ու նախապատրաստելն է, որը պետք է Նրանից հետո գար: Այդ Մեծ Դեսպանորդին Նա անվանեց «Նա, Ում Աստված կհայտնի»: Բաբն ասում էր, որ այդ ապագա Դեսպանորդը կմիավորի բոլոր ժողովուրդներին և Երկրի վրա կհաստատի արդարություն և հավերժ խաղաղություն:

Մոռանալով ժամանակի, իրեն փնտրող ուղեկիցների մասին՝ Մուլլա Հուսեյնն ամբողջ գիշերն անցկացրեց լսելով Բաբի պատմությունը: Քաղաքը խաղաղությամբ քնել էր: Բաբը նախազգուշացրեց Մուլլա Հուսեյնն, որ որոշակի ժամանակ նա չպետք է ոչ-ոքի, անգամ իր ուղեկիցներին պատմի այն մասին ինչ տեսել է և լսել:

«*Տասնութ մարդ,*- ասաց Բաբը,- *պետք է սկզբից ընդունեն ինձ իրենց սրտի կանչով: Առանց կանչի և հրավերի, իրարից անկախ նրանք բոլորը կգտնեն ճանապարհն առ ինձ»*[8]*:*

Երբ Շիրազի մինարեթներից հասավ առավոտյան աղոթքի կոչը, Մուլլա Հուսեյնը լքեց Բաբի տունը: Ուրախությունը, հիացմունքը, ոգեշնչումը և ակնածանքը լցնում էին նրա հոգին:

«Նրա Հայտնության մասին իմացությունը,- խոստովանեց նա,- արթնացրեց իմ էությունը: Ես զգացի, թե ինչպես խիզախությունը և զորությունը տիրեցին իմ էությանը, և, եթե ամբողջ աշխարհն իր ցեղերով և ցեղապետերով ոտքի ելնեին իմ դեմ, միայնակ, առանց վախի ես կհաղթահարեի նրանց գրոհը: Տիեզերքն ինձ մի բուռ փոշի էր թվում իմ ափի մեջ»[9]:

Անցավ քառասուն օր, նախքան Բաբի մյուս հետևորդները սկսեցին ընդունել Նրան: Մեկը մյուսի ետևից, մեկը մյուսից անկախ, մեկը

պասի և աղոթքի, մեկին երազներում և երազանքներում բացվում էր երիտասարդ շիրազցի վաճառականի բնակության վայրը: Բոլոր նրանք անցյալում եղել էին Սեյիդ Քազիմի աշակերտները և թվում էր նույն ուժը, որը երբևէ բերել էր Մուլլա Հուսեյնին Շիրազ, այժմ ձգում էր նրանց դեպի Իրանի հարավում գտնվող այդ քաղաքը: Վերջինը եկավ Քուդդուս անունով մի երիտասարդ: Ճանապարհից հոգնած, փոշոտված նա հասավ Շիրազ: Փողոցում տեսնելով Մուլլա Հուսեյնին՝ նա սկսեց անհամբերությամբ հարցաքննել նրան, թե ինչ նորություններ կան Ավետյացի փնտրտուքների գործում: Մուլլա Հուսեյնը ջանում էր հանգստացնել նրան, բայց անօգուտ. Քուդդուսը տեսավ Բաբին: «Ինչու՞ ես ուզում թաքցնել Նրան ինձնից,- բացականչեց նա ապշած Մուլլա Հուսեյնին: Չէ, որ ես Նրան անգամ քայլվածքով կճանաչեի: Վստահաբար վկայում եմ, որ ո՛չ Արևելքում, ո՛չ Արևմուտքում, ոչ-ոք Նրանից բացի, չի կարող հավակնել նրան, որ Ճշմարիտ լինի: Ոչ ոք չի կարող լուսարձակել այնպիսի հզորություն և վեհություն, ինչպիսին բխում է Նրա սուրբ էությունից»[10]:

Բաբը կանչեց աշակերտներին, որոնք հավաքվել էին Շիրազում և հրամայեց նրանց սփռվել Պարսկաստանով մեկ՝ տարածելով Նրա ուսմունքը և նախապատրաստելով սրտերը Նրա գալուստին, Ում Աստված կհայտնի: Նա նրանց ասում էր մեծ պատասխանատվության մասին, պահանջում էր զգուշավորություն և չափավորություն, նախա-զգուշացնում էր, որ իրենց ջանքերին ի պարգև հնարավոր է նրանք ստիպված լինեն ընդունել կտտանքներ և մահ:

«Ես ձեզ նախապատրաստում եմ Մեծագույն օրվա գալուստին: Ձեր բոլոր ջանքերը գործադրեք, որ Ես, ով այժմ ուսուցանում է ձեզ, ապագա աշխարհում Ամենակարեկից Աստծո Գահի առջև ուրախանամ ձեր արարքներից և փառավորվեմ ձեր հաջողություններով: Գալիք Օրվա գաղտնիքն այժմ թաքնված է: Այն հնարավոր չէ ո՛չ բացահայտել, ո՛չ գնահատել: Նորածին երեխան այդ Օրը կգերազանցի մեր ժամանակի ամենահմտաստուն և պատվելի մարդկանց: Այդ դարաշրջանում ամենա-նվաստն ու անկիրթը իր խելքով կգերազանցի այս ժամանակաշրջանի ամենագիտուն և կատարյալ աստվածաբաններին: Տարածվեք երկրով մեկ, անխոնջ ոտքերով և լուսավորված սրտով պատրաստեք Նրա գալուստի ճանապարհը:

Ուշադրություն մի դարձրեք ձեր թուլությանն ու անցավորությանը, կենտրոնացրե՛ք ձեր հայացքը Տիրոջ՝ ձեր Աստծո, Ամենազորի անկործան ուժի վրա: Արդյո՞ք Նա չէր, որ Աբրահամին ուժ տվեց, չնայած Նրա արտաքին թուլությանը, հաղթանակ տանելու Նիմրոդի ուժերի դեմ: Արդյո՞ք Նա չօգնեց Մովսեսին, ում միակ ուղեկիցն իր գավազանն էր, հաղթել փարավոնին և նրա զորքերին: Արդյո՞ք Նա չհաստատեց մարդկանց աչքերում աղքատ և նվաստացած Հիսուսի իշխանությունը հրեաների բոլոր ուժերի վրա: Արդյո՞ք Նա չենթարկեց բարբարոս և զինված արաբական ցեղերին Իր Մարգարե Մուհամմեդի սուրբ և վերափոխող ուսմունքին: Ոտքի ելեք հանուն Աստծո անվան, լիովին վստահեք Նրան և հավատացեք վերջնական հաղթանակին»[11]*:*

Բաբի քարոզը

Բաբի հետևորդներն ուրախությամբ ճանապարհ ընկան տարածելու Նրա ուսմունքը: Նրանց փոխանցած լուրը Իրանում անսովոր հուզմունք ծնեց: Հազարավոր մարդիկ էին հավաքվում Նրան լսելու և Նրա փառքն օրեցօր մեծանում էր: Հարուստները և աղքատները, տգետներն ու կրթվածները, քաղաքացիները և գյուղացները բոլորը հավասարապես ցանկանում էին որքան հնարավոր է շատ բան իմանալ: Բաբի հետևորդներ դարձան մի քանի գիտնականներ և խորապես հարգված կրոնական գործիչներ: Իշխանություններն անհանգստացան: Շիրազում բռնեցին Քուդդուսին և Բաբի տարեց հետևորդներից մեկին, նրանց մորուքներն այրեցին, ծակեցին նրանց քթանցքները և այդ անցքերով պարան անցկացնելով նրանց տարան քաղաքով մեկ: Նրանց ծեծեցին և աքսորեցին Շիրազից՝ նախազգուշացնելով, որ եթե նրանք վերադառնան, նրանց կխաչեն:

Իրանում ծավալվեց բաբիների[12] կատաղի հետապնդումների ալիքը, Բաբը տնային կալանքի ենթարկվեց: Հուզումների պատճառը քննելու համար շահն ուղարկեց մի մարդու Վահիդ անունով, ով բավականին կրթված, հարգված և ազդեցիկ մարդ էր. շահը վստահում էր նրան: Բաբի հետ երեք հանդիպումից հետ Վահիդը դարձավ նրա նվիրված հետևորդը և անձամբ սկսեց տարածել Նրա ուսմունքը:

Իրադարձությունների նման շրջադարձը շատ անհանգստացրեց Մեծ Վեզիրին՝ շահի առաջին նախարարին: Նա վախենում էր, որ շահի

հետ Բաբի հանդիպման դեպքում, վերջինս կազդի տիրակալի վրա: Մեծ Վեզիրը հասավ Բաբի՝ երկրի հյուսիսային սահմանի մոտակայքում գտնվող Մահ-Քուի բանտում ձերբակալմանը:

Մահ-Քուի բանտի մոտակայքում ապրում էին հասարակ գյուղացիներ: Սեփական գյուղի սահմաններից դուրս կատարվող իրադարձությունները նրանց չէին հետաքրքրում, իսկ եկվորները թշնամություն էին առաջացնում: Սկզբնական շրջանում բանտապետը նույնպես թշնամաբար էր տրամադրված Բաբի հանդեպ, սակայն շուտով նա հասկացավ, որ այդ կալանավորն արտասովոր մարդ է: Նա սկսեց հարգել և սիրել Բաբին: Բաբի ազդեցությունն իրենց վրա զգացին նաև տեղի գյուղացիները: Նրանք սկսեցին հավաքվել բանտի պատերի տակ այն հույսով, որ կլսեն Բաբի երգած աղոթքները: Նրանք Նրան էին դիմում իրենց ամենօրյա աշխատանքն օրհնելու խնդրանքներով և իրար առջև երդվում էին Նրա անունով: Բոլոր կողմերից ուխտագնացներ էին գալիս, բանտապետը թողնում էր նրանց Բաբի մոտ և ինքն էլ աստիճանաբար դարձավ Նրա հավատարիմ կողմնակիցը:

Մեծ Վեզիրը կրկին անհանգստացավ և տեղափոխեց Բաբին դեպի ավելի հեռավոր Չեհրիք ամրոց, որը ղեկավարում էր շահի փեսան: Նա դաժան և անկանխատեսելի վարք ուներ: Սկզբում նա Բաբի հետ շատ խիստ էր վարվում, սակայն հետո նա նույնպես ենթարկվեց Նրա հմայքին: Այստեղ նույնպես Բաբը վայելում էր տեղացիների հարգանքն ու սերը: Նորից սկսեցին այցելուներ գալ: Նրանցից մեկը դերվիշի շորեր հագած եկել էր անգամ Հնդկաստանից: Իր երկրում նա արքայազն էր, բայց Բաբին տեսնելով իր տեսիլքներում, Նրա հետ մեկ հանդիպման համար հրաժարվեց հարստությունից և հասարակական դիրքից: Բաբը նրան ետ Հնդկաստան ուղարկեց Իր ուսմունքը տարածելու:

Իրանում Բաբի ուսմունքի տարածմանը զուգահեռ աճում էին նաև ճնշումները: Դաժանորեն տանջվեցին և սպանվեցին Բաբի առաջին աշակերտները և հարյուրավոր մարդիկ, ովքեր հետևել էին նրանց քարոզներին: Եթե նրանք հրաժարվեին իրենց հավատից, նրանց կյանքը կխնայեին: Սպանվեց նաև Բաբի քեռին, ով մեծացրել էր Նրան, քանի որ հավատացել էր իր քրոջ որդու առաքելությանը: Հետևորդների մահը

Բաբին վիշտ և տխրություն էր բերում: Նա գիտեր, որ շուտով կգա նաև Իր հերթը և Չեհրիքի բանտում Նա գրում է Իր Հայտնության մեծ մասը:

Չկարողանալով դադարեցնել Բաբի շարժման տարածումը և այդպիսով վերջնականապես արմատախիլ անել հերետիկոսությունը՝ 1850թ-ին պարսկական իշխանությունները որոշեցին գլխատել Բաբին: Այսպիսով Նրա կարճ վեցամյա քարոզը, որից երեք տարին Նա անցկացրեց համեմատական ազատության, իսկ մյուս երեքը՝ բանտարկության մեջ, սրընթացորեն մոտենում էր իր բախտորոշ կետին:

Բաբի մահապատիժը

Բաբը տեղափոխվեց Թավրիզ: Երբ Նրան տանում էին քաղաքի փողոցներով, մի երիտասարդ ընկավ Նրա ոտքերի մոտ՝ աղաչելով, որ նրան թույլ տան մեռնել Բաբի հետ միասին: Երիտասարդին բռնեցին և նույնպես մահապատժի դատապարտեցին:

Իր վերջին օրն այս աշխարհում Բաբն անցկացրեց բարձր և ուրախ տրամադրությամբ: Նա գիտեր, որ չնայած բոլոր դժվարություններին, Նրա առաքելությունն իրականացված է: Հաջորդ օրն առավոտյան, երբ Նա վերջին կարգադրություններն էր թելադրում իր աշակերտին, Նրա պարապմունքներն ընդհատվեցին: Մահապատժի կազմակերպիչների ուղարկած զինվորները, փորձում էին շտապեցնել Նրան, բայց Նա սպային այսպես պատասխանեց. «Մինչև Ես չասեմ այս մարդուն այն ամենը, ինչ ունեմ ասելու, ոչ մի երկրային ուժ չի կարող խանգարել Ինձ: Եթե Իմ դեմ ելնեն անգամ աշխարհի բոլոր բանակները, նրանք ստիպված կլինեին հաշտվել ինձ Իմ մտադրությունների իրականացումից կտրելու անկարողության հետ»[13]:

Այն, ինչ հետո տեղի ունեցավ, զարմանալիորեն հիշեցնում է այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել նկարագրվող դեպքերից տասնութ դար առաջ, երբ նույն կերպ առանց օրինական դատաստանի իր դատավճիռը ստացավ Քրիստոսը: Բաբին տարան երեք կրոնական առաջնորդների տներ, որոնք ստորագրեցին Նրա դատավճիռը: Կրո-

նական առաջնորդներից և ոչ մեկը չկամեցավ հանդիպել Նրա հետ: Անհրաժեշտ փաստաթղթերը ստորագրվեցին, հաստատվեցին և կնքվեցին:

Բաբին տարան Թավրիզի փողոցներով, որտեղ մահապատիժը տեսնելու էին եկել մոտ տաս հազար մարդ:

Վաշտի հրամանատարը, ով պետք է իրականացներ դատավճիռը քրիստոնյա Սամ Խանն էր: Խորապես զգացվելով Բաբի բարությամբ և հեզությամբ՝ նա շատ էր անհանգստանում իրեն սպասվելիք առաջադրանքից:

«Ես ձեր դեմ ոչինչ չունեմ,- ասաց նա Բաբին: - Եթե ձեր Գործը Ճշմարտության Գործն է, ինձ հնարավորություն տվեք ազատվել ձեր արյունը թափելու պարտականությունից»:

«Հետևեք ձեր կարգադրություններին,- պատասխանեց Բաբը: - *Եթե ձեր մտադրություններն անկեղծ են, Բարձրյալն, անկասկած, կազատի ձեզ դժվարություններից»*[14]*:*

Բաբն ու Նրա երիտասարդ ուղեկիցը կախվեցին պարաններով զորամասի պատից և Սամ Խանի վաշտից յոթ ու կես հարյուր զինվորներ նշան բռնեցին և կրակեցին Նրա վրա: Երբ կրակոցների ծուխը ցրվեց, հիացմունքի հզոր ճիչ դուրս եկավ ամբոխից: Բաբը չկար, իսկ երիտասարդը, ով կապվել էր Նրա կողքին, անվնաս կանգնած էր: Դրան հետևեցին Բաբի հուսահատ փնտրտուքները: Երբ Նրան գտան, Նա ավարտում էր կարգադրություններ տալը, որով զբաղված էր մինչ զինվորների Իր բանտախուց գալը:

«Այժմ Ես ավարտեցի ասելիքս,- ասաց Բաբն իրեն փնտրողին: - Կարող եք շարունակել իրականացնել այն, ինչ մտադրված էիք»[15]*:*

Սամ Խանը հրամայեց իր վաշտին լքել զորամասի տարածքը և հրաժարվեց մահապատժում հետագա մասնակցությունից: Մեկ այլ վաշտ բերեցին: Այս անգամ Բաբի և Նրա ուղեկցի մարմինները կտոր-կտոր եղան, և միայն նրանց երեսները մնացին գրեթե անվնաս:

Այդ մահապատիժը տեղի է ունեցել 1850թ-ի հուլիսի 9-ին:

Հենց նույն օրը քաղաքին վրա հասավ ուժեղ փոթորիկը: Ուժեղ քամի էր, և ողջ օրը փոշին պատել էր ամբողջ երկինքը: Բաբի և Նրա երիտասարդ ուղեկցի մարմինները նետվեցին քաղաքային դարպասներից այն կողմ, որպեսզի բաբիները չկարողանային դրանց տիրանալ: Չնայած պահակախմբին՝ Բաբի հետևորդներն, այնուամենայնիվ, կարողացան դա անել և թաքցրեցին մարմինն ապահով վայրում:

Բաբը և Նրա առաքելությունը

Բաբն իրեն հռչակեց որպես Աստծո ինքնուրույն Հայտնության կրող և իրենից ավելի նշանակալից Դեսպանորդի նախակարապետ: Բաբը ձևափոխեց իսլամի օրենքները և ծեսերը, որոնք վերաբերվում էին աղոթքին, պասին, ամուսնությանը, ամուսնալուծությանը և ժառանգությանը: Նրա գրվածքներում կրկնվում է «Նրա, Ում Աստված կհայտնի» գալուստի թեման: Այդ գալիք դեսպանորդին Նա գովք է հղում և կոչ է անում իր հետևորդներին ձգտել Նրան, անգամ, եթե դրա համար ստիպված լինեն սողալ ձյան վրայով: *«Ես,-* ասում էր Բաբը*,- ընդամենը Նրա ծառաներից առաջինն եմ, նրանցից, ովքեր հավատում են Նրան և Նրա նշաններին, նրանցից, ովքեր մաս ունեն Նրա ասույթների բարի քաղցրությունից, Նրա գիտելիքների դրախտի առաջին պտուղներում»*[16]: Բաբը հավատում էր, որ հաջորդ Դեսպանորդը կգա Իր մահից անմիջապես հետո:

Բաբի մահապատժից երկու տարի անց Նրա երիտասարդ հետևորդներից երկուսը, ում ուղեղները մթագնել էին հուսահատությունից և վշտից, հարձակում գործեցին շահի վրա: Նրանց օգտագործած զենքը, շատ պարզունակ էր և շահն ընդամենը աննշան վնասվածք ստացավ: Այդ հարձակումն առաջացրեց բաբիների հանդեպ հետապնդումների ալիք: Իշխանությունները հրահրեցին ժողովրդին աջակցել վրեժի արշավին, որն ուղղված էր երկիրը բաբիներից ազատելուն:

Սարսափելի ջարդերի հետևանքով գազանաբար սպանում էին տղամարդկանց, կանանց և երեխաներին: Սպանությունների և փողոց-

ներում գազանությունների արյունալի տեսարանների վկա չդառնալու համար Իրանում գտնվող օտարերկրացիները նախընտրում էին փողոց դուրս չգալ: Բանտարկվեց նաև ամենահայտնի բաբին, ով հետագայում հայտնի դարձավ Բահաուլլա անունով:

Բահաուլլա

Բահաուլլա արաբերեն նշանակում է «Աստծո փառք». այդ պատվանունը նշվում է Բաբի կողմից: Մարդն, ով ընդունել էր այն, իր ծնվելուց անվանվել էր Միրզա Հուսեյն Ալի և ծնվել էր 1817թ-ի նոյեմբերի 12-ին Թեհրանի ամենահայտնի ընտանիքներից մեկում: Նրա հայրը շահի պալատի գլխավոր նախարարն էր. Բահաուլլան դեռ փոքրուց շրջապատված էր հարստությամբ, հարմարավետությամբ և շքեղությամբ: Նա բարակ մետաքս էր կրում և ուտում էր լավագույն սնունդը: Նրա ընտանիքը տնօրինում էր հոյակապ տների: Ինչպես մյուս երիտասարդ պարսիկները, որոնք ունեին ազնվական պաշտոններ այդ դարաշրջանում, Բահաուլլան սովորել է իսլամի հիմունքները, պարսկական գրականություն և պոեզիա, ինչպես նաև գեղագրություն: Բաբի նման Բահաուլլան ևս ուներ անսովոր գիտելիքներ, որոնք չէին սերում ուսուցչից կամ գրքերից: Մարդիկ ապշում էին Նրա գիտելիքների խորությունից և լայնությունից, Նրա բացառիկ տրամաբանական և բանավիճելու կարողությունից: Յոթ տարեկանում Նա մի անգամ ստիպված էր փոխարինել հորը պալատում գույքային ինչ-որ վեճի հարցով և շահեց գործը:

Բացառիկ ունակությունները Նրա մեջ մեծ հպարտություն չէին առաջացնում: Նա համեստ էր և ուրախ, կամեցող և բարի: Նա հասարակ նախասիրություններ ուներ: Սիրում էր բնություն, թռչուններ, ծառեր, ծաղիկներ, կենդանիներ և նախընտրում էր իր ժամանակն անցկացնել քաղաքից դուրս, քան պալատում: Նա գումարը ծախսում էր ոչ թե հաճույքների վրա, այլ աղքատներին և կարիքավորներին օգնելու վրա: Ինչպես ընդունված էր այն ժամանակ Նա երիտասարդ տարիքում ամուսնացավ: Նրա կինը նույնպես սերում էր շատ հարուստ ընտանիքից, բայց նրա հետաքրքրությունները նույնպես հասարակ էին: Նրանք

միասին աշխատում էին, որպեսզի թեթևացնեն նրանց հոգսը, ովքեր կյանքում ավելի վատ պայմանների էին արժանացել, քան իրենք: Նրանց տան դռները միշտ բաց էին ուտելիքի, ապաստարանի, օգնության կարիք ունեցողների համար: Նրանց կոչում էին «աղքատների Հայր և Մայր»: Երբ Բահաուլլայի հայրը մահացավ, Նրան առաջարկեցին զբաղեցնել Նրա տեղը պալատում, սակայն Նա հրաժարվեց:

1844թ-ի ամռանը՝ Բաբի Իր առաքելության հռչակումից երեք ամիս անց, Մուլլա Հուսեյնը Թեհրան բերեց Բաբի ուղերձով մի նամակ և հետևեց, որ այն ընկնի Բահաուլլայի ձեռքը: Կարդալով ուղերձը՝ Բահաուլլան ընդունեց Բաբին և դարձավ Նրա հետևորդը: Այդ ժամանակ Նա 27 տարեկան էր: Բահաուլլան երբեք անձամբ չի հանդիպել Բաբին, բայց գտնվում էր Նրա հետ մշտական նամակագրական կապի մեջ, ամբողջ սրտով աջակցում էր Նրա ուսմունքին և ձգտում էր այն տարածել: Արդյունքում Նա ընկավ դեռ քիչ հայտնի շարժման շարքերը, որի շահերն ամբողջությամբ հակասում էին Իր դասակարգի շահերին:

Երբ Բաբը բանտում էր, Բահաուլլան Նրա հալածվող հետևորդներին ամեն տեսակ աջակցություն էր տրամադրում: Նա երկու անգամ բանտ ընկավ, իսկ մի անգամ գիտակցաբար Իր վրա ուղղեց ամբոխի զայրույթը, որ թույլ տա կողմնակիցներին փախչել հետապնդումից: Պատահել է, որ Նրան ծեծել են և քարկոծել: Անվախ, անխոնջորեն Բահաուլլան աջակցում էր բաբիներին, օգնում էր նրանց և արժեքավոր խորհուրդներ էր տալիս: Երբ Բաբը հասկացավ, որ շուտով կմահանա, Նա Բահաուլլային ուղարկեց իր կնիքները, թղթերը և նամակ գրելու փետուրները: Բահաուլլայի ցուցումներով Բաբի մնացորդները Թավրիզից Թեհրան հասցրին և պահվեցին ապահով վայրում:

Շահի վրա հարձակմանը հաջորդող օրերին Բահաուլլան Մեծ Վեզիրի տանն էր հյուրընկալվում: Ընկերները Նրան խորհուրդ էին տալիս թաքնվել, մինչև հուզումները կհանդարտվեն, բայց Բահաուլլան հրաժարվեց: Դրա փոխարեն Նա ուղղվեց դեպի վաշտ, որին հրամայված էր բռնել և ձերբակալել Նրան: Այնտեղ Նրա արտաքին հագուստը պատռեցին և շղթայեցին: Ոտաբոբիկ և առանց գլխարկի, կեսօրի այրող արևի տակ Նրան տարան Թեհրանի բանտ: Հավաքված ամբոխը վիրավորանքներ էր տեղում և քարեր էր նետում: Բահաուլլան խնդրեց

պահակախմբին դանդաղեցնել քայլքը, որ մի ծեր կնոջ թույլ տա քար նետել Իր վրա, քանի որ վերջինս չէր կարողանում հասնել թափորին:

«Մի վշտացրեք այդ ծեր կնոջը, - ասաց Նա: - *Մի խանգարեք Նրան անել այն, ինչը նա աստվածահաճո է համարում»*[17]*:*

Սիյահ Չալ բանտը, որտեղ ուղարկվել էր Բահաուլլան, ի սկզբանե ծառայում էր որպես քաղաքի հասարակական բաղնիքներից մեկի ջրամբար: Նրան տարան ամբողջությամբ մութ միջանցքով եռահարկ պտուտաձև աստիճաններով, որոնք տանում էին գետնի տակ: Բանտախուցը մութ էր, խոնավ և լի էր միջատներով: Այնտեղ համարյա առանց հագուստի, առանց անկողնու տենդի մեջ այրվում էին հարյուր հիսուն մարդ: Գերակշռում էին մարդասպանները, կողոպտիչները և ավազակները: Նրանց մեջ բաբիների խմբում շղթայված էր նաև Բահաուլլան: Կալանակոճղերի մեջ գամված, ծանր շղթաները ընկած էին Նրա ուսերին. Նա չէր կարողանում ո՛չ վեր կենալ, ո՛չ պառկել: Այդ շղթաները մտել էին Նրա մարմնի մեջ, և դրա նշանները Նա կրեց ամբողջ կյանքում: Երեք օր ուտելիք կամ խմելու բան չէին տալիս: Երբ վերջապես ուտելիք բերեցին, այն թունավորված էր: Բահաուլլայի հանդեպ հարգանքը մեծ էր և իշխանությունները չհամարձակվեցին Նրան գլխատել: Ամեն օր բանտապահները կտտանքների և մահապատժի էին տանում բաբիներից մեկին: Եվ ամեն անգամ, երբ մահվան էին տանում բաբիներից մեկին, նա դիմում էր Բահաուլլային օրհնության համար, իսկ հետո ուրախությամբ գնում էր մահվանն ընդառաջ: Բահաուլլան հանգստացնում և սփոփում էր բոլոր բանտարկյալներին: Նա բաբիներին սաղմոսներ երգել էր սովորեցնում: Կալանակոճղերում գամվածների առաջին շարքը երգում էր. «Աստված ինձ ամեն ինչ տալիս է, հիրավի Նա Ամենաառատաձեռն է»: Երկրորդ շարքը ձգում էր. «Հավատ ունեցողը վստահի Նրան» [18]: Բանտարկյալներն այնքան բարձր և ուրախ էին երգում, որ նրանց երգի ձայները մոտակայքում գտնվող շահի պալատ էին հասնում:

Նման պայմաններում Բահաուլլան բանտում անցկացրեց չորս ամիս: Երբ Նա այնտեղից դուրս եկավ, Նրա առողջությունը սաստիկ քայքայվել էր, պարանոցը՝ վնասվել, մեջքը՝ ծռվել. Նա հազիվ էր կարողանում քայլել:

Սիյահ Չալ բանտում Բահաուլլայի հետ հրաշալի իրադարձություն տեղի ունեցավ, որը նախանշեց, որ հենց Ինքն է այն Անձնավորությունը, «Ում Աստված կբացահայտի», այն Ավետյացը, ում գալուստի մասին մարգարեանում էր Բաբը:

«Այն օրերին, երբ Ես Թեհրանի բանտում էի և գրեթե չէի կարողանում քնել շղթաների սարսափելի քաշից և անհնարին գարշահոտությունից, մոռացության կարճատև պահերից մեկի ժամանակ Ինձ թվաց, թե Իմ գլխից դեպի կուրծք ինչ-որ բան հոսեց հզոր հոսքի նման, որ գահավիժում է գետին բարձր լեռան գագաթից: Իմ մարմնի բոլոր անդամները կարծես վառվեցին կրակով: Իմ լեզուն այդ պահին արտասանեց ինչ-որ բան, որին չէր դիմանա ոչ ոք, եթե լսեր[19]*:*

Ո՛վ Արքա, Ես այլ մարդկանց նման էի, քնած էի իմ անկողնում, երբ հանկարծ Փառապանծի զեփյուռները համակեցին ինձ և տվեցին ինձ ամեն ինչի մասին գիտելիքներ: Այս Ինձնից չէ, այլ Նրանից, ով Ամենազոր է և Ամենագետ: Եվ Նա հրամայեց ինձ բարձրացնել իմ ձայնը երկնքի և երկրի միջև և հանուն ամեն ինչի ինձ բաժին հասավ այն, ինչից ըմբռնող մարդկանց աչքերից արցունքներ են հոսում... Նրա ամենաներթարկող հրամանը ինձ հասավ և ստիպեց խոսել մարդկանց միջև»[20]*:*

Այդպես է գրել Բահաուլլան շահին ուղղված նամակում, որը վերաբերվում է Նրա կյանքի ավելի ուշ շրջանին: Նրանք, ովքեր Նրան բանտարկեցին, չկարողացան գտնել շահի վրա հարձակմանը Նրա մասնակցության փոքրագույն ապացույց անգամ: Շահի պալատում ռուս դեսպանն [21] իր ազդեցությունն օգտագործեց Բահաուլլայի ազատ արձակման համար և Նրան Ռուսաստանում ապաստարան առաջարկեց: Շահը տատանվելով համաձայնեց բանտից ազատել Բահաուլլային: Այդպես 1852թ-ի դեկտեմբերին ավարտվեց Նրա բանտարկությունը սարսափելի հորում, որը հայտնի է Սիյահ Չալ անունով: Սակայն հենց այդ ստորգետնյա զնդանում Նրան՝ «անդրաշխարհիկ շղարշով պատվածին, գարշահոտությամբ շնչողին, սառնամանիքից և խոնավությունից սառցակալածին, ոտքերով կալանակոճղերին գամվածին»[22] հայտնվեց բահայի Հայտնության ճշմարիտ սկիզբը:

Բահաուլլան զրկվեց ամբողջ ունեցվածքից և նախընտրելով Իրանից աքսորը Ռուսաստանում ապաստարանին, մեկ ամիս ստացավ, որ ընտանիքի հետ լքի Պարսկաստանը:

Նրա ունեցվածքն առգրավվեց և Բահաուլլան չկարողացավ նախապատրաստվել ճանապարհորդությանը: Ձմռան կեսն էր, ուժեղ սառնամանիքներ էին: Բահաուլլայի կինը՝ Նավվաբը հղիության յոթերորդ ամսում էր: Նա Ինքը վատառողջ էր և դեպի Բաղդադ ճանապարհը երեք ամիս խլեց: Աքսորյալները գնում էին ծյունապատ լեռներով, նեղ կածաններով գիշերներն անցկացնելով պարզունակ ապաստարաններում առանց ուտելիքի և քնի համար անհրաժեշտ բավարար հարմարությունների: Երեխաներին կերակրելու համար Բահաուլլայի կինը վաճառեց իր հագուստների արծաթյա կոճակները:

Աքսորը դեպի Իրաք

Ձախջախված և հիվանդ Բահաուլլան հասավ Բաղդադ 1853թ-ի ապրիլի 8-ին: Բոլորն արդեն կորցրել էին հույսը, որ Նա կհաղթահարի դժվարությունները կամ կենդանի կմնա տեղ հասնելուց հետո: Սակայն Նա կարողացավ ուշքի գալ:

Իրաքում Նա ապրեց տաս տարի: Շուտով Բահաուլլայի ազդեցությունը սկսեց զգացվել Իրաքի անգլուխ, անկման մեջ գտնվող և վշտացած բաբիների համայնքում: Այնուամենայնիվ հարազատ եղբոր՝ մարդկանց վրա Նրա ունեցած ազդեցության հանդեպ նախանձի պատճառով, Բահաուլլան ստիպված էր լքել քաղաքը, չցանկանալով դառնալ բաբիների միջև վեճերի և պառակտումների պատճառ: Մի անգամ Բաղդադ գալուց մեկ տարի անց Բահաուլլան հեռացավ քաղաքից:

Հաջորդ երկու տարիներին Նա որպես ճգնավոր անցկացրեց Քուրդստանի լեռներում: Քրդերը հպարտ և ռազմատենչ ժողովուրդ էին և հայտնի էին պարսիկների հանդեպ իրենց թշնամությամբ: Չնայած ճգնավորությանը, այնուամենայնիվ, Բահաուլլան Իր բարության և իմաստության շնորհիվ շուտով նրանց մեջ հռչակ ձեռք բերեց: Այդ

շրջանի գիտնականները փափագում էին հանդիպել Նրա հետ: Նա հարգված և սիրված էր ինչպես գիտնականների, այնպես էլ անկիրթների կողմից, և շուտով Քուրդիստանի լեռների իմաստուն և սուրբ մարդու համբավը հասավ Բաղդադ: Իմանալով անսովոր ճգնավորի մասին՝ Բահաուլլայի ընտանիքը կռահեց, որ խոսքը գնում է Նրա մասին և Նրա մոտ սուրհանդակ ուղարկեց վերադառնալու խնդրանքով, որը Նա կատարեց Իր հեռանալուց ուղիղ երկու տարի անց (1856թ-ի մարտի 19-ին):

Բահաուլլայի բացակայությամբ բաբիների համայնքի իրավիճակը դեպի վատը փոխվեց: Հաջորդ յոթ տարին Նա զբաղվեց բաբիների դաստիարակության և ուսմունքի հիմունքների ուսուցման աշխատանքներով: Հորդորներով և անձնական օրինակով, բանավոր և գրավոր խոսքով, Նա բաբիների համայնքում փոփոխությունների հասավ և դրանով ապացուցեց, որ միակ մարդն է, ով ընդունակ է ապահովել շարժման կայունությունն ու մաքրությունը: Բաղդադը բաբիներին հիշեց որպես նպատակասլաց, կյանքի անկեղծ շարժառիթներով և պահված-քով մարդկանց: Բահաուլլան և Նրա կողմնակիցներն ապրում էին հասարակ և ժուժկալ կյանքով: Նրանք քիչ ունեցվածք ունեին, բայց նրանց կյանքը լի էր ուրախությամբ:

Քուրդ միստիկները և հոգևոր առաջնորդները, որոնք հյուրընկալել էին Բահաուլլային լեռներում այժմ Նրա մոտ Բաղդադ էին գալիս: Նրա հետ հանդիպում էին փնտրում նաև որոշ տեղական կրոնական գործիչներ: Շատերը դարձան Նրա հետևորդները: Միստիկները, բանաստեղծները, պետական պաշտոնյաները, արքայազները ձգտում էին ծանոթանալ Նրա հետ: Գալիս էին հիվանդներ և տառապյալներ, արդարության փնտրողները խռնվում էին դռան մոտ: Դրանք ոչ միայն մուսուլմաններ էին, այլև քրիստոնյաներ ու հրեաներ:

Բաղդադի տարիներին տաղերը թափվում էին Բահաուլլայի փետուրից: *«Անկասկածելիության գիրքը»* Նրա հիմնական աստվածաբանական գիրքն է, որը գրվել է երկու օրում և երկու գիշերում: Բաղդադում է Նա գրել նաև *«Նվիրական խոսքերը»*, հոգևոր ղեկավարության փոքր, բայց հետաքրքրաշարժ գիրքը, ինչպես նաև *«Յոթը հո-*

վիտ» առեղծվածային գիրքը, որը մտածված էր որպես սուֆի միստիկներին պատասխան:

Նախանձելով Բահաուլլայի աճող ազդեցությանը՝ Բաղդադի մուսուլման ղեկավարների խումբը, ղեկավարվելով Իրանի շահի կողմից, փորձում էր որակազրկել Նրան: Նրանք պահանջում էին հրաշք գործել, որը կընդունեին բոլորը: Բահաուլլան համաձայնվեց իրականացնել նրանց ընտրած ցանկացած հրաշք, բայց ուլեմները չկարողացան համաձայնության գալ և Բահաուլլայի մարտահրավերը մնաց առանց հետևանքների:

Բաղդադի Իրանի կոնսուլը, ով անհանգստացած էր Բահաուլլայի աճող փառքով, ջանքեր գործադրեց, որ Նրան աքսորի քաղաքից: Նա հասավ իր նպատակին: Բաղդադի նահանգապետը, ով խորապես հիացած էր Բահաուլլայով և արհամարհել էր Նրա աքսորի հինգ հրաման, վեցերորդ անգամ տատանվելով ենթարկվեց և Բահաուլլային ուղարկեց Օսմանյան կայսրության սուլթանի հրամանը դեպի Կոնստանդնուպոլիս Նրա տեղափոխման մասին:

Բահաուլլային աքսորելու լուրը Բաղդադում դժգոհության ալիք առաջացրեց: Նրա տան շուրջ խռնվում էին հարյուրավոր մարդիկ, որոնք լալիս էին և վշտանում Նրա մեկնման համար: Այնքան մարդ էր հավաքվել, որ Բահաուլլան ստիպված էր տեղափոխվել գետի մյուս ափին գտնվող այգի: Այնտեղ Նա տասներկու օր անցկացրեց՝ քաջալերելով և ոգեշնչելով իր հետևորդներին: Շատերը նախկինում էլ բնազդաբար զգում էին, որ հենց Նա է այն Անձը, Ում մասին մարգարեացել էր Բաբը, բայց Բահաուլլան ոչ ոքի և երբեք չէր հայտնել Իր առաքելության մասին: Միայն այստեղ Ռիզվանի այգում Նա պաշտոնապես հռչակվեց Իր հետևորդներից որոշների առջև՝ հայտնելով նրանց, որ Ինքը «Նա է, Ում Աստված կբացահայտի» և նրանց մեծ վիշտը փոխարինվեց ուրախության:

Հասարակական հռչակումը, որ Բահաուլլան բոլոր կրոնների Ավետյացն է, որ Նրա Հավատը նախատեսված է ամբողջ մարդկության համար, որ պատմության հորիզոնում նոր Օր է ծագում, տևեց տասներկու օր՝ 1863թ-ի ապրիլի 21-ից մինչև մայիսի 2-ը: Այդ ժամանակա-

շրջանը պատմության մեջ մտավ որպես Ռիզվանի տոն, որը ամեն տարի նշվում է Բահայի հավատի հետևորդների կողմից, որպես այդ կրոնի տոներից ամենասուրբն ու նշանակալիցը: Բահայիները նշում են այդ տոնի առաջին, իններորդ և տասներկուերորդ օրերը:

Աքսորը դեպի Թուրքիա

Դեպի Կոնստանդնուպոլիս Բահաուլլայի ճանապարհը հաղթարշավ էր: Քաղաքների և գյուղերի իշխանությունները, որոնց միջով անցնում էր Բահաուլլան, Նրան հարգանքով էր ընդունում:

Կոնստանդնուպոլսում Պարսկաստանի դեսպանը, կառավարությունից Բահաուլլայի դեմ բնակչությունը ոտքի հանելու ցուցումներ ստանալով, Նրան լկտի ինքնակոչ էր ներկայացնում, ով ոչ մի հարգանք չուներ օրենքների հանդեպ և ձգտում էր ոչնչացնել Օսմանյան կայսրությունը: Բահաուլլան Կոնստանդնուպոլսում մնաց չորս ամիս մինչև պարսիկ և թուրք կառավարությունները պայմանավորվեցին իրար միջև Նրա հերթական աքսորի մասին: Նա անմիջապես Ադրիանապոլիս տեղափոխվելու հրաման ստացավ (այժմ էդրինե, Թուրքիայի եվրոպական հատվածում):

Դեկտեմբեր էր. ցուրտ ձմեռ էր, անգամ ծերերը չէին հիշում նման սառնամանիք: Բահաուլլան և Նրա ուղեկիցները ստիպված էին ճանապարհ ընկնել առանց պարենի բավարար պաշարի: Անձրևի և քամու տակ նրանք շարունակում էին իրենց ընթացքը խոնավ վայրով: Ճանապարհը տևեց ավելի քան տասներկու օր, հաճախ ստիպված էին գնալ նույնիսկ գիշերով. ամբողջովին հյուծված նրանք հասան Ադրիանապոլիս:

Ադրիանապոլսում Բահաուլլան անցկացրեց հինգ տարի: Այս անգամ Նա պաշտոնապես Օսմանյան կասրության բանտարկյալի կարգավիճակում էր, չնայած Նրա դեմ ոչ մի մեղադրանք չէր ներկայացվել: Ադրիանապոլսում Բահայի հավատը լուրջ ներքին ճգնաժամ ապրեց, որը ստեղծվել էր Բահաուլլայի եղբոր նախանձի պատճառով,

ում անունը Միրզա Յահյա էր և ևս մեկ երիտասարդի Սեյիդ Մուհամմեդ անունով: Միրզա Յահյան նախանձում էր Բահաուլլային դեռ Բաղդադում և Կոնստանդնուպոլսում: Այժմ նախանձն այնքան էր հյուծել նրան, որ նա որոշեց սպանել Բահաուլլային՝ թունավորելով Նրա ուտելիքը: Թույնը Բահաուլլային մեծ տանջանքների ենթարկեց և այդ մահափորձի հետևանքները Նա զգում էր մինչև իր երկրային կյանքի ավարտը: Գտնվելով Ադրիանապոլսում՝ Բահաուլլան դիմեց թագավորներին և կրոնական առաջնորդներին Իր առաքելության պաշտոնական ներկայացմամբ: Այստեղ ինչպես նաև ավելի ուշ Աքքայում, Նա գրում էր եվրոպական տիրակալներին՝ կոչ անելով նրանց ընդունել նոր Հավատը: Նա նաև կոչ էր անում նրանց հարթել իրենց միջև գոյություն ունեցող վեճերը, կրճատել սպառազինությունը և սկսել ավելի լավ հոգ տանել իրենց ժողովուրդների մասին:

Անգլիայի թագուհի Վիկտորիային ուղղված նամակում Բահաուլլան գրել է.

«Աստված ամբողջ աշխարհի ապաքինման բարձրագույն միջոց և հզորագույն գործիք է ընտրել բոլոր ազգերի մեկ տիեզերական Գործում մեկ ընդհանուր Հավատում միավորվելը: Սրան հասնել չի կարելի այլ կերպ, եթե ոչ հմուտ, ամենազոր և ոգեշնչված Բժշկի միջոցով»[23]*:*

Պատմում են, որ Վիկտորիա թագուհին հետևյալ խոսքերով արձագանքեց ուղերձին. «Եթե դա Աստծուց է, ապա չի մահանա, եթե ոչ, դրանից վնաս չկա»:

Բահաուլլայի առաքելությունը, որը բացահայտվել էր Նրան Թեհրանի Սիյահ-Չալ բանտում, բայց որի մասին մոտ տաս տարի Նա ոչ ոքի չէր ասում հասարակության առջև հռչակվեց 1863թ-ին՝ Ռիզվանի այգում՝ Բաղդադի մոտակայքում, իսկ այժմ 1868թ-ին այն տեղեկացվում էր աշխարհի տիրակալներին՝ բոլորին միասին և յուրաքանչյուրին առանձին-առանձին: Բահաուլլայից ուղերձներ ստացան Նապոլեոն 3-րդը, ռուսական ցար Ալեքսանդր 2-րդը, Վիլհելմ 1 Պրուսացին, Ֆրանց-Իոսիֆ Ավստրիացին, Հռոմի պապ Պիյ 9-րդը, թուրքական սուլթանը և Իրանի շահը:

Հռչակման հենց այդ շրջանում Ադրանապոլսում սովորություն դարձավ Բահայի հավատի ներկայացուցիչների մոտ իրար ողջունել «Ալլահ-ու-Աբհա» (Աստված Ամենափառապանծ է) բառերով, և իրենք՝ Հավատի հետևորդները, սկսեցին իրենց բահայի անվանել: Իրանում և Իրաքում նրանք ենթարկվեցին դաժան հետապնդումների և շատերը ֆիզիկապես ոչնչացվեցին, չնայած դրան շարժումն ընդլայնվեց: Որոշ բահայիներ ուխտագնացություն կատարեցին Իրանից Իրաք և Ադրանապոլիս Բահաուլլային տեսնելու հույսով:

Ադրիանապոլսում թուրքական իշխանությունները Բահաուլլային հարգանքով էին վերաբերվում, ինչը զայրացնում էր այդ քաղաքի պարսիկ կոնսուլին: Վերջինս, ինչպես նաև Միրզա Յահյան և Սեյիդ Մուհամմեդը ձգտում էին հասնել Բահաուլլայի համար հետագա աքսորի: Նրանք Կոնստանդնուպոլիս էին ուղարկում կեղծ ամբաստանություններ, որպեսզի վարկաբեկեն Բահաուլլային՝ պնդելով, որ Նա մտադրված է ոչնչացնել Օսմանյան կայսրությունը:

Ադրիանապոլսի նահանգապետը, ով Բահաուլլային խորը հարգանքով էր վերաբերվում, մի քանի անգամ գրավոր հերքեց այդ մեղադրանքները: Սակայն վերջիվերջո կենտրոնական իշխանությունները աքսորի մասին հրաման արձակեցին:

Մի առավոտ Բահաուլլայի տունը շրջապատվեց զինվորներով: Քաղաքի բնակիչները՝ մահմեդականներն ու քրիստոնյաները փողոց դուրս եկան, որ լսեն հռչակվող հրամանը: Մի քանի երկրների կոնսուլներն իրենց ծառայություններն առաջարկեցին՝ ցանկանալով պաշտպանել աքսորյալներին, բայց Բահաուլլան չընդունեց նրանց միջնորդությունը:

Աքսորը դեպի Սուրբ Երկիր

Ձինվորներն ուղեկցեցին աքսորյալներին Ադրիանապոլսից Գալլիպոլի (Թուրքիա): Նրանցից ոչ ոք չգիտեր ո՛չ վերջնական վայրը, և ո՛չ էլ իր ապագա ճակատագիրը: Գալլիպոլում հայտարարվել էր, որ Բահաուլլան՝ հետևորդների մեծամասնության հետ, ինչպես նաև Միրզա Յահյայի հետևորդներից մի քանի մարդ բանտ կնստեցվեն Աքքա քաղաքում, իսկ Միրզա Յահյան և Բահաուլլայի կողմնակիցներից չորսը պետք է մեկնեին Կիպրոս: Գալլիպոլիից հեռանալիս Բահաուլլան նախազգուշացրեց ընկերներին, որ նրանց առջև փռված ճանապարհն ամենադըժվարը կլինի իրենց կյանքում: Նա նաև ասաց, որ նրանք, ովքեր իրենց մեջ բավականաչափ ուժ չեն զգում, որ հաղթահարեն այդ ճանապարհը, պետք է այժմ լքեն Նրան, քանի որ հետո ետ կանգնել արդեն ուշ կլինի: Բայց ոչ ոք Նրան չլքեց:

Աքքա քաղաքը գտնվում էր Օսմանյան կայսրության սահմանագծին և օգտագործվում էր որպես բանտարկության վայր: Տիրակալության բոլոր ծայրամասերից այնտեղ էին աքսորում դաժան հանցագործներին: Աքքայի և՛ ջուրը, և՛ օդը կեղտոտ էին, տարածքը վարակիչ էր համարվում և լցված էր վնասակար միջատներով: Աքքայի համար ասում էին, որ եթե թռչունը թռչի այդ քաղաքի վրայով, ապա մեռած կընկնի այնտեղի օդի աղտոտվածությունից:

Դեպի Աքքա ծովային ճանապարհը լի էր զրկանքներով: Հայֆայում աքսորյալների հիմնական խումբը լքեց Միրզա Յահյային և նրա ուղեկիցներին: 1868թ-ի օգոստոսի 31-ին Աքքա գալով՝ աքսորյալներին դիմավորեց թշնամաբար տրամադրված տեղացիների ամբոխը, ում ասացին, որ բահայիները չարագույն, սարսափելի հանցագործներ են: Ամբոխը նրանց վրա քարեր էր նետում, վիրավորանքներ էին լսվում, մեղադրյալների վրա թքում էին:

Մզկիթի աստիճաններից կարդացին ցմահ աքսորի հրամանը Բահաուլլայի և Նրա ուղեկիցների համար, տեղի բնակիչներին արգելեցին նրանց հետ շփման մեջ մտնել: Բանտարկության ռեժիմը խիստ էր: Բահայիներին արգելեցին շփվել իրար հետ, ինչպես նաև արտաքին աշխարհի հետ: Բահաուլլային տեղավորեցին կեղտոտ, քամիների և

անձրևի համար բաց բանտախցում, մյուսներին տեղավորեցին մի քանի հարևան բանտախցերում: Առաջին գիշերը նրանց ո՛չ ուտելիք տվեցին, ո՛չ խմելու բան: Երկուսից բացի մյուս բոլորը մալարիայով և դիզենտերիայով հիվանդացան, երեքը մահացան:

Իրանի և այլ երկրների բահայիները չգիտեին որտեղ է Բահաուլլան և արդյոք Նա կենդանի է: Երբ Նրա մասին լուրեր հասան նրանց, շատերն ուղևորվեցին Աքքա: Սկզբնական շրջանում նրանք չէին կարողանում քաղաք մտնել և ժամերով կանգնում էին արտաքին վիհից այն կողմ՝ հուսալով գոնե մեկ ակնթարթ տեսնել Նրան բանտի պատուհանից: Որոշներն իրենց հետ բույսեր էին բերում: Անապատով գնալիս իրենց զրկելով ջրից՝ նրանք ջրում էին այդ բույսերը. այդպես տնկվեցին Աքքայի քաղաքային սահմանագծից դուրս գտնվող այգիները:

Աքքայի բանտում մահացավ Բահաուլլայի երկրորդ որդին՝ Միրզա Միհդին: Նա ցած ընկավ բանտի տանիքի անպաշտպան երդիկից և մահացավ: Նրա վերջին խնդրանքն իր հորն ուղղված ցանկությունն էր, որ իր կյանքը որպես քավություն ընդունվի նրանց համար, ովքեր չկարողացան հասնել Նրա բանտախուց:

Մի քանի ամիս անց բանտի տարածքն անհրաժեշտ եղավ թուրքական կայազորի տեղավորման համար: Աքսորյալներին տեղափոխեցին քաղաքային մի տուն, որտեղ նրանք ապրում էին նեղվածքի մեջ:

Կամաց-կամաց Աքքայում սկսեց նույն բանը կատարվել, ինչը եղել էր ավելի վաղ Բաղդադում, Կոնստանդնուպոլսում և Էդրինեում: Բանտի ղեկավարը, քաղաքային իշխանությունները և հասարակ քաղաքացիները սկսեցին հասկանալ, որ Բահաուլլան ոչ մի բանում մեղավոր չէ, ինչպես նաև գիտակցել Նրա անձի առանձնահատկությունը: Բահաուլլայի ավագ որդին՝ Աբդուլ-Բահան, ով իր վրա էր վերցրել ընտանիքի մասին հոգ տանելու կենցաղային հարցերը, քաղաքացիների հարգանքն ու սերը գրավեց: Բանտի ղեկավարը Նրա մոտ էր ուղարկում իր որդուն՝ համարելով, որ դա օգտակար կլինի նրա կրթության համար: Նահանգապետը Բահաուլլային որևէ ծառայություն մատուցելու ցանկություն հայտնեց: Ի պատասխան դրա Բահաուլլան նրան խնդրեց վերանորոգել քաղաքային կոյուղին, որը վերանորոգվել էր դրանից երեսուն տարի

առաջ: Աքքայում բանտարկության իններորդ տարում սուլթանի՝ աքսորի մասին հրամանն ամբողջությամբ արհամարհվեց բանտային և քաղաքային իշխանությունների կողմից: Աբդուլ-Բահան հոր համար վարձեց փոքր, բայց լավ տուն քաղաքից դուրս և Բահաուլլան, ով ինը տարի խոտ և ծառեր չէր տեսել, տեղափոխվեց այնտեղ: Երկու տարի անց Աբդուլ-Բահան վարձակալեց բավականին ընդարձակ դղյակ Բահջիում, որտեղ անցան Բահաուլլայի երկրային կյանքի վերջին 13 տարիները:

Աբդուլ-Բահան վարում էր բոլոր ընթացիկ հարցերը, այդ պատճառով Բահաուլլան կարողանում էր ամբողջությամբ տրվել իր գրվածքներին: Նա հազվադեպ էր անձամբ հանդիպում ինչ-որ մեկի հետ, բայց Նրա ազդեցությունը զգացվում էր ամենուր և Պաղեստինի տիրակալները նախանձում էին Նրա իշխանությանն ու ազդեցությանը:

Պրոֆեսոր է. Գ. Բրաունը՝ Քեմբրիջի հռչակավոր արևելագետը, Բահջիում անցկացրել է հինգ օր և թողել է հետևյալ վկայությունը Բահաուլլայի հետ իր հանդիպման մասին:

«Անկյունում, որտեղ բազմոցը հենված էր պատին, նստած էր ամենաուշագրավ և պատկառելի արտաքինով մի մարդ... Նրա դեմքը, որին ես նայում էի, ես երբեք չեմ մոռանա, չնայած և երբեք չեմ կարողանա այն նկարագրել: Այդ խորաթափանց աչքերը կարծես կարդում էին ձեր հոգին, իշխանությունն ու հզորությունը այդ հաստ ունքերի մեջ էին, ճակատի և դեմքի վրայի խորը կնճիռները վկայում էին տարիքի մասին, դրանց հետ կարծես թե վիճում էր Նրա մազերի և մորուքի սևությունը, որը շքեղորեն իջնում էր համարյա մինչև գոտկատեղ: Կարիք չկար հարցնել, թե ում ներկայությամբ եմ ես գտնվում, ես ցածր խոնարհվեցի Նրան, Ով սիրո և անձնվիրության մարմնացումն էր, Ում նախանձում էին թագավորները և Ում փառքը զուր փափագում էին կայսրերը:

Մեղմ, ծանրաբարո մի ձայն խնդրեց, որպեսզի ես նստեմ և ապա շարունակեց. *«Փառք Աստծո, որ դու հասել ես այստեղ... Դու եկել ես բանտարկյալի և աքսորյալի տեսնելու... Մենք ցանկանում ենք աշխարհին միմիայն բարին, իսկ ազգերին՝ երջանկություն, սակայն նրանք համարում են, որ մենք վեճի հարուցիչ ենք ու խռովության հրահրիչ, որն արժանի է բանտարկության ու արտաքսման... Մենք ցանկանում ենք, որ*

բոլոր ազգերը մեկ հավատ ունենան և բոլոր մարդիկ լինեն եղբայրների պես, որ մարդկանց որդիների միջև սիրո և միասնության կապերն ամրապնդվեն, որ կրոնական վիճաբանութ-յունները դադարեն, իսկ ցեղերի տարաձայնությունները վերացվեն, ի՞նչ վատ բան կա այստեղ… Արդ, այսպես էլ կլինի, ապարդյուն վեճերը և ավերիչ պատերազմները կկորչեն, և «Մեծագույն Խաղաղություն» կհաստատվի… Արդյոք նույնը հարկավոր չէ ձեզ նաև Եվրոպայում: Արդյոք սա այն չէ, ինչը Քրիստոսն էր նախագուշակել… Սակայն մենք տեսնում ենք, որ ձեր թագավորներն ու կառավարիչներն ավելի առատորեն են շռայլում իրենց գանձերը մարդկային ցեղի ոչնչացման միջոցների վրա, քան նրա վրա, ինչը կնպաստի մարդկության երջանկությանը: Այդ վեճերը, արյունահեղությունն ու տարաձայնությունները պետք է դադարեն և բոլոր մարդիկ կլինեն որպես մեկ ցեղ և մեկ ընտանիք… Թող չհպարտանա նա, ով սիրում է իր երկիրը, այլ թող փառապանծ լինի նա, ով սիրում է ամբողջ մարդկային ցեղը…»[24]*:*

Իր կյանքի վերջին տարիներին Բահաուլլան չորս անգամ այցելեց Հայֆա և վրան խփեց Կարմել լեռան լանջին: Նա Աբդուլ-Բահային մատնացույց արեց քարքարոտ լանջի վրա մի տեղ, որտեղ պետք է տեղափոխվեին Բաբի մնացորդները: Այսօր այդ լանջին ծաղկում են այգիներ, կանաչում է խոտը և ստվերոտ նոճիները շրջապատում են սպիտակ մարմարից հրաշալի մի շենք, որի տակ ննջում են Բաբի և Նրա երիտասարդ ուղեկցի մնացորդները:

1892թ-ի մարտի 29-ին ավարտվեցին Բահաուլլայի երկրային կյանքի օրերը: Աքքայի զանգերը, որոնք դրանից 24 տարի առաջ հայտարարեցին աքսորյալի գալուստի մասին, այժմ հայտնեցին Նրա հեռանալու մասին և բազմաթիվ մարդիկ դառնագին լալով դուրս եկան Բահջիի դղյակի մոտ: Սգո շաբաթվա ընթացքում քաղաքի հայտնի մարդիկ և իշխանությունների ներկայացուցիչներ Բահաուլլային էին տալիս իրենց հարգանքի վերջին տուրքը: Սուլթանին հեռագիր ուղարկեցին հետևյալ խոսքերով. «Բահա Արևը մայր մտավ»:

Ինչպես հետագայում գրել է Բահայի հավատի Պահապան Շողի էֆֆենդին նոր համաշխարհային կրոնի առաջին դարի իր ամփոփման մեջ. «Բահաուլլայի համբարձմամբ ավարտվեց ժամանակաշրջանը, որը

շատ բաներով նմանօրինակը չի ունեցել կրոնի համաշխարհային պատմության մեջ: Ավարտվեց դարաշրջանը, որը ո՛չ իր վեհությամբ, ո՛չ իր արդյունավետությամբ, ո՛չ իր երկարատևությամբ չի գերազանցվել անցյալի ոչ մի կրոնի կողմից»[25]:

Աբդուլ-Բահա

Աբդուլ-Բահան՝ Բահաուլլայի ավագ որդին, ծնվել է 1844թ-ի մայիսի 23-ին, հենց այն գիշերը, երբ Բաբն իր առաքելությունը բացահայտեց Մուլլա Հուսեյնին: Աբդուլ-Բահան ութ տարեկան էր, երբ Բահաուլլային ձերբակալեցին Թեհրանի բանտում: Տունը, որտեղ ապրում էր նրա ընտանիքը, շրջապատված էր ամբոխով և նրանք ստիպված էին թաքնվել: Աբդուլ-Բահան ուղեկցում էր իր ծնողներին աքսորավայր և դեռ ինը տարի առաջ մինչ Ռիզվանի այգում հռչակումը Նրա համար պարզ էր Իր հոր առաքելությունը: Այսպիսով Աբդուլ-Բահան առաջին մարդն էր, ով հավատաց Բահաուլլային: Այդ ժամանակ Նա ընդամենը ինը տարեկան էր:

Մեծ էր Աբդուլ-Բահայի վիշտը, երբ Բահաուլլան լքեց Բաղդադը և ուղևորվեց Քուրդիստանի լեռները: Նրա բացակայության ընթացքում երկու տարի Աբդուլ-Բահան անցկացրեց Բաբի գրվածքների արտագրմամբ և դրանց տեքստերն անգիր սովորելով: Բայց մեծ էր նաև ուրախությունը, երբ վերադարձավ Նրա հայրը և այդ ժամանակից ի վեր Աբդուլ-Բահան դարձավ Նրա ամենամտերիմ ընկերը: Աբդուլ-Բահան պաշտոնական կրթություն չստացավ. այն ամենը ինչ Նա գիտեր, քաղել էր Բահաուլլայից: Աբդուլ-Բահան ակտիվ և կենսուրախ մարդ էր: Նա հորից ժառանգել էր բնության, գյուղական միջավայրի և ձիավարության հանդեպ սերը:

Իրաքից Կոնստանդնուպոլիս ճանապարհին Աբդուլ-Բահան հետևում էր աքսորյալների սննդակարգին և օթևանին: Գիշերները Նա պաշտպանում էր հոր սայլակը: Ադրիանապոլսում Նա աստիճանաբար իր ձեռքը վերցրեց Բահաուլլայի առօրյա գործերը: Նա հայտնի դարձավ որպես «Տանտեր»: Այդ տիտղոսը Նրան Բահաուլլան տվեց, չնայած հոր մահից հետո Նա իրեն սկսեց անվանել պարզապես Աբդուլ-Բահա, այսինքն «Բահայի» ծառա: Նա ընդունում էր հոր այցելուներին, որոնք

առաջնորդվում էին հետաքրքրասիրությամբ, սակայն անսովոր խորաթափանցությամբ ճանաչում էր նրանց, ովքեր իսկապես ճշմարտություն էին փնտրում: Նա շատերի կողմից սիրված և հարգված էր, անգամ նրանց կողմից, ով Նրան չարիք էր ցանկանում: Նա քաղաքավարի էր, մեղմ, ներողամիտ, առատաձեռն և անչափ բարի:

Աքքայում Նա ամուսնացավ Մունիրա խանումի՝ Բաբի հին հավատակիցներից մեկի աղջկա հետ: Ամուսնությունը շատ երջանիկ էր, բայց ծնված ինը երեխաներից հինգը մահացան:

Երբ թուլացան տեղաշարժման սահմանափակումները Աքքայի բանտարկյալների հանդեպ, Աբդուլ-Բահան դարձավ քաղաքի մարդաշատ փողոցների առաջնային կերպարներից մեկը: Նա օգնում էր բոլոր նրանց, ում կարողանում էր՝ առանց մաշկի գույնի, հավատի և հասարակական դիրքի տարբերությունների: Նա մտնում էր ամենաաղքատ տներ, մաքրում և սփոփում էր հիվանդներին: Սեփական պահանջմունքներ Նա քիչ ուներ: Համեստ կյանք էր վարում, էժանագին հագուստ էր կրում, որը սակայն միշտ անթերի տեսք ուներ: Նա արևածագից արևածագ էր աշխատում և գիշերվա մեծ մասն անցկացնում էր աղոթքի և մեդիտացիայի մեջ: Նա սիրում էր երեխաներին, սիրում էր նվերներ տալ և մարդկանց երջանիկ տեսնել: Նա ասում էր. «Իմ տունն ուրախության և ծիծաղի տուն է»:

Բահաուլլայի այս կյանքից հեռանալուց հետո, ընտանիքի համար կարդացվեց Նրա «Կտակի գիրքը»: Այնտեղ Աբդուլ-Բահան նշանակվում էր Բահայի հավատի Գլուխ և Բահաուլլայի ուսմունքի միակ իրավասու մեկնաբանը: Բահաուլլան իր հետևորդներին կոչ էր անում դիմել Աբդուլ-Բահային և լսել Նրան: Սակայն չնայած ուղիղ կարգադրությանը, Բահաուլլայի ընտանիքի որոշ անդամներ, որոնք ուղղորդվում էին նախանձով և խանդով, հրաժարվեցին վարվել համաձայն Նրա կամքի: Նրանք ամեն կերպ ջանում էին սասանել Աբդուլ-Բահայի հեղինակությունը: Արդյունքում 1901-1908թթ-ին Աբդուլ-Բահան նորից Աքքայի բանտարկյալն էր: 1904-1907թթ Օսմանյան կայսրության իշխանությունները հատուկ հանձնաժողովներ նշանակեցին Նրա դեմ ներկայացված մեղադրանքները քննելու համար: Երկու հանձնաժողով-ներին ներկայացվեցին կաշառված մարդկանց կեղծ վկայությունները և գործը հասավ

նրան, որ 1907թ-ին սուլթանին առաջարկեցին մահապատժի ենթարկել կամ աքսորել Նրան: Սակայն դրան հետևող երիտթուրքական հեղափոխությունն ազատեց նախկին Օսմանյան կայսրության բոլոր քաղբանտարկյալներին և աքսորյալներին:

Դժվարությունների և աղետների այդ տարիներին Աբդուլ-Բահան չէր դադարում աշխատել: Նա հոգ էր տանում Աքքայի սովյալների և հիվանդների մասին, հսկայական քանակությամբ նամակագրություն էր վարում տարբեր երկրների բահայիների հետ: Չնայած բարեկամների կողմից չդադարող հարձակումներին, Նա հասարակ քարե մատուռ կառուցեց Կարմել լեռան վրա, այն վայրում, որտեղ Բահաուլլան Նրան ցույց էր տվել: Այդ մատուռը դարձավ տանջահար եղած Բաբի վերջին ապաստարանը:

Ազատ արձակվելով բանտարկությունից Աբդուլ-Բահան սկսեց ճամփորդություններ պլանավորել դեպի Եվրոպա և Ամերիկա: Վատ առողջության պատճառով ճամփորդությունը ստիպված էին հետաձգել մինչև 1911թ-ի օգոստոսը. այդ տարի Աբդուլ-Բահան մեկնեց Արևմուտք: Այն ժամանակ Նա մոտ 70 տարեկան էր, որոնցից համարյա 60-ը անկացրել էր աքսորում, մի քանի տարի բանտում և մշտապես գտնվել էր նոր դժվարությունների և հալածանքների սպառնալիքի տակ:

1911թ-ի սեպտեմբերին Աբդուլ-Բահան Մեծ Բրիտանիա եկավ, որտեղ Լոնդոնի Սիթի Թեմփլ եկեղեցում կայացավ Նրա առաջին ելույթը: Հաջորդ երկու տարվա ընթացքում Նա ճանապարհորդում էր Եվրոպայով և Ամերիկայով մեկ, մեծագույն իմաստությամբ և կատարյալ նվիրվածությամբ Նա տարածում էր Բահայի ուսմունքը: Իր ժամանակի մեծ մասը Նա անցկացնում էր հասարակական ելույթներում և այցելուներ էր ընդունում: Նա համեստ էր ճամփորդում՝ խուսափելով շքեղությունից և ավելորդ ծախսերից: ԱՄՆ-ում Նա կտրեց-անցավ երկիրը մի ափից մյուսը և այդ երկրում ու Կանադայում կարդաց 140-ից ավելի դասախոսություններ:

1913թ-ին Աբդուլ-Բահան վերադարձավ Հայֆա: Երբ սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, թուրքական իշխանությունները Նրան նորից բանտ ուղարկեցին: Նրա կյանքի 4 տարին անցավ մեկու-

սացման և վտանգի մեջ: Այնուամենայնիվ Տիվերադյան լճի մերձակայքում Նա Պաղեստինի բնակչության համար հացահատիկի աճեցման գյուղատնտեսական արշավ կազմակերպեց: Նա շարունակում էր աղոթքով և հեզ գթությամբ լի իր կյանքը: Թուրքերը սպառնում էին խաչել Աբդուլ-Բահային Կարմել լեռան լանջին: Երբ այդ սպառնալիքի մասին լուրերը հասան Լոնդոն, գեներալ էլլենբիին հրամայեցին Աբդուլ-Բահային ամեն տեսակի օգնություն ցուցաբերել: Գեներալը Հայֆան վերցրեց նախատեսվածից մի քանի օր շուտ և հեռագրեց Լոնդոն. «Այսօր Պաղեստինը վերցվել է: Աշխարհին տեղեկացրեք, որ Աբդուլ-Բահան անվտանգության մեջ է»: Համաշխարհային պատերազմի ավարտից հետո բրիտանական կառավարությունը Աբդուլ-Բահային ասպետի կոչում տվեց որպես աշխարհը պաշտպանելու և Մերձավոր Արևելքում առաջընթացի համար Նրա մատուցած ծառայությունների ընդունում: Նա ընդունեց այդ պատիվը, բայց երբեք չօգտվեց ազնվականի տիտղոսից:

Աբդուլ-Բահան մահացավ 1921թ-ի նոյեմբերի 28-ին Հայֆայում: Մինչև իր կյանքի վերջին օրերը Նա շարունակում էր աշխատել: Մահմեդականները, հրեաները, քրիստոնյաները թաղմանը Նրան տվեցին հարգանքի իրենց վերջին տուրքը և բահայիների հետ միասին սգում էին այդ մեծ կորուստի համար:

Աբդուլ-Բահայի դերի յուրահատկությունը

Աբդուլ-Բահան կրոնի պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում: Ըստ էության պարզապես մարդ լինելով, Նա միաժամանակ բահայի ուսմունքի Կատարյալ Օրինակ էր և ուներ գերմարդկային գիտելիքներ: Բահաուլլայից հետո դառնալով Բահայի հավատի ղեկավարը՝ Նա նման էր անթերի հայելու, ով մարդկանց համար արտացոլում էր Աստվածային Հայտնության լույսը: Նա անդադար և հավատարիմ ղեկավարությամբ պահպանեց բահայիների միասնությունը և սկսեց բահայիների վարչակարգի շինարարությունը՝ համաձայն Բահաուլլայի սկզբունքներին: Բազմաթիվ նամակներում և քարոզներում Նա բացատրում էր այդ սկզբունքներն ավելի մանրամասն, քան դա ավելի վաղ Բահաուլլան էր արել և ցույց էր տալիս, թե ինչպես դրանք կիրառել: Նրա

առօրյա կյանքն ապացուցում է, որ ամենադժվարին պայմաններում մարդն ունակ է ապրել Աստծուն կատարյալ նվիրվածությամբ և ծառայել մարդկությանը:

Բահայի հավատի զարգացումը նրա երեք Գլխավոր Մարմինների կենդանության օրոք

Բաբի քարոզների ընթացքում (1844-1850թթ) Նրա ուսմունքը տարածվեց միայն Պարսկաստանում և Իրաքում, բայց 1853-1892թթ Բահաուլլայի օրոք Բահայի հավատի հետևորդներ կային արդեն 13 երկրներում: Բաբը և Բահաուլլան նոր կրոնի համատեղ հիմնադիրներ էին, սակայն Աբդուլ-Բահայի հատուկ դիրքի շնորհիվ որպես «Օրինակի» և «Հայտնության Կենտրոնակետի» Նրա գրվածքները նույնպես կազմում են Բահայի հավատի Սուրբ գրքերի մի մասը: Բահաուլլայի համբարձման և Աբդուլ-Բահայի մահվան միջև ընկած ժամանակաընթացքում Հավատը տարածվեց ևս 22 երկրներում, իսկ 1921թ-ին նրա հետևորդներից կային արդեն 37 երկրներում: Երբ Բահայի հավատը դեռ 80 տարեկան էր, այն արդեն կարող էր համաշխարհային կրոն համարվել, քանի որ նրա ազդեցության ոլորտ էին մտել Չինաստանը, Բիրման, Ավստրալիան, Ռուսաստանը, 8 եվրոպական և 3 աֆրիկյան երկրներ, Բրազիլիան, Կանադան և ԱՄՆ-ն:

Աբդուլ-Բահայի ուղերձը

«Գիտցի՛ր, որ Սերն Աստվածային Հայտնության գաղտնիքն է, Ամենաողորմածի արտահայտումը, հոգևոր զեղումների աղբյուրը: Սերը երկնքի բարի լույսն է, Սուրբ Հոգու հավերժ շունչը, որը թարմացնում է մարդկային հոգին: Սերը մարդկանց Աստվածային Հայտնության սկիզբն է, կենսատու կապն է, որը համաձայն աստվածային արարման հատուկ է բոլոր իրերի էությանը: Սերը միակ միջոցն է, որը ճշմարիտ ուրախություն է բերում ինչպես այս աշխարհում, այնպես էլ ապագա: Սերը լույս է, որն ուղղություն է ցույց տալիս մթության մեջ, կենդանի կապ է, որը միա-

վորում է Աստծուն մարդու հետ և հաստատում է բոլոր լուսավոր հոգիների առաջընթացը: Սերը մեծագույն օրենք է, որը ղեկավարում է այդ հզորագույն աստվածային փուլը, միակ ուժը, որն ի մի է կապում նյութական աշխարհի տարբեր տարրեր, բարձրագույն մագնիսական ազդեցություն է, որը ղեկավարում է ոլորտների շարժումը երկնային թագավորությունում: Սերն անփոփոխ և անսահման իշխանությամբ բացահայտում է գաղտնիքները, որոնք թաքնված են Տիեզերքում: Սերը կյանքի ոգին է մարդկության հրաշալի մարմնում, ճշմարիտ քաղաքակրթության հիմնադիրն այս մահկանացու աշխարհում և մեծ նպատակի ձգտող յուրաքանչյուր ռասայի և ազգի վրա անսպառ փառքի վատնողը:

Ինչ ազգի էլ ողորմածաբար նախատեսված լինեն Աստծո այդ շնորհները, նրա անունն անկասկածելիորեն կվեհացվի և կբարձրացվի Երկնային Երաշտահավերի, հրեշտակների և Աբհա Թագավորության բնակիչների կողմից: Եվ ինչ ազգ էլ իր սիրտը հեռացնի Աստվածային Սիրուց՝ Ամենափառապանծի Հայտնությունից, նա սգալով կթափառի, հուսահատության գիրկը կընկնի և վերջիվերջո կոչնչանա: Այդ ազգը ապաստարան չի ունենա, նա երկրային վայրի արարածների նման կդառնա անկման և անարգանքի զոհը:

Ով դուք Աստծո սիրեցյալներ: Ձգտեք դառնալ Աստվածային ղեկավարության մարմնացումներ, որոնք փայլատակում են երկրային ցեղերի միջև սիրո և համաձայնության լույսով:

Փառք նրան, ով հայտնաբերել է այս բարեհաճ լույսը»[26]*:*

Ինչին են հավատում բահայիները

Մարդկության միասնությունը

«Կասկած չկա, որ աշխարհի մարդիկ, ինչ ռասայի կամ կրոնի էլ որ նրանք լինեն իրենց ոգեշնչումը ստանում են միակ երկնային ակունքից և բոլոր նրանք միակ Աստծո հպատակներն են»[27]*:*

Բահաուլլա

«Բոլոր մարդիկ մի ծառի տերևներ ու պտուղներ են ... նրանց ծագումը միասնական է: Նույն անձրևն է թափվում նրանց վրա, նույն արևն է նրանց աճեցնում, նույն քամին է նրանց թարմացնում... Ամբողջ մարդկությունը շրջապատված է Աստծո Ողորմածությամբ և Բարեհաճությամբ: Սուրբ Գրվածքներն ասում են մեզ. բոլոր մարդիկ հավասար են Աստծո առջև, Նա անաչառ է»[28]*:*

Աբդուլ-Բահա

Բահաուլլայի ուսմունքում մարդկության միասնության սկզբունքը կենտրոնական տեղ է գրավում: Իր սոցիալական զարգացման ընթացքում մարդկությունն անցել է տարբեր փուլեր, ինչպես մարդկային մարմինն է անցնում ֆիզիկական էվոլյուցիայի տարբեր փուլեր: Հնագույն ժամանակներում մարդիկ ապրել են մեկուսացված ընտանեկան խմբերով, այնուհետև այդ խմբերը վերածվել են ցեղային միավորում-ների, որոնցից ծագել են քաղաք-պետությունները և վերջապես ազգերը: Բահաուլլան սովորեցնում է, որ համաշխարհային միասնությունը մարդկության դեպի հասունացում ճանապարհի սոցիալական զարգաց-ման վերջին փուլն է:

Բահաուլլան բացատրում է, որ եկել է երկիր մոլորակ, որպեսզի հնարավոր դարձնի մարդկության միավորումը: «Հիրավի դրա համար Մենք եկանք, որպեսզի միավորենք և ի մի կապենք բոլոր նրանց, ովքեր ապրում են Երկրի վրա»[29],- գրում է Նա:

Բահաուլլայի ուսմունքը նախատեսված է մոլորակի բոլոր բնակիչների համար: Համաշխարհային միասնությունը վերաբերվում է յուրա-

քանչյուրին, նրանից ոչ մի մարդ չպետք է դուրս մնա: Միաժամանակ միասնությունը, դեպի ուր մենք գնում ենք, ծանծրալի միօրինակություն չէ, ընդհակառակը դա միասնություն է բազմազանության մեջ, որի շրջանակներում, ինչպես սովորեցնում է Բահաուլլան, մարդկանց ցանկացած խումբ կարող է գտնել իր ձգտումների և իդեալների լավագույն արտահայտումը: Միաժամանակ յուրաքանչյուր խումբ, յուրաքանչյուր ազգ կարող է կիսել մյուսների ժառանգությունն ու ձեռքբերումները: Աբդուլ-Բահան գրում է. «Մարդկության փառքը յուրաքանչյուրի ժառանգությունն է»[30]:

Աշխարհի միասնությունը կկայանա, երբ յուրաքանչյուր մարդ առանձին կընդունի մարդկության միասնությունը որպես այսօրվա կյանքի կենտրոնական հոգևոր սկզբունք: Միասնությունը չի ներմուծվելու վերևից եկած ինչ որ հզոր խմբի միջոցով, այն աստիճանաբար կզարգանա մարդկային ուղեղում մինչև ամենուր մարդիկ չեն գիտակցի, որ «աշխարհը մեկ երկիր է, իսկ մարդիկ նրա քաղաքացիները» [31] (Բահաուլլա): Գիտակցության մեջ այդ փոփոխությունները կբերեն հասարակության մեջ այնպիսի բնական փոփոխությունների, ինչպիսիք չեն եղել պատմության մեջ: Այսօր պատկերացնել անգամ հնարավոր չէ, թե որքան հարուստ և բազմազան կլինի ապագա համաշխարհային քաղաքակրթությունը:

Բահաուլլան մարդկությանը կոնկրետ ղեկավարություն է տվել մասնատվածությունից միավորման անցնելու համար:

«Ո՛վ Երկրի պատերազմող ազգեր և ցեղեր, ձեր դեմքերն ուղղեք դեպի միասնություն և թող նրա լույսի փայլատակումը լուսավորի ձեզ»[32]: «Եղեք որպես մի ձեռքի մատներ, մի մարմնի անդամներ»[33]: «Նա, Ով ձեր Աստվածն է, Նա՝ Ամենաողորմածը, իր սրտում ցանկություն է փայփայում տեսնել ամբողջ մարդկային ռասսան որպես մեկ հոգի և մեկ մարմին»[34]:

Կրոնների միասնությունը

«Մեր լուսավոր դարում Աստծո պարգևը մարդկության և կրոնների հիմնարար միասնության մասին գիտելիքն է »[35]*:*

Աբդուլ-Բահա

Բահայի հավատի հետևորդները հավատում են, որ աշխարհի բոլոր մեծ կրոններն իրենց ծագմամբ աստվածային են: Նրանք բոլորն ուղարկված են Աստծո կողմից Իր Հայտնություններում, որոնք տրված են տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում ժողովուրդների կարիքներին և հնարավորություններին համապատասխան և որքան երկար մարդիկ կմնան Երկրի վրա, այնքան երկար էլ կտևի այդ ղեկավարությունը:

Աստված ավելի բարձր է և վեր է մարդկային ըմբռնումից: Նա ղեկավարում է մարդկությունը Դեսպանորդների միջոցով՝ կատարյալ և անթերի հոգիների, որոնց կարելի է դիտարկել որպես Աստծո Հայտնիչների: Նրանք աստվածներ չեն իրենք իրենցով, բայց նման են կատարյալ հայելիների, որոնք արտացոլում են Նրա լույսը մարդկանց: Նրանք նման են Արևի ճառագայթների, որոնք փոխանցում են արևի լույսը Երկրին, նրանք միջնորդներ են Աստծո և մարդկության միջև: Իրենց կյանքով և ուսմունքներով, Նրանք արտացոլում են Աստծո կատարելությունը: Նման Հայտնիչների միջոցով Աստված խթանում է մարդուն ճանաչել և սիրել Իրեն: Աստծուն ճանաչելը մարդու համար հնարավոր է միայն Հայտնիչի միջոցով, այդ պատճառով Նրա կատարելությունների ճանաչումը Աստծո մասին առավել ամբողջական գիտելիքն է, որին կարող է հասնել սահմանափակ մարդկային բանականությունը:

«Որպես ողորմածության նշան … որպես Իր Կարեկցանքի ապացույց, Նա մարդկանց հայտնել է Իր Աստվածային ղեկավարության Ցերեկային Աստղերին, Նրա աստվածային միասնության Խորհրդանիշները և սահմանել է, որ այդ Լուսավոր էակների ճանաչումը հավասարազոր է Նրան ճանաչելուն»[36]*:*

Բահաուլլա

Երկրի վրա Աստծո Դեսպանորդի հայտնվելն այնքան հազվագյուտ երևույթ է, որ մեզ հայտնի է ընդամենը մի քանի անուն՝ Կրիշնա, Աբրահամ, Զրադաշտ, Մովսես, Բուդդա, Հիսուս, Մուհամադ, Բաբ, Բահաուլլա: Նրանցից յուրաքանչյուրը կրոն է հիմնադրել և ոգեշնչել է ինքնուրույն քաղաքակրթության զարգացումը: Նրանցից յուրաքանչյուրն իր ժամանակին ծաղրվել է, աքսորվել, նվաստացվել, վիճարկվել մարդկանց կողմից, որոնց մեջ հայտնվել է: Ժամանակակիցներից միայն քչերն էին կռահում Նրանց ճշմարիտ էությունը: Երբ վերջանում էր յուրաքանչյուր Դեսպանորդի երկրային կյանքը, Նա մնում էր միլիոնավոր մարդկանց սիրո և խոնարհման առարկան: Միայնակ, առանց երկրային ուժերի աջակցության Դեսպանորդները իշխանություն էին հաստատում մարդկանց սրտերում: Նրանք մարդկության ճշմարիտ ուսուցիչներ են և Նրանց նպատակն էր մարդկանց իրար միավորել, նպաստել մարդկային քաղաքակրթության առաջընթացին:

Աստծո Հայտնիչների երկակի էությունը դարերով չի դադարում շփոթեցնել մարդկանց մտքերը: Բահաուլլան հստակորեն մեկնաբանել է այդ երկակիությունը: Աստծո Հայտնիչներից յուրաքանչյուրն ունի աստվածային բնույթ: Դեսպանորդն ունի Նրա բոլոր հատկանիշները, այդ պատճառով Նրանք բոլորը կարող են դիտարկվել որպես մեկ հոգի և անձ:

«Եթե Նրանց նայենք ակնդետորեն, կարելի է տեսնել, որ բոլոր Նրանք ապրում են նույն վրանի տակ, նստած են նույն գահին, ասում են նույն ճառը և հռչակում են նույն Հավատը: Այդպիսին է Գոյության այդ էակների միասնությունը»[37]*:*

Միաժամանակ Աստծո յուրաքանչյուր Հայտնիչ օժտված է վառ անհատականությամբ, այս աշխարհում արտաքին տեսքով մարդկային էակի տեսք ընդունած, անձնական հատկանիշներով, առանձնահատկություններով տարբերվող բոլոր նրանցից, ով ապրել է Երկրի վրա Նրանից առաջ: Բայց ամեն անգամ, երբ նոր Աստծո Հայտնիչ է գալիս Երկիր, դա նշանակում է, որ Նրա հետ միասին կարծես թե վերադառնում է բոլոր նախկին Հայտնիչների ոգին: Նոր Հայտնիչի օրոք շարունակվում է կառուցվել ուսմունքը, որը սկսել են նախորդները, նոր լուր է բերվում և ապագա գալուստի հիմքն է դրվում:

Երբ Դեսպանորդը գտնվում է այլ մարդկանց միջև մարդկային կերպարով, մարդիկ կարող են ընդունել կամ չընդունել Նրան որպես բոլոր դարաշրջանների Աստծո Հայտնիչի: Բահայիներն ընդունում են բոլոր համաշխարհային կրոնների հիմնադիրներին և նրանց Գրվածքները սուրբ են համարում:

Բահայիները նաև հավատում են, որ Բահաուլլան ժամանակային առումով Երկրի վրա Աստծո վերջին Մարգարեն է: Բահաուլլան սովորեցնում է, որ յուրաքանչյուր կրոն բաղկացած է երկու մասից՝ հոգևոր և սոցիալական ուսմունքից: Բարձրագույն հոգևոր մակարդակի վրա բոլոր համաշխարհային կրոնների միջև գոյություն ունի լրիվ ներդաշնակություն: Տարբերությունները նկատվում են սոցիալական մակարդակում, դրանք վերաբերում են կրոնական ծեսերին, օրենքներին և կարգադրություններին: Բահաուլլան բացատրում է, որ կրոնի սոցիալական ոլորտները հավերժ և մշտական չեն և փոխվում են յուրաքանչյուր դարաշրջանում կախված հանգամանքների փոփոխությունից:

Կրոնների միջև տարբերությունները ծագում են նաև բնօրինակներին արհեստական ավելացումների հետևանքով: Ուսմունքների մաքրությունը աղավաղվում է հետևորդների կողմից: Այդ պատճառով հոգևոր ուղերձի թարմացման համար Աստված ուղարկում է հերթական Ավետաբերին: Յուրաքանչյուր կրոնի արտաքին, նյութական ոլորտներն անցնում են ծննդյան, աճի և անկման փուլեր: Երբ վրա է հասնում անկման փուլը, մարդկանց սրտեր նոր սերմ է նետվում, նոր Ավետաբեր է ուղարկվում և սկսվում է նոր աճ:

Բահաուլլայի առաքելությունը աշխարհի կրոնները միավորելն է: Նա սովորեցնում է, որ հավատը խաղաղության և մարդկության ճշմարիտ առաջընթացի առաջին գործոնն է: Համընդհանուր խաղաղությունը նաև նշանակում է կրոնների համաշխարհային թարմացում:

Նախապաշարմունքների հաղթահարումը

Նախապաշարմունքները՝ կրոնական, ռասայական, դասային, ազգային և այլ տեսակի, բոլոր ժամանակներում բերել են պատերազմների. բոլոր առճակատումները, ատելությունը, սպառնալիքները առաջացել են այս կամ այն տեսակի նախապաշարմունքներից: Նրանց դեմ միակ գործող միջոցը մարդկության գիտակցվածությունն ու միասնությունն է: Մարդիկ կկարողանան հաղթահարել այդ նախապաշարմունքները, երբ ձեռք բերեն իրենց ցեղի բոլոր ներկայացուցիչների հետ հոգևոր միասնության ըմբռնում: Բահաուլլան ասում է, որ տարբեր ռասաների և ազգերի գոյությունը պետք է դիտարկել նրանց միասնության տեսանկյունից:

«Հիրավի Աստծո Կամքի երկնակամարից իջած բառը – միասնության և ներդաշնակության աղբյուր է Տիեզերքի համար: Ձեր աչքերը փակեք ռասայական և ազգային տարբերությունների վրա և բոլորին ողջունեք միասնության լույսով: Մենք աշխարհին բարիք ու երջանկություն ենք ցանկանում, ցանկանում ենք, որ բոլոր ազգերը դառնան հավատով մեկ ժողովուրդ, իսկ բոլոր մարդիկ եղբայրներ, որ ուժեղանան մարդկության կապվածության և միասնության կապերը, որպեսզի դադարեն կրոնական պատերազմները և մի կողմ դրվեն ռասայական և ազգային խտրականության դրսևորումները»[38]*:*

Աբդուլ-Բահան գրել է.

«Աստծո աչքերում մաշկի գույնի միջև տարբերություններ չկան, բոլորը միասնական են գույնով և Նրան ծառայելու գեղեցկությամբ: Մաշկի գույնը նշանակություն չունի, կարևոր է միայն մարդու սիրտը: Կարևոր չէ, թե ինչպիսին է արտաքինը, եթե սիրտը ներքուստ մաքուր է: Աստված մարդկանց չի տարբերակում մաշկի գույնով և կազմվածքով: Նա նայում է սրտերին: Նա, ում առաքինությունները և վարվելակարգն արժանապատիվ են, նախընտրելի է Աստծո ներկայությամբ, նա, ով նվիրված է Նրա Թագավորությանը, սիրված է: Գոյության և Արարման Թագավորությունում մաշկի գույնի հարցն ամենափոքր նշանակությունն ունի[39]*:*

Նայիր այգու ծաղիկներին, չնայած նրանք տարբեր են տեսքով, գույնով, ձևով, միևնույն է ջրվում են նույն աղբյուրի ջրով, թարմացել են մի քամու շնչով, ամրապնդվել են նույն արևի շողերով և այդ տարբերությունները ուժեղացնում են նրանց գրավչությունը և ավելացնում են նրանց գեղեցկությունը»[40]*:*

Կրոնի և գիտության ներդաշնակությունը

Բահաուլլան սովորեցնում է, որ կրոնի և գիտության միջև գոյություն ունի ներդաշնակություն: Ճշմարիտ կրոնն ու գիտությունը երբեք միմյանց չեն հակասում: Դրանք միմյանց փոխադարձաբար լրացնող ճշմարտության ոլորտներ են: Դրանք երկուսն էլ կայուն են իրենց զարգացման մեջ: Կրոնը մարդկանց Աստծո կողմից աստիճանաբար է հայտնվում: Աստիճանաբար հենվելով սեփական հեռատեսությանը՝ մարդը բացահայտում է գիտության գաղտնիքները: Երկու ուժերն էլ անհրաժեշտ են նրան: Կրոնը հոգևոր աճի համար անհրաժեշտ օգնական է, իսկ գիտությունը նյութական առաջընթացի միջոց է: Բահաուլլան դիտարկում է կրոնը և գիտությունը որպես աշխարհի երկու հզորագույն գործոններ:

«Կրոնը և գիտությունը երկու թևեր են, որոնց վրա վեր է բարձրանում մարդկային բանականությունը և զարգանում է մարդկային հոգին: Չի կարելի թռչել մի թևի վրա: Եթե մարդը փորձի թռչել՝ հենվելով միայն կրոնի թևի վրա, նա արագ կընկնի սնահավատությունների անդունդը, իսկ եթե նա թռչի միայն գիտության թևի վրա, ապա նույնպես առաջ չի գնա, բայց կընկնի նյութապաշտության անհույս ճահիճը»[41]*:*

Աբդուլ-Բահա

Պատմությանը հայտնի է, որ ժամանակակիցների գրոհներին ու մերժմանն են արժանացել ինչպես կրոնների հիմնադիրները, այնպես էլ գիտության ստեղծողները: Գիտության և կրոնի հետևորդների միջև հակամարտությունները հնարավոր են դարձել սովորություն դարձած տգիտության և նախապաշարմունքների պատճառով: Ընդ որում ճշմարիտ քաղաքակրթությունը հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ

մարդիկ գիտակցեն ինչպես կրոնի, այնպես էլ գիտության անհրաժեշտությունը:

«Կրոնը և գիտությունը գնում են ձեռք ձեռքի տված և ցանկացած կրոն, որը հակասում է գիտությանը, ճշմարիտ չէ»[42]*:*

Հետաքրքիր է նշել, որ գիտության վերջին նվաճումները պաշտպանում են տիեզերքի միասնության և գոյություն ունեցող բոլոր իրերի փոխկապակցվածության գաղափարը:

Ճշմարտության ինքնուրույն որոնումը

Բահաուլլան չի ցանկանում, որ որևէ մեկը կուրորեն ընդունի Իր ուսմունքը: Նա պահանջում է, որ յուրաքանչյուր ոք ինքնուրույն ուսումնասիրի այն և դրա մեջ ներթափանցի, անկախ դատի և որոշումներ կայացնի:

Այսպիսի ինքնուրույն որոնումը գործնականում պատմության մեջ առաջին անգամ է հնարավոր դառնում: Այլևս անհրաժեշտություն չկա, որ մարդկանց ինչ որ խումբ մեկնաբանի մյուսներին կրոնը, ինչպես որ նախկինում էին մշտապես դա անում: Մարդկությունն ինքնուրույն կհասկանա Բահաուլլայի ուսմունքի ճշմարիտ կամ կեղծ լինելը, և որպեսզի որքան հնարավոր է ավելի շատ մարդիկ կարողանան դա անել, նրանց հարկավոր է ընդամենը կարդալ սովորել: Ճշմարտության ինքնուրույն որոնումը մարդուց ավելին է պահանջում, քան ինչ-որ մեկի կողմից նրան ներկայացված Հավատի կույր ընդունումը: Բահաուլլան պարզաբանում է, որ մարդը չպետք է հետևի ժառանգաբար փոխանցված հավատքներին և նախապաշարմունքներին: Պետք է վճռականորեն հրաժարվել սեփական անսխալականության և այլ մարդկանց սխալների մասին մտքերից:

«… երբ դուք հանդիպեք մարդկանց, որոնց կարծիքը տարբերվում է ձերինից, մի շրջվեք նրանցից: Բոլորն են ճշմարտություն փնտրում, դեպի այն տարբեր ճանապարհներ են տանում… Թույլ մի տվեք կարծիքների միջև տարբերություններին, մտքերի միջև տարաձայնություններին հե-

ռացնել ձեզ ձեր ընկերներից կամ վեճեր առաջացնել… Դրա փոխարեն ջանասիրաբար ճշմարտությունը փնտրեք և բոլոր մարդկանց ձեր ընկերները դարձրեք»[43]*:*

Աբդուլ-Բահա

Բոլոր մարդկանց կողմից ճշմարտության իսկական փնտրտուքը կբերի նրանց միավորմանը: *«Բոլոր կրոններում ճշմարտությունը մեկն է և դրա միջոցով կարելի է հասնել մարդկության միասնությանը… Երբ մարդիկ սկսեն ճշմարտություն փնտրել, նրանք կտեսնեն, որ միավորվել են»*[44]*:*

Աստծո էությունը

Բահաուլլան սովորեցնում է, որ մարդու սահմանափակ բանականությունը երբեք չի ընկալի Աստծուն, սահման ունեցողը չի կարող հասկանալ անսահմանը: Դա նույնն է, ինչ սեղանից սպասել, որ նա ըմբռնի իրեն պատրաստող ատաղձագործին: Աբդուլ-Բահան գրել է.

«… մարդը չի կարող հասկանալ Աստծվածային էակի, բայց Աստծո կողմից տրված մտորելու, ուսումնասիրելու իր ունակության, ինտուիցիայի և բացահայտելու ուժի միջոցով կարող է հավատալ Աստծուն, բացել Նրա բարեհաճության շնորհները»[45]*:*

Չնայած մարդիկ չեն կարողանում ճանաչել աստվածային բնույթի էակներին, նրանք կարող են հավատալ Աստվածային Իրականության գոյությանը.

«Գիտցի՛ր, որ միակ, ճշմարիտ Աստված Նա է, Ով առանձնացված է բոլոր արարված էակներից և անչափելիորեն բարձրացված է նրանցից: Ամբողջ Տիեզերքը Նրա փառքի արտացոլումն է, իսկ Նա կախված չէ իր արարումներից և գերազանցում է նրանց: Դրանում է Աստվածային միասնության ճշմարիտ իմաստը: Նա, Ով Հավերժ Ճշմարտությունն է, Միասնական Ուժն է, որը տարածում է անվիճարկելի ղեկավարություն գոյության աշխարհի վրա, որի կերպարն արտացոլված է

արարման հայելիում: Ամբողջ գոյություն ունեցողը կախված է Նրանից և Նրանից է բխում ամբողջ աշխարհի գոյի աղբյուրը»[46]*:*

Բահաուլլա

Աստված Տիեզերքի ձևարարն է, բայց Նա միաժամանակ և սիրող հայր է յուրաքանչյուր առանձին անհատի համար, յուրաքանչյուրի, ով երբևիցե ապրել է և յուրաքանչյուրի, ով ապագայում կապրի: Այդ երկու դրսևորումների համադրումը դուրս է մարդկային բանականության սահմաններից, բայց դրանով են նմանվում բոլոր կրոնների հիմնադիրները: Բոլոր համաշխարհային կրոններում բարձրացվում է Աստծո վեհությունը և միաժամանակ պնդվում է, որ Աստված լի է մարդկանց հանդեպ սիրով, որը Նա սահմանել է որպես յուրաքանչյուր մարդու համար գոյատևման նպատակ: Այդ կրոնների հիմնադիրները, Հայտնության Մարմնավորումները մարդու և Աստծո միջև կապն են: Բահաուլլան նրանց մասին այսպես է ասում.

«…սրբության լուսավոր ադամանդները, որոնք հայտնվում են Հոգու Թագավորությունից վեհանձն տեսքով մարդու տաճարներն են, որոնք գալիս են բոլոր մարդկանց մոտ, որ շնորհեն աշխարհը անփոփոխ Գոյության գաղտնիքներով և պատմեն Նրա անմահ էության նուրբ գաղտնիքների մասին»[47]*:*

Դիմելով այդ Հայտնիչներին, մարդն ընդունակ է ավելին իմանալ Աստծո մասին և մոտենալ Նրան: Բահաուլլան գրել է.

«Նրա արարումն այնքան կատարյալ է և համընդգրկող, որ ոչ մի բանականություն, ոչ մի սիրտ, որքան էլ մաքուր և խորաթափանց նրանք լինեն, չեն կարողանա հասկանալ Նրա անգամ ամենաանշան արարածներից մեկի բնույթը և ավելի փոքր աստիճանով չափել Նրա Գաղտնիքը, Ով Ճշմարտության Յերեկային Աստղն է, Ով անտեսանելի և անճանչելի էություն է: Ամենաաստվածավախ միստիկի մտքերը, մարդկանցից ամենակատարյալի ձեռքբերումները, բարձրագույն գովասանքը, որը կարող է փոխանցել մարդկային լեզուն կամ փետուրը, այդ ամենը սահմանափակ մարդկային բանականության արտադրանք է և այդ ամենը գծված է նրա սահմաններով… Անհիշելի ժամանակներից Նա պարուրված էր Իր վեհանձն էության սրբությամբ և հավերժ ընկղմված

կլինի Իր անճանաչելիության անթափանց գաղտնիքի մեջ: Նրա անհասանելի իրականությունն ըմբռնելու ցանկացած փորձ ավարտվում է անխուսափելի մոլորությամբ և Նրա վեհանձն Բնությանը մոտենալու, Նրա էությունը պատկերացնելու ցանկացած ջանք տանում է անհուսալիության և անկման»[48]*:*

Մարդու բնույթը

Մարդկությունը կյանքի ավելի բարձր ձև է, քան հանքաքարերը, բույսերն ու կենդանիները: Աստված մարդուն բանականություն և միտք է տվել: Նա նրան նաև հոգի է տվել և Աստծուն ճանաչելու և սիրելու ունակություն:

«Ո՜վ, մարդու որդի: Ես սիրեցի քո ստեղծումը, այդ պատճառով Ես ստեղծեցի քեզ: Ուստի, սիրիր Ինձ, որպեսզի Ես հիշատակեմ քո անունը և կյանքի ոգով լցնեմ քո հոգին»[49]*:*

Բահաուլլա

«Այն ամենից, ինչ Նա է ստեղծել, Նա Իր հատուկ ողորմածությամբ առանձնացրեց մարդու մաքուր, թանկարժեք քարի նման սիրտը և այն օժտեց Նրան ճանաչելու և Նրա փառքի վեհությունն արտացոլելու յուրահատուկ ունակությամբ»[50]*:*

Բահաուլլա

Դիմելով Աստծո Հայտնիչներին՝ մարդն ունակ է հասնել այն հատկություններին և ունակություններին, որոնք բխում են Նրանից՝ սիրուց, ճշմարտությունից, կարեկցանքից և արդարությունից:

Յուրաքանչյուրն իրավունք ունի իր համար որոշել արդյո՞ք դիմել Աստծո ուսմունքին: Նրա աչքերում բոլորը հավասար են, բայց յուրաքանչյուր հոգի անհատական արարած է, որն օժտված է յուրահատուկ ունակություններով ու հատկություններով: Այն ամենն, ինչին մարդը կարող է հասնել, նա հասնում է սեփական ջանքերով:

Յուրաքանչյուր մարդուն հատուկ է բարձր հոգևոր բնույթը, որը պետք է զարգացնել, որպեսզի ճանաչենք Աստծուն և սիրենք Նրան: Բայց յուրաքանչյուր մարդ օժտված է և այլ բնույթով՝ ֆիզիկական, կենդանական: Բահաուլլան սովորեցնում է, որ մարդու մարմինը պետք է հոգու հնազանդ ծառան լինի: Մարդու մեծ երջանկությունը հոգևոր, ոչ թե ֆիզիկական բավարարվածության մեջ է:

Մարդու հոգին, կյանք և մահ

Հոգին, լինելով ոչ թե ֆիզիկական, այլ հոգևոր էություն, չի քայքայվում, երբ մեռնում է մարդկային մարմինը: Մարդու երկրային կյանքի ընթացքում նրա հոգին կապված է մարմնի հետ այնպես, ինչպես լույսն իրեն արտացոլող հայելու հետ: Հայելին քայքայվում է, բայց լույսը շարունակում է շողալ:

Հոգին ծագում է բեղմնավորման պահին և յուրահատուկ արարում է: Երկրի վրա ֆիզիկական գոյությունը փորձ է, որը համարյա յուրաքանչյուր հոգուն է անհրաժեշտ: Այդ փուլում մարդը հնարավորություն ունի զարգացնել իր հոգևոր ունակությունները՝ ազնվությունը, կարեկցանքը, սերը, առատաձեռնությունը: Այդ հատկանիշներն անհրաժեշտ են այն բանից հետո, երբ մեր ֆիզիկական գոյությունն ավարտվում է, այդ պատճառով նրանք այստեղ Երկրի վրա են զարգացնում դրանք ինչպես այն, թե ինչպես են մոր արգանդում զարգանում աչքերը, ականջները, քիթը, ձեռքերը և ոտքերը: Արգանդում երեխային մարմնի այդ օրգանները պետք չեն, բայց հետագայում մարդն առանց դրանց բավականին խեղված կլիներ:

Մահից հետո հոգու գոյությունն այնքան է առանձնանում այն կյանքից, որը մենք գիտենք, որքան մոր արգանդում կյանքը տարբերվում է ծնունդից հետո կյանքից: Մարմնից ազատված հոգին նման է թռչնի, որն ազատված է թակարդից և շարունակում է իր զարգացումը և դեպի Աստված շարժը: Հաջորդ կյանքում մեր զարգացումը կախված կլինի ջանքերից, որոնք մենք այստեղ ենք գործադրել:

«Դրախտն ու դժոխքը» վայրեր չեն, այլ հոգեվիճակ: «Դրախտը» Աստծուն մոտիկությունն է, «դժոխքը» Նրանից հեռացումը: Այդ հոգեվիճակները գոյություն ունեն և՛ այս կյանքում, և՛ նրանում, որը կհաջորդի նրան: Նույն կերպ էլ կյանքն ու մահն այն իմաստով, որով նրանց մասին ասվում է սուրբ Գրվածքներում, վերաբերվում են մարդու հոգևոր կյանքին կամ դրա բացակայությանը:

Չարժի վախենալ մարմնի մահից, բայց պետք է ողջունել որպես նոր, ավելի լի կյանքի ծնունդ:

«Ով՛ բարձրագույնի որդի: Ես մահը քեզ համար ուրախության բանբեր եմ սարքել: Ինչու՞ ես դու վշտանում: Ես ստիպել եմ լույսը քո մեջ փայլել: Ինչու՞ ես նրանից երես դարձնում»[51]*:*

«Հիրավի գիտցիր, որ հոգին, բաժանվելով մարմնից, շարունակում է իր զարգացումը, մինչև հասնի Աստվածային ներկայությանը այնպիսի կերպարով և վիճակով, որի վրա չեն ազդի ոչ դարաշրջանների ու հարյուրամյակների շրջապտույտը և ոչ էլ այս աշխարհի փոփոխությունները ու ճակատագրերը: Եվ այն կմնա այնքան, որքան կտևի Աստծո Թագավորությունը, Նրա տիրապետությունը և իշխանությունը: Այն ի հայտ կբերի Աստծո նշանները և Նրա հատկանիշները և կհայտնի Նրա սերը և առատաձեռնությունները... Օրհնյալ է հոգին, որ մարմնից բաժանվելու ժամին մաքրված է մարդկային դատարկ հերյուրանքներից: Այդպիսի հոգին ապրում է իր Արարչի Կամքի համաձայն ու մուտք է գործում Ամենաբարձրյալ Դրախտ... Եթե ինչ որ մեկին ասեն, թե ինչ է նախատեսված այդ հոգուն Աստծո աշխարհներում... նրա ամբողջ էությունը կվարակվի բարձրագույն, ամենամաքուր և հրաշալի վիճակի հասնելու մեծ պոռթկումով»[52]*:*

Բահաուլլա

Զարգացում

Բահայի հավատի ուսմունքը բացատրում է, որ ֆիզիկական աշխարհում չկա ոչ մի անփոփոխ բան, ամեն ինչ գտնվում է միավորման և բաժանման գործընթացում: Այդ սկզբունքը ճիշտ է ոչ միայն անշունչ առարկաների դեպքում, այլ նաև կյանքի բոլոր ձևերի համար: Այդպես կենսաբանական տեսակները, որոնք կազմում են բուսական և կենդանական աշխարհները զարգանում են պարզ տեսակներից դեպի բարդերը: Նույն կերպ նաև մարդը: Բահայիներն ընդունում են, որ ֆիզիկական մարմինը զարգացել և ընդունել է իր ձևերը և հատկանիշները միլիոնավոր տարիների ընթացքում: Այնուամենայնիվ բահայիները հավատում են, որ մարդկային գոյության կարևորագույն կողմը, որն առանձնացնում է նրան կենդանական աշխարհի ներկայացուցիչներից՝ նրա ոգին կամ հոգին է՝ Աստծո հատուկ արարման առարկան:

Չարը և բարին

Բահաուլլան բացատրում է, որ Տիեզերքում գոյություն ունի միայն մեկ ուժ, դա Ամենազոր Աստծո օրհնության ուժն է, ում սերն ու բարությունն անսահմանափակ են: Սրանից հետևում է, որ Չարիքն իր բոլոր արտահայտումներում դրական էություն չէ, այլ ընդամենը Բարության բացակայությունն է կամ նրա անբավարարությունը: Չարը Բարու բացակայությունն է այնպես, ինչպես լույսի բացակայությունը մթություն է:

Եթե մարդը սխալ է իրեն պահում, դա նշանակում է, որ նրա նվաստ՝ կենդանական բնույթն ավելի զարգացած է, քան բարձրագույնը՝ հոգևորը: Այդպիսի մարդը պետք է շրջապատի միջոցով զարգացնի իր բարձրագույն բնույթը:

Բոլոր մարդիկ՝ անգամ ամենափոքր երեխաները ցանկություններ ունեն: Ցանկությունն արժանի է գովասանքի, եթե այն ուղղված է մարդու կամ ամբողջ մարդկության բարիքին: Ցանկությունը ավելին ստանալու ձգտումն է, այն խթան է, որը տրվում է Աստծո կողմից, որ-

պեսզի նա կարողանա ձգտել նոր գիտելիքների, կատարելագործի բնավորությունը, շարժվի դեպի Աստված:

Բարությունը Աստծո պատվիրաններին հետևելու մեջ է, իսկ չարիքը, դրանց գիտակցաբար մերժումն է: Բահաուլլան մարդուն ուժ է տալիս, քաջություն և կյանքի նպատակ, ընդգծում է Աստծո ներողամտությունը և ողորմած բնույթը, բայց Նա նրան նաև պարզ հասկացնել է տալիս, որ մարդը չի կարող խուսափել իր ուժերի և ունակությունների օգտագործման կամ դրանց չարաշահման համար անհատական պատասխանատվությունից:

«Գիտցիր, որ բոլոր մարդիկ ստեղծվել են Աստծո՝ Պահապանի, Ինքնագոյի արարած տիրույթում: Յուրաքանչյուրի համար նախատեսված է իր չափը ինչպես հայտարարված է Աստծո հզորագույն և պահպանված Թղթագալարներում: Այն ամենը, ինչին դուք տիրում եք, կարտահայտվի ոչ այլ կերպ, քան ձեր սեփական ցանկության հետևանք: Այդ ճշմարտության մասին վկայում են ձեր գործերը... Այնուամենայնիվ մարդիկ կարողացել են խախտել այդ օրենքը: Վերագրել արդյոք նման պահվածքը Աստծուն, թե՞ նրանց: Ազնիվ եղեք ձեր դատողություններում: Ամեն բարին Աստծուց է, ամեն վատը՝ ձեզնից»[53]:

Բահաուլլա

Պահվածքը

Բահայիները պետք է տարբերվեն ոչ թե բառերով, այլ գործերով: Հատկանիշները, որոնք մատնանշում է Բահաուլլան, նշվում են բոլոր հիմնական կրոններում: Մարդը պետք է ձգտի ազնիվ, սիրող, մեծահոգի, քաղաքավարի և հավատարիմ լինել: Նա պետք է ուրախ սրտով ընդունի Աստծո Կամքը:

Բահաուլլան հավանություն չի տալիս ճգնավորությանը և հրամայում է մարդուն օգտվել կյանքի բոլոր բարիքներից, որը նրան Աստված է տալիս:

Աստծո ճանապարհը կարող է տանել նյութական զրկանքներով կամ ընդհակառակը՝ հարստության և բարեկեցության միջով: Բահաուլլան իր հետևորդներին խորհուրդ է տալիս հույսը չդնել հարստության վրա: Մարդու համար մեծագույն օրհնությունը հանգիստ սիրտն է, իսկ դրան կարելի է հասնել միայն Աստծո պատվիրաններին համապատասխան կյանք վարելով:

Աղոթք

Աղոթքն անհրաժեշտ է մարդու հոգևոր աճի համար: Սնունդը նպաստում է մարմնի աճին, իսկ աղոթքը հոգու սնունդն է: Բահաուլլան ամենօրյա աղոթքը դարձրել է պարտադիր բոլոր բահայիների համար, սակայն նրանք ընտրություն ունեն երկար, միջին և կարճ պարտադիր աղոթքների միջև:

Աղոթքն ավելի կարևոր բան է, քան բառերի պարզ արտասանությունը: Դրանում ներդրվում է կյանքի հանդեպ մեր ամբողջ վերաբերմունքը, կենտրոնացումն ու երախտագիտությունը: Աբդուլ-Բահան մի անգամ բահայիներին ասաց, որ Աստծուց խնդրում է, որ նրանց կյանքերը դառնան ծառայության և խոնարհման հրաշալի աղոթքներ: «Գիտցեք, որ ոչինչ այնպիսի բարենպաստ ազդեցություն չի գործի, ինչպես Աստծուն ուղղված աղերսները, Նրա խաղողի որթերի խնամումը, և հավերժ սիրող սրտով Նրան ծառայելը»[54]:

Պաս

Յուրաքանչյուր տարվա մարտի 2-20-ը ամբողջ աշխարհի 15-70 տարեկան բահայիները, որոնք առողջ են, չեն ուտում և չեն խմում արևածագից մինչև արևամուտ: Այդ կանոնին չեն ենթարկվում ճամփորդները, կերակրող մայրերը և հղիները:

Պասը հոգևոր նորոգման հիմքն է: Այդ ընթացքում բահայիները ամենավճռական քայլերն են ձեռնարկում, որ ուղղեն իրենց վնասակար սովորությունները, որոնք կուտակվել են տարվա ընթացքում և հաղթահարեն ծուլությունը: Երբ մարդիկ ստիպված չեն ժամանակ ծախսել սնունդ պատրաստելու և ուտելու վրա, նրանք ավելի շատ ժամանակ են ունենում, իրենց մտքերն ուղղելու առ Աստված: Պասի նպատակն է մարդուն մոտեցնել Աստծուն:

Ամենօրյա ուսուցումը

Բահայիներին խորհուրդ է տրվում յուրաքանչյուր օրվա սկզբում և վերջում մի փոքր ժամանակ ծախսել Հավատի տեքստերի ընթերցանության և կարդացածի շուրջ մտորելու վրա: Այդ պարապմունքների նպատակը մեր միտքը թարմացնելն ու նորացնելն է՝ առանց այն հոգնեցնելու: Բահաուլլան ասում է, որ ավելի լավ է ուրախությամբ և բավարարվածությամբ կարդալ կարճ հատված, քան թե անփութորեն երկարը:

Ծառայությունը մարդկությանը

Եթե մենք սիրում ենք Աստծուն և ուզում ենք հետևել Նրա ուսմունքին, մենք պետք է ծառայենք այլ մարդկանց: Բահաուլլան մեծ նշանակություն էր տալիս նման ծառայությանը: Եթե մեր մտադրությունները մաքուր և անկեղծ են՝ հիմնված Աստծո հանդեպ սիրո վրա՝ մարդկությանը ծառայելու մեր գործողությունները կլինեն աղոթքը, Աստծո առջև խոնարհումը և Նրա հետ միավորումը:

Բահաուլլան սովորեցնում է, որ մարդիկ պետք է իրենց ամենօրյա աշխատանքը դիտարկեն որպես Աստծուն ծառայություն: Մարդը ստեղծված չէ աշխատանքի համար, ընդհակառակը աշխա-

տանքն է ստեղծված նրա համար: Գործունեությունը գոյություն ունի նրա համար, որ բարձրացնի մարդուն, վեհացնի նրան, ոչ թե նրան նվաստացնի: Բոլոր մարդիկ աշխատելու հիմնարար իրավունք ունեն, յուրաքանչյուրը պետք է կյանքի համար գումար վաստակի իր ձեռքերի և գլխի միջոցով: Աշխատանքը ծանր պարտք կամ տհաճ պարտականություն չպետք է լինի, այն մարդկանց ծառայելու ոգով իրականացված Աստծուն խոնարհում է:

Հավատի տարածումը

Բահայի հավատում չկան մասնագետ հոգևորականներ: Յուրաքանչյուր բահայի իր կրոնի ուսուցիչ է, յուրաքանչյուրն իր պարտականությունն ու առավելությունն է համարում տարածել Ուսմունքը: Բահայի հավատի ուսուցիչը պետք է ամուր հավատ ունենա առ Աստված, ձգտի ապրել համապատասխան Հավատի պատվիրաններին: Բահաուլլան ասում էր, որ Հավատին ծառայելու լավագույն ձևը սեփական կյանքը Բահայի հավատի հիմքի վրա կառուցելն է և այլ մարդկանց օրինակ ծառայելը: Եթե բառեր են պետք, դրանք պետք է մեծագույն իմաստությամբ ընտրել: Բահայիները պետք է կիսվեն ուսմունքով բոլորի հետ, բայց եթե մարդը չի ցանկանում լսել, նրա համար պետք է աղոթք կարդալ և թողնել դեպի Աստված իր ընտրած ճանապարհին:

Թմրանյութերից և ալկոհոլից հրաժարվելը

Բահաուլլան արգելում է օգտագործել թմրեցնող խմիչքներ և ցանկացած տեսակի թմրանյութեր, բացառապես այն դեպքերի, երբ դրանք օգտագործվում են բժշկական նպատակներով: Թմրանյութերը և ալկոհոլը կարող են վնասել մարդու մարմնական և հոգևոր առողջությանը:

Կառավարությանը հավատարմությունը

Բահայիները պետք է հարգեն այն երկրի օրենքները, որում ապրում են և հնազանդվեն դրանց: Այնտեղ, որտեղ անհրաժեշտ է մարդու իրավունքների պաշտպանություն, անհրաժեշտ են փոփոխություններ օրենքներում, այդ փոփոխությունները պետք է անցկացվեն ոչ բռնի ճանապարհով: Աջակցելով խաղաղարար ուժերին՝ բահայիները չնայած նույն խաղաղարարները չեն, ամենուր, որտեղ դա անհրաժեշտ է, փնտրում են խաղաղ լուծումներ:

Նոր հայրենասիրությունը

Բահային աշխարհի քաղաքացի է: Հայրենասիրությունը բնական մարդկային նվիրվածություն է: Առողջ և բանական հայրենասիրության մեջ վատ բան չկա, բայց 20-րդ դարում այդ դիրքորոշումն ակնհայտորեն բավական չէ: Հավատարմությունն անհրաժեշտ է կիրառել ամբողջ մոլորակի հանդեպ: Դրան կարելի է հասնել միայն միասնության և մարդկային ուղեղի ամբողջականության հոգևոր գիտակցման ճանապարհով: *«…հպարտանում է ոչ թե նա, ով սիրում է իր երկիրը, այլ նա, ով սիրում է ամբողջ աշխարհը: Երկրագունդը մի երկիր է, իսկ մարդկությունը՝ նրա քաղաքացիները»*[55]*:* (Բահաուլլա)

Ընտանիք

Երջանիկ, ամուր ընտանիքները ներդաշնակ, կայուն հասարակության անկյունաքարն են: Բահայի հավատում արգելված է վանական ամուրիությունը, իսկ ընտանիքի ստեղծումը, չնայած պարտադիր չէ, բայց ամեն կերպ խրախուսվում է: Բահայի հավատում ամուսնությունը մեծ կարևորություն ունի և դիտարկվում է որպես Աստծո մտադրության իրականացում: *«Երբ Նա ցանկացավ մարդկանց հանդեպ բարեհաճություն և ողորմածություն ցուցաբերել, Նա նրանց համար բացահայտեց օրենքներ և կանոններ, նրանց մեջ Նա հաստատեց ամուսնության օրեն-*

քը, այն բարեկեցության և փրկության ամրոց դարձնելով...»[56] (Բահաուլլա)

Ամուսնությունը լավագույն պայմաններն է առաջարկում տղամարդկանց և կանանց հոգևոր և ֆիզիկական գոյության համար: Ամուսնական հարաբերություններում նրանք կարող են լավագույնս օգնել իրար զարգացնել իրենց մարդկային ներուժը, հոգեպես աճել և մեկ այլ մարդու համար ինքնազոհության գնալու հնարավորություն ստանալ:

Ամուսնության առաջնային նպատակը երեխաների դաստիարակությունն է: *«Իր Փառքի մեջ Մեծագույնն ասում է. Ամուսնացեք, ո՛վ մարդիկ, որ ձեզնից ծնվի նա, ով կհիշատակի Ինձ Իմ ծառաների միջև, սա ձեզ Իմ պատվիրաններից մեկն է, հետևեք դրան որպես ձեզ օգնություն»*[57]: (Բահաուլլա)

Ծնողական պարտականությունները կնոջ և ամուսնու առաջնային և գլխավոր պարտականությունն են, այդ պատճառով ամուսնության հենց այդ ոլորտն է առավել սերտորեն կապված Աստծո՝ մարդու համար նախասահմանվածի կատարման հետ: Մարդկանց վերաբերյալ Աստծո նպատակի ըմբռնումը երեխաներին փոխանցելու լավագույն միջոցը սեփական օրինակն է, և այդ նպատակը պարզ է բահայի ծնողներին:

Ընդունելով, որ Աստծո սերը մարդկանց միջև սիրո ճշմարիտ աղբյուրն է, ամուսնության մեջ գործընկերներն իրար հանդեպ սիրո հենքը փնտրում են Աստծո հանդեպ սիրո մեջ, դրանից է կախված ամուսնության մեջ երջանկությունը: «Ճշմարիտ սերն անհնարին է, եթե մեր դեմքերը չուղղենք դեպի Աստծված և Նրա Գեղեցկությամբ գրավված չլինենք»[58]: (Աբդուլ-Բահա)

Հիմնական հատկանիշները, որոնք հոգին կապում են Աստծո հետ՝ հավատարմությունն ու նվիրվածությունը պետք է դառնան ամուսնական սիրո կապի հիմքը: Այդ հատկանիշների ամենաթան-կարժեք արտահայտումը առաքինությունն է:

«Բահայի հավատի գաղափարը սեռերի փոխհարաբերությունների խնդրում կայանում է նրանում, որ ինչպես տղամարդիկ, այնպես

էլ կանայք պետք է խստորեն հետևեն առաքինությանը, ընդ որում ոչ միայն նրա բարձր բարոյական լինելու պատճառով, այլ նաև քանի որ դա ամուսնության մեջ երջանիկ և լիարժեք կյանքի միակ ուղին է: Այդ պատճառով ցանկացած այլ տեսակի սեռական հարաբերությունները բացի ամուսնությունից Բահայի հավատում չեն թույլատրվում, նա, ով խախտում է այդ կանոնը, ոչ միայն պատասխանատվություն է կրում Աստծո առջև, այլ նաև արժանի է հասարակության կողմից արդարացի պատժի:

Բահայի հավատն ընդունում է սեքսուալ բնույթի խթանի նշանակությունը, բայց դատապարտում է նրա այնպիսի անօրինական և անտեղի արտահայտումները, ինչպիսիք են ազատ սերը, խմբակային ամուսնությունը և նմանատիպ ձևերը, քանի որ նրանք բոլորն իրենց մեջ ունեն մարդու և իր ապրած հասարակության համար ներունակ վտանգ: Սեռական բնազդի ճիշտ օգտագործումը յուրաքանչյուր մարդու բնական իրավունքն է և հենց այդ նպատակով է հաստատվել ամուսնության ինստիտուտը: Բահայիները չեն հավատում սեռական բնազդի խեղդմանը, բայց հավատում են նրա կարգավորմանը և ուղղորդմանը»[59]:

Շողի էֆֆենդին քարտուղարի միջոցով

Ամուսնությունը ամուր ընտանիքի հիմքն է, իրենց հերթին լավ ընտանիքները կայուն քաղաքակրթության հիմքն են*: «Գիտցիր, որ ամուսնության հանդեպ պահանջը հավերժ է: Այն երբեք չի չեղարկվի կամ փոխարինվի: Դա աստվածային արարում է, և փոփոխությունների … կամ ուղղումների փոքրագույն հնարավորություն անգամ չկա այդ աստվածային արարման մեջ»[60]:* (Աբդուլ-Բահա)

Հավատարմությունն ու նվիրվածությունը կենսական նշանակություն ունեն ամուսնության համար: Քանի որ ցանկացած տեսակի արտամուսնական սեռական հարաբերություններն արգելված են, բահայիներին թախանձագին խորհուրդ է տրվում ամուսնանալ երիտասարդ տարիքում: Բահայիների մոտ ամուսնալուծությունը հնարավոր է, բայց խստորեն դատապարտվում է և դրան դիմում են միայն այն դեպքերում, երբ հաշտության բոլոր փորձերը հաջողությամբ չեն պսակվում:

Ծնողներին արգելվում է դասավորել իրենց երեխաների ամուսնությունը: Բահայիներն իրենք պետք է գտնեն իրենց ամուսնական զույգերին: Սակայն, երբ նմանները գտնվել են, անհրաժեշտ է ստանալ ծնողների համաձայնությունը: Բահայիների միջև ամուսնությունը չի կարող կայանալ մինչև չստանան երկու կողմերի հայրերի և մայրերի համաձայնությունը (եթե իհարկե նրանք ողջ են): Եթե երկու ընտանիքները միասնական են կայանալիք ամուսնությունում իրենց համաձայնության մեջ, այն հաջողության ավելի մեծ շանսեր ունի:

Բահայիները կարող են ընտրել իրենց ամուսնական զույգերին ցանկացած կրոնական, ազգային կամ ռասայական միջավայրից: Քանի որ համարվում է, որ ամբողջ մարդկությունը մեկ ժողովուրդ է, բավականին սովորական են այն անձանց միջև ամուսնությունները, որոնք շատ են տարբերվում ռասայով կամ մշակութային պատկանելիությամբ: Այդ ամուսնություններն ի մի են կապում հասարակության ավելի լայն շրջանակների ընտանիքների և դրանով նպաստում են մարդկության միասնությանը:

Բահայիներին չի թույլատրվում ունենալ մեկից ավելի ամուսին կամ կին, բայց եթե մարդը գալիս է Բահայի հավատ գտնվելով պոլիգամ ամուսնության մեջ, նա պետք է շարունակի հոգ տանել իր բոլոր կանանց մասին, բայց նոր ամուսնությունները նրա համար արգելված են:

Ամուսնության գրանցման արարողությունը շատ պարզ է: Կինը և տղամարդը վկաների ներկայությամբ ասում են իրար. «Մենք երկուսս էլ հիրավի կհետևենք Աստծո կամքին»: Ամուսնություն գրանցողների ցանկությամբ ծեսի ընթացքում կարող է միացվել երաժշտություն, աղոթքներ և ասմունք:

Եթե երկրի օրենքները չեն ճանաչում բահայի ամուսնությունը, զույգը պետք է նույն օրը կատարի քաղաքացիական գրանցման ծեսը: Եթե ամուսնացողներից միայն մեկն է բահայի, ապա, եթե դա իր հետ չի բերի այլ կրոնի ձևական ընդունում, բահայիները կարող են մասնակցել կրոնական ծիսակարգին: Որոշ երկրներում ամուսնության ծիսակարգի կատարումը բահայի համայնքում պաշտոնապես ընդունվում է, օրինակ Շոտլանդիայում (1978թ-ից սկսած):

Պետք է հարգել ընտանիքի բոլոր անդամների իրավունքները և ընդհանուր առմամբ պահպանել նրա միասնությունը: Երեխաները որոշակի պարտականություններ ունեն ծնողների հանդեպ, իսկ ծնողները՝ երեխաների հանդեպ: Օրինակ՝ ծնողների պարտքն է իրենց երեխաներին ուսուցանել Աստծո և այլ մարդկանց հանդեպ սեր դրսևորել: Բահաուլլան նաև ասում է, որ ծնողների վրա է ընկած երեխաներին ուսուցանելու և դաստիարակելու պատասխանատվությունը: Եթե պետությունն այդ հոգսն իր վրա չի վերցնում, իսկ ծնողները ընդունակ չեն, նման ընտանիքին համատեղ պետք է օգնեն ընկերները և համայնքը:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը

Բահայիների իսկական ամուսնությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ հետևում են Բահայի հավատի ևս մեկ կարևոր սկզբունքի՝ տղամարդկանց և կանանց իրավահավասարությանը:

Տղամարդկանց և կանանց իրավահավասարությունը բահայիների մոտ բարոյական և հոգևոր սկզբունք է, որն անհրաժեշտ է Նոր համաշխարհային կարգի կառուցման համար: Առանց տղամարդկանց և կանանց տաղանդների և հատկանիշների կիրառման, մարդկության տնտեսական և սոցիալական զարգացման կատարելագործումն անհնարին է:

«Մարդկային աշխարհն ունի երկու թև. դրանցից մեկը կինն է, մյուսը՝ տղամարդը: Քանի երկու թևերն էլ միանման զարգացած չեն, թռչունը չի կարող թռչել»[61]*:*

«Քանի կանանց թույլ չեն տվել զարգացնել իրենց ունակությունները բարձրագույն աստիճանով, տղամարդիկ նույնպես չեն կարողանա հասնել այն վեհությանը, որին կկարողանային տիրապետել»[62]*:*

Աբդուլ-Բահա

Բահաուլլան հաստատել է, որ կանանց կրթությունը պետք է հիմնվի այն նույն չափանիշների վրա, ինչ որ տղամարդկանց կրթությունն է: Տղամարդիկ և կանայք պետք է հասարակության մեջ հավասար իրավունքներ ունենան: Եթե ընտանիքը գումար չունի որդու և դստեր կրթության համար, ծնողները պետք է գումարը ծախսեն դստեր կրթության վրա, քանի որ նա ապագա մայր է և ապագա սերունդի դաստիարակը:

Բահաուլլան սովորեցրել է, որ կանանց իրավահավասարության կայացմանը չի կարելի խանգարել և անհնարին է դանդաղեցնել նրա զարգացումը: Բահաուլլան նաև ասել է, որ երբ կանայք սկսեն լիարժեք և իրավահավասար մասնակցություն ունենալ աշխարհի գործերում, պատերազմները կդադարեն:

Իրենք իրենցով այդ փոփոխությունները տեղի չեն ունենա. իրենց լրիվ ներուժի զարգացման համար կանայք պետք է իրենք ջանքեր գործադրեն: *«Կանայք պետք է պայքարեն կատարելության ավելի բարձր մակարդակի հասնելու, տղամարդկանց հետ բոլոր առումներով հավասար դառնալու, բոլոր ոլորտներում, որտեղ կանայք ավանդաբար ետ են մնում, առաջ գնալու համար, որպեսզի տղամարդիկ ստիպված լինեն ընդունել ունակությունների և հմտությունների առումով իրենց իրավահավասարությունը»*[63] (Աբդուլ-Բահա):

Հաջորդ հատվածում Աբդուլ-Բահան պարզաբանում է, թե ինչ կարող է պատահել, երբ կանայք հասարակության մեջ իրենց իրական տեղը գրավեն.

«Անցյալում աշխարհին տիրել է ուժը, և տղամարդը գլխավորել է կնոջը իր ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր ավելի ագրեսիվ և ուժեղ հատկանիշների միջոցով: Բայց այդ հավասարակշռությունն արդեն խախտվել է, ուժն այլևս հարգված չէ. նախընտրությունը տրվում է ընկալունակությանը, ինտուիցիային, հոգևոր հատկանիշներին, ինչպիսիք են սերն ու ծառայությունը, որոնք ավելի բնորոշ են կնոջը: Այդ պատճառով գալիք դարում կշեռքի նժարը կթեքվի կանանց իդեալների կողմը, իսկ ավելի ճիշտ քաղաքակրթության տղամարդկային և կանացի բաղադրիչներն ավելի հավասարակշռված կլինեն»[64]:

Համընդհանուր պարտադիր կրթությունը

Բահաուլլայի ևս մեկ կարևոր ցուցումը նախնական համընդհանուր կրթության անհրաժեշտությունն է. բոլոր կանայք և տղամարդիկ պետք է կրթված լինեն:

Գիտելիքը Աստծուց մարդուն տրված մեծագույն շնորհն է և նրանք, ովքեր իրենց զրկում են գիտելիք ձեռք բերելու հնարավորությունից ապրում են ավելի սահմանափակ կյանքով, քան նրանց ընկերները: Իմաստ ունի ձեռք բերել գիտելիքներ այն գիտություններից, արվեստներից, արհեստներից և հմտություններից, որոնք կարող են մարդկանց օգուտ բերել և բարելավել երկրի վրա կյանքի որակը:

Նախապաշարմունքները հաճախ հիմնված են տգիտության վրա և կրթության տարածումը կարող է օգնել դրանք վերացնել մարդկային միջավայրից:

Մարդիկ տարբերվում են ընդունակություններով և տաղանդով: Երեխաներին տրված կրթությունը պետք է նրանց բնական ընդունակությունների լրիվ զարգացման նպատակ հետապնդի և քաջալերի նրանց միջև ստեղծագործական համագործակցությունը:

«Բահաուլլան հռչակեց, որ տգիտությունը և գիտելիքների բացակայությունը արգելքներ են, որոնք բաժանում են մարդկությունը, ուստի բոլորը պետք է ընդհանուր և մասնագիտական կրթություն ստանան: Դրա միջոցով կհաղթահարվեն թյուրըմբռնումները և մարդկության միավորմանը նոր խթան կտրվի: Համընդհանուր կրթությունը համընդհանուր օրենք է:

Կրթությունը պարտադիր է բոլոր երեխաների համար... Ի լրացում համընդհանուր կրթության յուրաքանչյուր երեխա պետք է մասնագիտություն, արհեստ, հմտություններ ձեռք բերի, այնպես, որ համայնքի բոլոր անդամները կարողանան գումար վաստակել իրենց կյանքի համար: Ծառայության ոգով կատարված աշխատանքը պաշտամունքի բարձրագույն ձև է»[65]*:*

Աբդուլ-Բահա

Համաշխարհային քաղաքակրթության զարգացումը

Մարդկային հասարակությունը զարգանում է համաշխարհային միասնության ուղղությամբ: Այդ միասնության ցածրագույն ձևերը՝ ընտանիքը, ցեղը, քաղաք-պետությունները, ազգերը արդեն գտել են իրենց զարգացումը: Նրա յուրաքանչյուր քայլը անհրաժեշտ էր մարդկությանը և անցկացվել է նրա կողմից: Հաջորդ քայլը մարդկության խաղաղ միավորումն է մի ընկերակցության մեջ: Նման համագործակցության հիմքը կարող է միայն հոգևոր լինել, սակայն կարելի է մատնացույց անել նաև որոշ կոնկրետ քայլեր, որոնք աշխարհի ժողովուրդները պետք է ձեռնարկեն իրենց խաղաղ զարգացման ճանապարհին: Դա.

ա. ծայրահեղ հարստության և աղքատության վերացումն է ինչպես ազգի ներսում, այնպես էլ ազգերի միջև,

բ. միջազգային օժանդակ լեզվի հաստատումը, որը մայրենիի հետ միասին կուսուցանվի դպրոցներում,

գ. համաշխարհային ընկերակցության և խորհրդարանի զարգացումը բոլոր ազգերի արդարացի ներկայացուցչությունների հիման վրա,

դ. համաշխարհային ֆեդերատիվ կառավարության կամ Համաշխարհային Գերտերության, Բարձրագույն Դատարանի և Միջազգային Կատարողական մարմնի ստեղծումը ցանկացած դիմադրող կողմից ժողովրդական Կատարողական մարմնի որոշումների կատարումն ապահովելու համար, ժողովուրդների ընդհանուր իրավունքների ապահովման և ագրեսիային պատասխանելու համար,

ե. համաշխարհային գրի, դրամի, չափումների և քաշի, գրականության ցուցակի միասնական համակարգի ընտրությունը Երկրի բոլոր ռասաների և ժողովուրդների իրար մեջ կապը և շփումը հեշտացնելու համար:

1936թ-ին Հավատի Պահապանը գրել է.

«Նման համաշխարհային ընկերակցության մեջ գիտությունը և կրոնը՝ մարդկանց կյանքում երկու ամենահզոր ուժերը, կհաշտվեն և կսկսեն համագործակցել իրար հետ ներդաշնակ զարգացման մեջ: Նման հասարակությունում լրատվամիջոցները ազատ կլինեն շահագրգռված կողմերի ամենաթողությունից, կառավարական և ազգային սահմանափակումներից և կարտացոլեն բոլոր տեսակի հայացքների և համոզմունքների ամբողջական պատկերը: Կկազմակերպվի տնտեսական ռեսուրսների հաշվարկը, կբազմացվեն և ռացիոնալ կօգտագործվեն հումքի աղբյուրները, նրանց շուկաները, ինչպես նաև կվերահսկվի և արդարացիորեն կկարգավորվի արտադրանքի տեղաբախշումը: Կդադարի ազգային մրցակցությունը, ատելության և խարդավանքների ամեն տեսակի արտահայտումները, ռասայական պայքարը և նախապաշարմունքներն իրենց տեղը կզիջեն ռասայական խաղաղությանը, փոխըմբռնմանը և համագործակցությանը: Աստիճանաբար կհարթվեն կրոնական բախումների պատճառները, կվերացվեն տնտեսական անջրպետները և սահմանափակումները, կվերացվեն դասակարգերի միջև ծայրահեղ տարբերությունները: Կվերանա ինչպես աղքատությունը, այնպես էլ սեփականության հսկայական կուտակումները: Տնտեսական և քաղաքական հսկայական էներգիան, որը ծախսվում է պատերազմի վրա, կուղղորդվի այն խնդիրներին, որոնք կընդլայնեն մարդկային ըմբռնման և աշխատանքի հորիզոնը, կբարձրանա աշխատանքի արտադրողականությունը, արմատախիլ կարվեն հիվանդությունները, կընդլայնվեն գիտական փնտրտուքի շրջանակները, կբարձրացվեն ֆիզիկական առողջության չափանիշները, ինչպես նաև կնպաստեն մարդկային բանականության կատարելագործմանը, մոլորակի չօգտագործվող և չհետազոտված ռեսուրսների օգտագործմանը, մարդկային կյանքի երկարացմանը և բոլոր այլ տեսակի գործունեությունների իրականացմանը, որոնք ուղղված են ամբողջ մարդկային ռասայի մտավոր, բարոյական և հոգևոր կյանքի խթանմանը»[66]*:*

Արգելքները

Ի լրացում արգելքների, որոնց մասին ասվել է վերևում, հատկապես ճգնավորությանը, ալկոհոլի և թմրանյութերի օգտագործմանը, Բահաուլլան նաև արգելել է թղթախաղերը, արտամուսնական կապերը, գողությունը, հոմոսեքսուալությունը, կենդանիների հետ դաժան վարվելաձևը, չարախոսությունը, մեղքերի խոստովանությունը, բամբասանքը, դիակիզումը, մուրացկանությունը, վանական ամուրիությունը, ստրկավաճառությունը, սպանությունը և ձեռնահամբույրը: Դրանով Նա ոչ միայն իր հետ բերել է Նոր Դարաշրջանի օրենքները, այլ նաև արգելել է այլ կրոնների որոշ օրենքներ և կանոններ, որոնք արդեն մարդկության միասնության և քաղաքակրթության զարգացման արգելք են դարձել: 1931թ Շողի էֆֆենդին գրել է.

«Բահաուլլայի կոչն ուղղված է առաջին հերթին գավառականության, մեկուսացման և նախապաշարմունքների բոլոր տեսակների դեմ: Եթե անցյալում փայփայված իդեալները, նախկինում բարգավաճող ինստիտուտները, որոշ սոցիալական բացթողումներ և կրոնական կարգեր այլևս չեն նպաստում մարդկության մեծ մասի բարեկեցությանը, այլևս չեն ծառայում անընդհատ զարգացող մարդկության պահանջներին, դրանք պետք է դադարեցնել և դասել իրենց կյանքն ապրած և մոռացված ումմունքների շարքերում: Ինչու՞ աշխարհում, որը հնազանդվում է փոփոխությունների և քայքայման համընդհանուր օրենքին, նրանք պետք է դառնան բացառություն ընդհանուր կանոնից: Չէ որ իրավական չափանիշները, տնտեսական և քաղաքական տեսությունները նախատեսված են ամբողջ մարդկության շահերի հետևման համար, բայց մարդկությունը չպետք է տանջվի հանուն առանձին օրենքների և ումմունքների պահպանման»[67]*:*

Ինչպես են ապրում բահայիները

Ներածություն

Բահայիները չեն կրում հատուկ հագուստ, չեն ծագում ինչ որ հատուկ ռասայից կամ ազգից, այդ պատճառով այդքան էլ հեշտ չէ առաջին հայացքից տարբերակել նրանց այլ մարդկանցից: Մյուս կողմից Բահայի հավատի զարգացմանը զուգահեռ, նրա հետևորդների մոտ առաջանում են ոչ պակաս տարբերակիչ գծեր: Որպես անհատներ նրանք վստահ են իրենց վրա և հանգիստ են, քանի որ խորապես հասկանում են այն ամենը, ինչ կատարվում է իրենց շուրջ և գիտակցում են կյանքում իրենց դերը: Նրանք զգում են, թե այս կամ այն իրավիճակում ինչ գործնական քայլեր է նրանցից ուզում Աստված:

Նրանք ոչ միայն կարեկցում են միլիոնավոր աղքատներին, անտուններին, հիվանդներին, ստրկացվածներին, հետապնդվողներին, այլ նաև երջանիկ են Աստծո կողմից իրենց տրված գիտելիքով, ով ուղի և իրավիճակը բարելավելու միջոցներ է ցույց տվել, նրանք զգում են, որ կարող են դրական ներդրում կատարել այդ գործընթացում:

Մարդկության մեծամասնությունը մերժել է Աստծո Խոսքը որպես ուժ, որը կարող է իրեն օգնել: Այդ պատճառով մարդիկ կորցրել են իրենց մերձավորների հետ ներդաշնակորեն ապրելու ունակությունը: Այսպիսով լավագույն բանը, որը կարող է անել մեզանից յուրաքանչյուրը, կրկին մարդու գիտակցությանը հասցնել Աստծո Խոսքը: Այսպիսով բահայիների կյանքի խնդիրը շատ պարզ է՝ մարդկանց հասցնել Բահաուլլայի Ուղերձը: Քանի որ մարդիկ ունեն անկախ մտորելու բնությունից տրված շնորհ, նրանք ունակ են գնահատել այդ Ուղերձի կարևորությունը: Աստծո հավատը գոյություն ունի բոլորի համար, այն ազատ է և չունի սահմանափակումներ: Ոչ ոք չպետք է զրկված լինի նրա մասին իմանալու հնարավորությունից: Թե ինչպես կվարվի յուրաքանչյուր ոք, իմանալով Բահայի հավատի մասին, վերաբերվում է միայն նրան և Աստծուն. այստեղ չի թույլատրվում անգամ փոքրագույն ճնշում կամ հարկադրանք: Հավատին մոտեցնելու համար օգտագործվում են կյանքի որակի, նրա իմաստի, հոգևոր փայլատակման, շփման ուրախության կատեգորիաներ: Բայց այդ դեպքում օրինական հարց է ծագում. եթե Աստծո Խոսքի

տարածումն այդքան մեծ կարևորության հարց է, եթե չկան մասնագիտացված հոգևորականներ, եթե ոչ ոքի չեն վճարում Բահայի հավատի ուսուցման համար, այդ դեպքում ինչպե՞ս է այդ հավատը հասնում աշխարհի ամենահեռավոր անկյունները՝ առանց հիմնվելու որևէ պլանավորման և կազմակերպման վրա: Չնայած վերջինն այդքան էլ ճիշտ չէ. Հավատի Գրվածքներում կա Հավատի ուսուցման համաշխարհային ծրագրի նախագիծ, ինչպես նաև վարչական համակարգի նախագիծ, որն իր զարգացմանը զուգահեռ կապահովի երկրի վրա Աստծո թագավորության հիմքի ստեղծումը: Հենց այդ վարչակարգում, կառավարման այդ համակարգում, որն իրացվում է տեղական, ազգային կամ համաշխարհային մակարդակներում, որում կարող են մասնակցել բոլոր բահայիները, իրացվում է նրանց կյանքի ամենակարևոր բնորոշիչ գծերից մեկը: Ինքն իրենով այդ վարչակարգը մարդկության կրոնական պատմության մեջ յուրահատուկ է, այդ պատճառով այս ակնարկում դրան մեծ ուշադրություն կդարձվի: Անհրաժեշտ է նշել հետևյալը. չնայած համայնքների ղեկավարումը և վարչական համակարգերը հաճախ քաղաքական կատեգորաներ են համարվում, որոնք հեռու են հոգևորությունից, Բահայի հավատում նրանք նույնպես համարվում են կրոնի բաղկացուցիչ մասը, Գրվածքների նշանակալից մասը, որն անբաժան է առավել ակնհայտ ձևակերպված հոգևոր տարրերից՝ աղոթքից, մեդիտացիայից, պասից, խոնարհումից, կյանքի կրոնական նորմերից և այլն: Իրականում բոլոր նշված կողմերն անմիջական կապ ունեն վարչական գործունեության հետ, իսկ բահայի վարչակարգի մարմիններից մեկում մասնակցությունը կարող է մարդուն հոգևոր փորձ տալ, որը կբերի խորը հոգևոր բավարարվածության:

Նոր համաշխարհային վարչակարգը

Բահայիների համաշխարհային համայնքը

Ամենավառ գծերից մեկը, որը տարբերակում է բահայիների կյանքը, իր Հավատով բոլոր փնտրողների հետ կիսվելու ջերմ ցանկությունն է: Այդ կյանքի ևս մեկ առանձնահատուկ ունակությունը Վարչակարգն է, որը թույլ է տալիս յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի դառնալ միասնական, ակտիվ, ընդլայնվող Բահայի համաշխարհային համայնքի մի մասը և, լինելով այդ ընկերակցության մի մասը, անմիջականորեն միանալ տեղական, ազգային և համաշխարհային մակարդակներում Հավատի տարածման նախագծերին: Այսպիսով, որպեսզի հասկանանք, թե ինչպես են ապրում բահայիները, պետք է դիտարկել այդ Վարչակարգի մի քանի ոլորտները դրա զարգացման մեջ:

Առաջին գլխում մենք հասանք բահայիների Հերոսական կամ Առաքելական դարաշրջանի ավարտին: Ավարտվում էին Աստծո Հայտնության առաջին հիսուն տարիները և նրա ոգեշնչված մեկնաբանության 30 տարին: Ավելի քան քսան հազար նահատակներ, որոնք Շողի էֆֆենդիի կողմից «Աստված անցնում է կողքով» գրքում անվանվեցին «հերոսների գալակտիկա, որոնք արբած էին Աստծով» իրենց կյանքը տվեցին Պարսկաստանում և «իրենց հերթին լրացուցիչ խթան տվեցին Աստծո նորածին հավատի համընդգրկող շարժմանը»: Այդ ընթացքում Բահայի հավատը Երկիր մոլորակում իր շարժման ժամանակ տարածվեց երեսունհինգ երկրում:

Համաձայն Աբդուլ-Բահայի «Կամք և կտակի» (հիմնական գծերով կազմված Նրա մահից դեռ շատ առաջ) Նրա ավագ թոռը՝ Շողի էֆֆենդի Ռաբանին նշանակվեց Բահայի հավատի Պահապան: Այդ ժամանակ Շողի էֆֆենդին Օքսվորդի Բալլիոլ քոլեջի քսանչորսամյա ուսանող էր, լարված սովորում էր՝ ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, որպեսզի դառնա Բահայի գրվածքների թարգմանիչ՝ բացարձակապես չկասկածելով այն արտասովոր դերի մասին, որը նրա համար պատրաստել էր իր պապը: Նրան կանչեցին Հայֆա, որտեղ ապրել և թաղվել էր Աբդուլ-Բահան: Սուրբ երկիրը, համենայն դեպս բահայիների համար, հանդիսանում է ամբողջ երկրագնդի սիրտը, այստեղ Բահջիում՝

Աքքայից ոչ հեռու գտնվում է Բահաուլլայի դամբարանը, Կարմել լեռան լանջին գտնվող տաճարում էլ թաղված են Բաբն ու Աբդուլ-Բահան:

Շողի էֆֆենդին որպես Հավատի պահապան

Ինչպես Պահապանության օրոք, այնպես էլ այսօր՝ շատ տարիներ անց, Արդարության Համաշխարհային Տան ընտրությունից հետո Բահայի հավատի հոգևոր և վարչական կենտրոնները տարածականորեն տեղակայված են նույն վայրում: Մյուս կրոններում գործերն այլ կերպ են դասավորվել: Աննախադեպ էր կրոնի պատմության մեջ նաև Աբդուլ-Բահայի պայմանը, ով Աստծո կողմից ոգեշնչված մեկնաբանության ուժով, որը բխում էր Շողի էֆֆենդիից, պահպանեց Հավատը բաժանումից և մասնատվելուց, ինչն անցյալում քայքայել էր շատ հավատների հոգևոր ուժերը:

Շողի էֆֆենդիի Պահապանության օրոք Բահայի հավատը սկսեց տարածվել շատ երկրներում, բազմաթիվ լեզուներով թարգմանվեց բահայի գրականությունը, ծնվեց նոր համաշխարհային ընկերակցություն:

Շողի էֆֆենդիի՝ Հավատի Պահապանի հանճարին և նվիրվածությանը մենք պարտական ենք բահայի աշխարհի բոլոր հաջողություններով՝ ոգեշնչված հոգևոր սկսումներով, Համաշխարհային Վարչակարգի ծագմամբ, Սուրբ Երկրում Բահայի համաշխարհային կենտրոնի ընդլայնմամբ և զարդարմամբ: Շողի էֆֆենդիի կյանքի և ձեռքբերումների մասին, ով համեմատաբար վաղ է մահացել, քիչ բան չի ասվել: Սակայն առավել սպառիչ աշխատությունը նրա մասին «Անգին մարգարիտ» գիրքն է, որը գրել է նրա այրին, Կանադայում ծնված Ամատուլ-Բահա Ռուհիյա խանումը: Դեռ ժամանակը չէ համաշխարհային պատմության մեջ Շողի էֆֆենդիի ներդրման մասին որևէ սպառիչ գնահատական տալու համար և բահայի աշխարհից դուրս նա բավականաչափ հայտնի չէ: Բայց եթե նրա հանճարի միակ վկան նրա գրած անգլերեն գրքերը լինեին, դրանք բավական կլիներ, որ ապշեցնեն ցանկացած անկախ հետազոտողի:

Նրա գրական ժառանգությունն իր մեջ ներառում է Բահայի հավատի պատմության առաջին դարաշրջանը 181 հազար բառով, հրատարակված նամակները կազմում են մոտ 300 հազար բառանոց տեքստ: Բացի այդ կան հազարավոր նամակներ, որոնք գրվել են առանձին անհատներին, խմբերին, կոմիտեներին, Տեղական և Ազգային Հոգևոր ժողովներին:

Նա շատ էր գրում նաև արաբերենով և պարսկերենով. հավաքվել է այդ լեզուներով նրա գրած մոտ 15 հազար նամակ, դրանք միկրոնկարվել են և ուսումնասիրվել: Բահայի գրականության նրա գերազանց թարգմանություններն արաբերենից և պարսկերենից ևս երեք քառորդ միլիոն բառ են ամենանրբագեղ և արտահայտիչ անգլերենով, ինչպիսին կարելի է միայն պատկերացնել: Հենց այդ թարգմանչական աշխատանքներում ամենաբարձր մակարդակով արտահայտվեց մեկնաբանի նրա հատկանիշները. արևելագետներն ընդունում էին, որ Շողի էֆֆենդու կատարած թարգմանությունները կարդալուց հետո նրանք ավելի լավ են սկսել հասկանալ բնօրինակների իմաստը:

Սակայն Շողի էֆֆենդու հանճարը չէր սահմանափակվում գրական գործունեությամբ. նա մանրակրկիտ ուշադրություն էր դարձնում Ազգային Հոգևոր Ժողովների ուսմունքի տարածման պլաններին. նա հնարել է և նախագծել է Կարմել լեռան վրա գտնվող Բաբի դամբարանի և Աքքայի մոտակայքում գտնվող Բահջիի այգիները. խորապես ըմբռնելով մարդկային բնույթը նա խորհուրդներ էր տալիս և ոգեշնչում էր հասարակության բոլոր դասերի և կրոնական ուղղությունների մարդկանց: Այդ ամենը համակցված հասարակ անձնական կյանքի հետ, որը նա վարում էր, կազմում է Շողի էֆֆենդիի՝ Բահայի հավատի առաջին և միակ Պահապանի անհատի յուրահատկությունը:

Նա մահացել է ասիական հարբուխից 1957թ-ի նոյեմբերին Լոնդոնում, ուր եկել էր կնոջ հետ և թաղված է Լոնդոնի Նոր Սաութգեյթյան գերեզմանոցում: Նրա կյանքի և աշխատանքի շնորհիվ Պահապանությունը մնում է Բահաուլլայի Համաշխարհային կարգի «անկյունաքարերից» մեկը:

Արդարության Համաշխարհային Տունը

Չնայած Բահաուլլան իր հետևորդներին տվեց հստակ ցուցումներ և օրենքներ, որոնք հետագայում լրացուցիչ կերպով պարզաբանվում և մեկնաբանվում էին, Նա ապագայի համար նախատեսում էր նաև հասարակության մեջ այդ օրենքների և ցուցումների կիրառմանը մշտապես հետևելու անհրաժշտությունը, ինչպես նաև բահայիների կյանքի կարգավորմանը այնպիսի իրավիճակներում, որոնք ակնհայտ նշված չեն Գրվածքներում:

Բահաուլլան նման հնարավորության ստեղծումը տեսնում էր ընտրական մարմնի ստեղծման մեջ, որը կկրեր Արդարության Համաշխարհային Տուն անունը:

«Արդարության Համաշխարհային Տան» անդամների վրա ընկած է այն հարցերը միասին քննարկելու պատասխանատվությունը, որոնք անմիջականորեն գրված չեն Գրքում և այն ամենի կյանքի կոչելը, ինչը նրանց անհրաժեշտ կթվա: Աստված հիրավի կոգեշնչի նրանց իր բարեհաճությամբ, քանզի հիրավի Նա Ամենատես է, Ամենագետ»[68]:

Բահաուլլա

«Յուրաքանչյուրը պետք է դիմի Սուրբ Գրքին, իսկ այն, ինչ գրված չէ նրանում ակնհայտ կերպով, գտնվում է Արդարության Համաշխարհային Տան իրավասության տակ: Այն, ինչ կորոշի այդ մարմինը, միաձայն, թե ձայների մեծամասնությամբ, ճշմարտություն է և Աստծո կամքը»[69]:

Աբդուլ-Բահա

Այդ բարձրագույն մարմնի իրավասությունները բացատրելով՝ Աբդուլ-Բահան իր «Կամք և կտակում» գրել է.

«Քանի որ Արդարության Համաշխարհային Տունն օժտված է օրենքներ ընդունելու իրավասություններով, որոնք ակնհայտորեն ձևակերպված չեն Գրքում և վերաբերվում են մարդկանց ամենօրյա կյանքին, նա կարող է նաև չեղյալ հայտարարել դրանք... Նրան թույլատրվում է անել

դա, քանի որ այդ օրենքները Ակնհայտ աստվածային տեքստի հիմնական մասը չեն»[70]*:*

Այսպիսով Աբդուլ-Բահան իր կամքի արտահայտման մեջ կանխատեսել էր բոլոր հնարավոր տարբերակները, մասնավորապես Պահապանության ինստիտուտը՝ Գրվածքները մեկնաբանելու իրավասություններով, ինչպես նաև ընտրված Արդարության Համաշխարհային Տունը, որն օժտված է որոշումներ կայացնելու իրավունքով օրենքների կիրառման և Բահայի հավատում չարտացոլված բոլոր հարցերի վերաբերյալ: Իրար փոխլրացնող այդ երկու ինստիտուտների վերաբերյալ Հավատի Պահապանը 1934թ-ին գրել է.

«Իր ոլորտում Պահապանի մեկնաբանությունները նույնքան իրավասու և պարտադիր են, ինչպես և Արդարության Համաշխարհային Տան որոշումները, որի բացառիկ իրավունքը օրենքներին և կարգադրագրերին վերաբերող հարցերի քննարկումն է և վերջնական որոշումների կայացումը, որոնք ակնհայտորեն պարզաբանված չեն Բահաուլլայի Գրվածքներում: Նշված ինստիտուտներից ոչ մեկը երբեք չի կարողանա և չի ներխուժի մյուսի ոլորտ: Նրանցից ոչ մեկը չի փորձի սահմանափակել այն յուրահատուկ և անվիճելի իշխանությունը, որով նրանք աստվածորեն շնորհված են»[71]*:*

Այնպես ստացվեց, որ Արդարության Համաշխարհային Տան ընտրության պայմանները ձևավորվեցին միայն Բահաուլլայի հռչակման հարյուրամյա տարեդարձին (այսինքն 1963թ-ի ապրիլի 21-ին), երբ Հայֆայում հավաքվեցին այդ պահին գոյություն ունեցող 56 Ազգային Հոգևոր Ժողովների ներկայացուցիչները: Նրանք ընտրություններ անցկացրեցին համաձայն Բահաուլլայի նախախնամության և Աբդուլ-Բահայի մանրակրկիտ ցուցումների:

Արդարության Համաշխարհային Տան ղեկավարությամբ Միջազգային Ընկերակցությունը շարունակում էր աճող արագությամբ ընդլայնվել և միաժամանակ չէր թուլանում Հավատի միասնությունը: Բոլոր հասարակական ընկերությունները և ինստիտուտները, որոնք հիմնված են մարդկային համաձայնությունների վրա, բնակչության քանակի մեծացմանը զուգահեռ բաժանվելու և մասնատվելու անփոփոխ միտում

ունեն: Բահայի Համաշխարհային Կարգն իր աստվածային բնույթի շնորհիվ իր կողմնակիցների թվի աճին զուգահեռ դառնում էր ավելի միասնական, ուժեղ և արդյունավետ:

1972թ-ին Արդարության Համաշխարհային Տունը տպագրեց իր Կանոնադրությունը, որում արտացոլված էին Գրվածքներում հիշատակված նրա հիմնադրման բոլոր նախադրյալները, ինչպես նաև նպատակներն ու իրավասությունները: Ի լրացում Կանոնադրության հստակեցվեցին Միջազգային Համագումարների անցկացման մանրամասները, որոնք գումարվում են հինգ տարին մեկ, որպեսզի ընտրվեն Արդարության Համաշխարհային Տան նոր անդամներ:

1978թ-ի ապրիլին Հայֆայում կայացավ Չորրորդ Միջազգային Համագումարը, որին մասնակցում էին 123 Ազգային վարչական մարմիններից ընտրելու իրավունքով պատվիրակներ: Նրանց մեջ երկուսն անկիրթ էին՝ հարավ ամերիկյան հետամնաց ցեղից մի հյուսն և Խաղաղ օվկիանոսի կղզիներից մի կին: Հարյուրավոր մարդկանց մեջ նրանց ներկայությունը, որոնք ներկայացնում էին ռասաների, կրոնների և մշակույթների հրաշալի բազմազանություն, ցույց տվեց, որ Բահաուլլայի Համաշխարհային Վարչակարգում իր առաքելությունը կարող է իրականացնել յուրաքանչյուր ոք, ընդ որում ոչ միայն տեղական և ազգային մակարդակում, այլ անգամ միջազգային Համագումարում, որն ընտրում էր Բահայիների Ընկերակցության գլխավոր վարչական մարմնին:

1988թ-ին Միջազգային Համագումարում ներկայացված էին 148 Ազգային Հոգևոր Ժողովներից 132-ը, ինչն առավել ակնհայտորեն ցուցադրեց բազմազանության մեջ միասնության սկզբունքը:

Աստծո Գործի աջերը

Բահայի հավատի Գրվածքներում հիշատակումներ կան մարդկանց հատուկ խմբի մասին, որոնք ընտրվում են բացառիկ կարևորության գործերի իրականացման համար: Իր Կտակում Աբդուլ-Բահան պարզաբանեց նրանց վրա դրված առաջադրանքները և այդ անձանց ընտրման կարգը:

«Աստծո Գործի Աջերը սահմանվում և նշանակվում են Աստծո Գործի Պահապանի կողմից: Նրանք բոլորը պետք է լինեն Նրա ստվերը և հնազանդվեն Նրա պահանջներին»[72]*:*

«Աստծո Գործի Աջերի պարտականությունն է տարածել Աստվածային Բուրավետություն, խրատել մարդկային հոգիներին, նպաստել կրթությանը, մարդկային բնավորության բարելավմանը և բոլոր պայմաններում պահպանել սրբությունը՝ հեռու մնալով ամեն աշխարհիկից: Պահվածքով, վարվելաձևով, արարքներով, բառերով նրանք պետք է արտահայտեն Աստծո հանդեպ իրենց վախը: Աստծո Գործի բոլոր Աջերը գտնվում են Աստծո Գործի Պահապանի ղեկավարության տակ: Նա նրանց մեջ պետք է զարգացնի մշտական ձգտում՝ բոլոր ջանքերը գործադրելու Աստծո բուրավետ թանկարժեք քարերի տարածման համար, և ուղղորդի աշխարհի մարդկանց, քանի որ բացի Աստծո Ղեկավարությունից, ոչինչ նրանց չի տանի դեպի Տիեզերքի լուսավորմանը»[73]*:*

1951-1957թթ Շողի էֆֆենդին նշանակեց 32 Աստծո Գործի Աջերի: Շողի էֆֆենդիի հանկարծամահ լինելուց հետո՝ 1957թ, նրանք ստանձնեցին Համայնքի ղեկավարությունը և այդ կարգավիճակում մնացին մինչև 1963թ, երբ ընտրվեց Արդարության Համաշխարհային Տան առաջին կազմը:

Օժանդակ Կոլեգիայի Անդամները

1954թ ապրիլին Հավատի Պահապանը կանչեց Աստծո Գործի Աջերին, որոնց այդ տարի էր նշանակել և կարգադրեց յուրաքանչյուր մայրացամաքի բահայիներից ընտրել անձանց, որոնք հետագայում կոչվեցին «Օժանդակ Կոլեգիայի Անդամներ», որոնց գործառույթների մեջ մտնում էր «գործել որպես Աջերի տեղակալներ, օգնականներ և խորհրդականներ»: Օժանդակ Կոլեգիայի այդ Անդամները գործում էին Աստծո Գործի Աջերի անմիջական ղեկավարությամբ և չնայած նրանք ենթարկվում էին բահայի վարչակարգի ընդհանուր պահանջներին, նրա անդամների կազմի մեջ չէին մտնում:

Խորհրդականների մայրացամաքային կոլեգիան

Ըստ Աբդուլ-Բահայի «Կամք և կտակի» Հավատի Պահապանը պետք է իր ժառանգներից մեկին իրեն հետևորդ նշանակեր: Սակայն Շողի էֆֆենդին երեխա չուներ, բացի այդ չգտնվեց ոչ ոք, ով կհամապատասխաներ բարձր պահանջներին, որոնք ներկայացված էին Կտակում: Բացի այդ ակնհայտ էր, որ միայն Պահապանը կարող էր նշանակել Աստծո Գործի Աջերի: Երբ 1963թ ընտրվեց Արդարության Համաշխարհային Տունը, նրա առաջին գործառույթներից մեկը դարձավ Գրվածքների մանրակրկիտ ուսումնասիրությունը, որպեսզի գտնեն որևէ տեսակի ցուցումներ նոր Պահապանի ընտրման վերաբերյալ: Քանի որ առանց Պահապանի, ո՞վ կկարողանար նշանակել Աստծո Գործի Աջերի: Վերջապես 1963թ հոկտեմբերի 6-ին արվեց հետևյալ հայտարարությունը.

«Շողի էֆֆենդիի ժառանգորդի մասին հարցի պատասխանը գտնելու նպատակով մանրակրկիտ, աղոթքներով ուղեկցվող Սուրբ տեքստերի ուսումնասիրությունից հետո, ինչպես նաև երկարատև խորհրդակցություններից հետո՝ ներառյալ այդ ժամանակ Սուրբ Երկրում գտնվող Աստծո Գործի Աջերից կարծիք հարցնելը, Արդարության Համաշխարհային Տունը գտնում է, որ հաջորդ Հավատի Պահապան նշանակելու որևէ օրինական ճանապարհ չկա»[74]:

1964թ նոյեմբերին Արդարության Համաշխարհային Տունը հայտարարեց, որ վերջնականապես ուսումնասիրելով գործը, Սուրբ տեքստերը, ինչպես նաև լսելով Աստծո Գործի Աջերի կարծիքը, եկել է վերջնական որոշման, որ Աստծո Գործի Աջեր նշանակելու ոչ մի հնարավորություն չկա և չի լինի:

Աստծո Գործի Աջերին վերաբերվող ընդհանուր նշանակության հարցերով որոշումները, որոնք նախկինում դիտարկել էր բոլորի սիրելի Պահապանը այժմ վերաբերվում է Արդարության Համաշխարհային Տան իրավասությանը՝ Հավատի գլխավոր և կենտրոնական մարմնի, որին բոլորը պետք է դիմեն[75]:

1968թ Արդարության Համաշխարհային Տունը հայտարարեց տասնմեկ «Մայրացամաքային Խորհրդատուների կոլեգիաներիի» ստեղծման մասին, 3-ը Աֆրիկայի և երկու Ամերիկաների, 1-ը Ավստրալիայի և 1-ը Եվրոպայի համար, նշվում էր, որ «նրանց առաջադրանքներն իրենց մեջ կներառեն համապատասխան շրջաններում Օժանդակ կոլեգիաների աշխատանքների ուղղվածությունը, Ազգային Հոգևոր Ժողովների հետ խորհրդակցությունն ու համագործակցությունը, ինչպես նաև Աստծո Գործի Աջերի և Արդարության Համաշխարհային Տան տեղեկատվությունը այդ շրջաններում գործերի վիճակի մասին»[76]:

Այդ որոշումը Աջերին ազատեց Օժանդակ կոլեգիաների վարչական պարտականություններից: Իրավիճակն ավելի լավ պարզաբանեց Արդարության Համաշխարհային Տան ուղերձը.

«Աստծո Գործի Աջերը ամենամեծ թանկարժեք քարերից են, որին տիրապետում է բահայի աշխարհը: Ազատվելով Օժանդակ Կոլեգիաներում վարչարարությունից՝ նրանք կկարողանան կենտրոնացնել իրենց ջանքերը Հավատի ընդհանուր պաշտպանության, տարածման, բահայի ընկերակցության հոգևոր առողջության պահպանման և ամբողջ աշխարհում Բահայի հավատի կենսունակության հիմնարար առաջադրանքների վրա»[77]:

Արդարության Համաշխարհային Տուն (1968թ, հունիսի 24)

Ուսուցման Միջազգային կենտրոն

1973թ հունիսին Արդարության Համաշխարհային Տունը հայտարարեց ևս մեկ հաստատության ստեղծման մասին: Բահայի Գրվածքներում կանխագուշակված այդ մարմինը պետք է բաղկացած լիներ բոլոր Աստծո Գործի Աջերից, երեք Խորհրդատուներից և բացի բոլոր առաջադրանքներից պետք է.

«Համակարգեր, խթաններ և ուղղորդեր Խորհրդատուների Մայրցամաքային կոլեգիայի գործունեությունը, գործեր որպես կապող օղակ նրանց և Արդարության Համաշխարհային Տան միջև:

Լիովին տեղյակ լիներ ամբողջ աշխարհի գործերից և ընդունակ լիներ այդ տեղեկատվության հիման վրա հաշվետվություններ կազմել Արդարության Տան համար, ինչպես նաև խորհրդատվություն տար Մայրացամաքային Խորհրդատուների Կոլեգիային:

Գտնվեր ընկալունակ կամ դրանում կարիք ունեցող նոր շրջաններում Հավատի ուսուցման աշխատանքը տարածելու մշտական պատրաստակամության մեջ, ինչպես բահայիների միջև, այնպես էլ նրանց միջավայրից դուրս:

Հրավիրեր Արդարության Համաշխարհային Տան և Խորհրդատուների Մայրցամաքային կոլեգիայի ուշադրությունը այդպիսի հնարավորությունների հանդեպ՝ Արդարության Համաշխարհային Տանը իր գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելով»[78]*:*

Արդարության Համաշխարհային Տուն

Տեղական Հոգևոր Ժողովներ

Իր գրվածքներում Բահաուլլան հաճախ էր հիշատակում «Տեղական Արդարության Տների» մասին: Օրենքների Գրքում Նա գրում է. *«Աստված հրամայել է, որ յուրաքանչյուր քաղաքում կառուցվի Արդարության Տուն, որում Բահա թվին հավասար քանակությամբ (9) խորհրդատուներ կհավաքվեն: Նրան պետք է Ողորմածի վստահված անձինք լինեն մարդկանց միջև և իրենց դիտարկեն որպես Աստծո կողմից երկրի վրա բոլորի բարիքի համար նշանակված պահապաններ»*[79]:

Աբդուլ-Բահան այդ մարմիններին անվանում էր «Հոգևոր Ժողովներ» և մասնավորապես գրում էր.

«... Այդ Հոգևոր Ժողովները փայլատակող ջահեր և երկնային այգիներ են, որոնց սրբության բուրմունքները տարածվում են բոլոր վայրերով մեկ, իսկ գիտելիքների կրակները թափվում են ամբողջ գոյի վրա: Հիրավի նրանք մարդկային առաջընթացի հզոր աղբյուրներ են բոլոր ժամանակներում և ցանկացած պայմաններում»[80]:

Այսպիսով Տեղական Արդարության Տան ստեղծումը ցանկացած բահայիների խմբի նպատակը պետք է լինի, որտեղ էլ նրանք գտնվեն: 1974թ Արդարության Համաշխարհային Տունը ընդլայնեց Տեղական Հոգևոր Ժողովների իրավասությունները.

«Տեղական Հոգևոր Ժողովների Աստվածատու ինստիտուտը գործում է մարդկային հասարակության առաջին մակարդակում և իրենից ներկայացնում է Բահաուլլայի Նոր Կարգի հիմնական վարչական միավորը:

Այդ ինստիտուտը հենվում է ընտանիքների և առանձին անհատների վրա, որոնց նա պետք է մշտապես քաջալերի միավորվել բահայիների ընկերակցությունում, որը թարմացվում և պաշտպանվում է Բահաուլլայի Հայտնության օրենքներով, ցուցումներով և սկզբունքներով: Այդ ինստիտուտը պաշտպանում է Աստծո Գործը, այն գործում է բահայի հոտի սիրող հովվի նման:

Տեղական Հոգևոր Ժողովների ուժեղացումը և նրանց դերի զարգացումը կենսական կարևորության նպատակ է… դրանք ցույց են տալիս բահայի համայնքի համերաշխությունը և բոլոր աճող տարբերակիչ գծերը՝ դեպի Հավատ գրավելով ավելի շատ քանակությամբ մտածող մարդկանց և ապաստան տալով հոգեպես սնանկացած, ներկա մեռնող կարգի միլիոնավոր զոհերին, որոնք չունեն ղեկավարություն և հույս…

Ընկերները պետք է Տեղական Հոգևոր Ժողովներին ցուցաբերեն սրտաբաց օգնություն առաջին հերթին նրա անդամների ընտրության քվեարկությանը մասնակցությամբ, իսկ հետո Հոգևոր Ժողովների նախագծերը և պլանները եռանդով կյանքի կոչելով, նրանց դիմելով վտանգի և դժվարությունների ժամանակ, նրանց գործերի համար աղոթելով, նրանց համբավի և ձեռքբերումների համար ուրախանալով: Տեղական Հոգևոր Ժողովը գլխավոր պարգևն է, Աստծո շնորհը, որը պետք է յուրաքանչյուր համայնք աճեցնի, սիրի, որին նա պետք է օգնի և հնազանդվի, որի համար նա պետք է աղոթի:

Համայնքի հիմնարար և երջանիկ կյանքը, որին կարելի է հասնել Տեղական Հոգևոր Ժողովի ճշմարիտ արդյունավետության պայմաններում, ապահովում է ամուր հիմք, որի վրա ընկերները կկարողանան կառուցել իրենց ոգու թարմությունը, նրանց անհրաժեշտ ուժն ու հոգատարությունը, երբ նրանք իրենց համաքաղաքացիներին են տանում Աստվածային Ուղերձը և իրենց կյանքը նվիրում են Նրա բարեհաճ սկզբին»[81]:

Արդարության Համաշխարհային Տուն

(1974թ ապրիլ)

Բացառությամբ հատուկ դեպքերի Տեղական Հոգևոր Ժողովները ընտրվում են Ռիզվանի տոնի առաջին օրը (այսինքն ապրիլի 20-ի արևամուտից սկսած մինչև ապրիլի 21-ի արևամուտը): Ժողովի անդամներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, առանց թեկնածուների նախնական գրանցման և նախընտրական քարոզարշավների, այն քաղաքի, շրջանի, գյուղի կամ այլ տարածական միավորի բոլոր հասուն տարիքի բահայիների միջից, որոնց վերաբերվում է Տեղական Հոգևոր

ժողովը: Այդ շրջանները տարբերվում են տարբեր երկրներում, բայց դա միշտ այդ երկրում ընդունված ամենափոքր վարչական միավորն է:

1923թ մարտին Շողի էֆֆենդին ձևակերպեց Հոգևոր ժողովների որոշ գործառույթներ.

«Հավատի տարածումը, նրա ուղղվածությունը, ուղիները և միջոցները, մասշտաբը, խորությունը, չնայած նշանակալից են գործի համար, սակայն իրենք իրենցով միակ ոլորտը չեն հանդիսանում, որի վրա պետք է կենտրոնացվի այդ ժողովների ամբողջ ուշադրությունը:

Տեղական Հոգևոր ժողովները պետք է խթանեն նրա անդամների միջև համաձայնության և ընկերության զարգացմանը, հարթեն ամեն տեսակի անվստահության, սառնության և օտարվածության հետքեր սրտերում և դրա փոխարեն ակտիվություն և սրտաբաց համագործակցություն ներմուծեն Գործին ծառայելու շահերում: Ժողովները պետք է կարողանան ցանկացած ժամանակ օգնության ձեռք մեկնել աղքատին, կարիքավորին, հիվանդին, որբին, այրուն անկախ մաշկի գույնից, հասարակական դիրքից և հավատից: Նրանք պետք է ամենուրեք խթանեն երտասարդության նյութական և հոգևոր լուսավորությանը, երեխաների կրթությանը, բացեն, որտեղ հնարավոր է բահայիների կրթօջախներ, կազմակերպեն նրանց աշխատանքը և հետևեն նրանց՝ լավագույն պայմաններ ապահովելով նրանց զարգացման և գործունեության համար…»[82]

Ազգային Հոգևոր ժողովներ

Իր «Կամք և Կտակում» նկարագրելով Արդարության Համաշխարհային Տան ընտրությունների կարգը՝ Աբդուլ-Բահան հիշատակում է «երկրորդական Հոգևոր ժողովների» մասին: 1923թ Հավատի Պահապանը կոչ արեց մի շարք երկրների իրենց մոտ ստեղծել Ազգային Հոգևոր ժողովներ: Նրա նամակում մենք կարդում ենք.

«Ազգային ժողովների անմիջական նպատակն է խթանել, միավորել և համակարգել ընկերների և Տեղական ժողովների բազ-

մակողմանի գործունեությունը մշտական անձնական քննարկումների միջոցով, Սուրբ Երկրի հետ սերտ և մշտական կապի միջոցով սկսումներ և Հավատի գործերով ընդհանուր ղեկավարություն իրականացնել այդ երկրում:

Ազգային Ժողովը ծառայում է նաև մեկ այլ նպատակի, ոչ պակաս կարևոր, քան առաջինը, քանի որ ժամանակի ընթացքում այդ Ժողովը պետք է վերածնավորվի Ազգային Արդարության Տան..., որը համաձայն Կտակի ակնհայտ տեքստին այլ երկրների Ազգային Հոգևոր Ժողովների հետ միասին Արդարության Համաշխարհային Տան անդամների անմիջական ընտրություններ կիրականացնի, այն բարձրագույն Ժողովի, որը կղեկավարի շարժման գործերը, կկազմակերպի և կմիավորի նրանց ամբողջ աշխարհում»[83]*:*

Հաջորդ տարիներին հայտնվեցին բազմաթիվ Ազգային Հոգևոր Ժողովներ, որոնց գործառույթները Պահապանի ղեկավարությամբ առավել հստակ են դարձել, իսկ գործունեությունը ուժ և հեղինակություն է ձեռք բերել: Ցանկացած երկրում Ազգային Հոգևոր Ժողովի ստեղծումից հետո այն պետք է ձգտի որքան հնարավոր է արագ օրինականության իրավունքներ ձեռք բերել բահայի վարչակարգի միջազգային չափանիշները մարմնավորելու նպատակով այն տեսքով, որով նրանք հստակ արտահայտված են Գրվածքներում: Պաշտոնական դիրք կարող են ստանալ նաև Տեղական Հոգևոր Ժողովները, որից երևում է նրանց արդյունավետության և կայունության զարգացման ապացույցը:

Մեծ Բրիտանիայի Ազգային Հոգևոր Ժողովը գոյություն ունի արդեն 64 տարի. մինչև 1972թ այն ներկայացնում էր Բրիտանական կղզիների ամբողջ տարածքը, իսկ հետո Իռլանդիայի հանրապետության Ազգային Հոգևոր Ժողովի հայտնվելուց հետո սկսեց ներկայացնել միայն Միացյալ Թագավորությունը: Այն իրավաբանական անձ է դարձել 1939թ:

Համագումարներ

Ազգային Ժողովն ընտրվում է պատվիրակների կողմից, որոնք սովորաբար հավաքվում են ազգային համագումարում, որն անցկացվում է Ռիզվանի տոնի ընթացքում (այսինքն ապրիլի 21-ից մինչև մայիսի 2-ը): Համագումարն ունի երեք հիմնական գործառույթներ. սկզբում ընդունվում է անցյալ տարվա Ազգային Ժողովի հաշվետվությունը, հետո ընտրվում է նոր Ազգային Ժողովի կազմը և վերջապես խորհրդակցություն է անցկացվում նորընտիր կազմի մասնակցությամբ:

Պաշտոնակատար անձինք

Բոլոր Հոգևոր Ժողովները Ազգային և Տեղական իրենց ինը անդամից ձայների մեծամասնությամբ ընտրում են Նախագահի, Նախագահի Տեղակալի, Քարտուղարի և Գանձապահի: Միաժամանակ Ազգային Ժողովի ոչ մի անդամ, ով զբաղեցնում է այս կամ այն պաշտոնը, չունի այլ իրավասություններ, բացի նրանցից, որոնք նրան տրված են Ազգային Ժողովի կողմից:

Բահայիների ընտրությունները

Բահայիների ընտրությունների ընթացակարգը, որը հաստատել է Պահապանը Ամերիկայի բահայիների համայնքին իր վաղ ուղերձներում, այնքան է տարբերվում քաղաքականությանը հայտնի բոլոր ընտրական համակարգերից, որ նրանց վրա կարելի է ավելի մանրակրկտորեն կանգ առնել: Այսպիսով ընտրությունները բահայիների կյանքի ևս մեկ յուրահատուկ ոլորտ է: Նրանցում իրացվում է պարտականությունների և ազատությունների հավասարակշռությունը, որի նմանը չկա աշխարհի ոչ մի քաղաքական համակարգում: Հավասարակշռությանը հասնում են նրա շնորհիվ, որ մի կողմից գոյություն ունի Աստծո Խոսքի անհերքելի հեղինակություն, իսկ մյուս կողմից իր խղճի համաձայն ցանկացածի համար քվեարկելու բացարձակ ազատություն: Միաժամանակ ինչպես տեղական, այնպես էլ ազգային և համաշխարհային մակարդակներում ձևավորվում է կառավարման համակարգ, որը նմանօրինակներ չունի Բահայի համաշխարհային համայնքից դուրս:

Հանգիստ և աղոթքի միջավայրում ընտրությունների մասնակիցը գաղտնի լրացնում է իր քվեաթերթիկը, միաժամանակ նա ազատ է որևէ տեսակի ճնշումից և վստահ է քվեարկության ճշմարտացիության վրա: Ով էլ որ ընտրվի ընտրությունների արդյունքում, բոլոր ընտրողներն անհապաղ և ամբողջ սրտով ընդունում են այդ մարդուն: Քվեների հաշվարկն իրականացվում է մեծամասնության սկզբունքով (բացառությամբ պաշտոնակատար անձանց ընտրությունը, երբ անհրաժեշտ է հավաքել ձայների բացարձակ մեծամասնությունը): Հաջորդ հատվածը, որը գրվել է 1925թ և վերաբերվում է կոնկրետ Ազգային Հոգևոր Ժողովի ընտրություններին, այնուամենայնիվ տալիս է ցանկացած մակարդակում բահայիների ընտրությունների նկարագիրը.

«Որքան մեծ է պատիվը և որքան դժվարին պատվիրակների առաջադրանքը, ովքեր հավաքվել են, որ ընտրեն իրենց ներկայացուցիչներին՝ նրանց, ովքեր իրենց ձեռքբերումներով կազնվացնեն և կհարստացնեն Գործի տարեգրքերը: Եթե մենք մեր հայացքն ուղղենք բահայիների ժողովի անդամների բարձր հատկանիշներին, մենք կլցվենք սեփական անարժանության և շփոթմունքի զգացմունքով, և միայն միտքն այն մասին, որ եթե մենք արժանորեն իրականացնենք մեր առաքելությունը, թերությունները և զրկանքները կփոխհատուցվեն Նրա բաեհաճության և հզորության ամենահաղթ ոգով, միայն այդ միտքն արդեն մխիթարություն է: Այդ պատճառով ընտրված պատվիրակներն առանց անձնական շահի և նախապաշարմունքների հետքի, անկախ նյութական շահի, կանգ կառնեն մեզանից միայն նրանց անունների վրա, ով իր մեջ համակցում է անհրաժեշտ հատկանիշները՝ անվիճելի հավատարմությունը, անձնուրաց նվիրվածությունը, փորձառու խելքը, ճանաչված ընդունակությունները և հատուն փորձը»[84]:

Շոգի էֆֆենդի

Բարձր վարչական չափանիշը

Բահայի ցանկացած վարչական մարմնի անդամ ընտրված լինելով՝ իր առջև որոշակի կերպար ունի, որին ձգտում է հետևել: Թվում է դրան համարյա անհնարին է հասնել, բայց այն ցանկացած Հոգևոր ժողովի նպատակն է անկախ նրանից, թե ով է այն կազմում՝ Լոնդոնից, Նյու-Յորքից, Տոկիոյից, Թեհրանից, թե Բուենոս Այրեսից մտավորականները, կենտրոնական Աֆրիկայի ջունգլիների պիգմեյական ցեղի անդամները, ֆիննական լապլանդները, թե Ավստրալիայի աբորիգենները: Այդ չափանիշի որոշ տարրեր կրճատ նկարագրված են ներքոհիշյալ մեջբերումներում:

«Պետք է հիշենք, որ Գործի հիմքում ընկած է անհատի ինքնարտահայտման իրավունքը, իր հայացքները և համոզմունքներն արտահայտելու ազատությունը…

Նաև պետք է հաշվի առնենք, որ Աստծո Գործի հիմքում ընկած է ոչ թե՛ բռնատիրական իշխանությունը, այլ հեզ ընկերությունը, ոչ թե ամենաթողության իշխանությունը, այլ անկեղծ սիրո խորհրդակցության ոգին… Ոչ մի կերպ չկորցնելով բահայի ճշմարիտ ոգին՝ կարելի է հույս ունենալ միավորել կարեկցանքի և արդարության, ազատության և հնազանդության, անհատի իրավունքների սրբության և ինքնազոհության, զգոնության, համեստության, խելամտության սկզբունքները մի կողմից և եղբայրությունը, անկեղծությունը, քաջությունը մյուս կողմից:

Նրանց պարտականությունները, ում ընկերները գիտակցաբար և ազատորեն ընտրել են որպես իրենց ներկայացուցիչներ, ընտրյալների վրա դնում է ոչ պակաս պատասխանատվություն, քան ընտրողների վրա: Ընտրյալների գործը թելադրելը չէ, այլ խորհրդակցելը, ընդ որում ոչ միայն Ժողովի անդամների հետ, այլ որքան հնարավոր է ավելի լայն շրջանակի ընկերների հետ, որոնց նրանք ներկայացնում են: Ժողովի անդամները պետք է իրենց տեսնեն որպես գործիքներ, որոնք նախատեսված են Աստծո Գործի ավելի լավ և արժանի իրականացման համար: Նրանք չպետք է երևակայեն, թե իրենցով զարդարում են Աստծո Գործի մարդկանց, զգալիորեն գերազանցելով այլոց իրենց ընդունակություններով կամ արժանապատվությամբ, որ իրենք միակն են, որ ծառա-

յում են Գործի ուսմունքին և նրա սկզբունքներին: Նրանք իրենց առաջադրանքներին պետք է վերաբերվեն բացառիկ համեստությամբ և ձգտեն իրենց հայացքների ընդարձակությամբ, արդարության և պարտքի սուր զգացումով, անկեղծությամբ, բարեկեցությանը, ընկերների շահերին, Գործին, մարդկությանը լիովին նվիրվածությամբ գրավել ոչ միայն վստահություն և նրանց ճշմարիտ աջակցությունը, ում նրանք ծառայում են, այլև ստանան նրանց հարգանքը և անկեղծ սերը: Նրանք պետք է հետևողականորեն խուսափեն բացառիկության ոգուց, գաղտնիության մթնոլորտից, ազատվեն գերազանցության դիրքից, իրենց քննարկումներից դեն նետեն նախապաշարմունքների և կրքերի բոլոր ձևերը:

Նրանք պետք է ողջամտության սահմաններում տեղեկացնեն ընկերներին իրենց գործերի մասին, ծանոթացնեն նրանց իրենց պլաններին, կիսվեն նրանց հետ իրենց խնդիրներով և անհանգստություններով, լսեն նրանց խորհուրդները և խորհրդատվությունները: Երբ նրանք ստիպված լինեն գալ ինչ որ որոշման, անկողմնակալ, ուշադիր և սրտաբաց խորհրդակցությունից հետո նրանք պետք է աղոթքներով դիմեն Աստծուն, ազնիվ և անկողմնակալ ընտրություն կատարեն և ենթարկվեն մեծամասնության ձայնին, ով ինչպես ասում է մեր Ուսուցիչը, ճշմարտության ձայնն է, որը պետք է ոչ թե վիճարկել, այլ ամբողջ սրտով կյանքի կոչել: Այդ ձայնին ընկերները պետք է ամբողջությամբ աջակցեն և համարեն այն միակ միջոցը, որն ապահովում է Գործի պաշտպանությունն ու ծաղկումը…

Թող յուրաքանչյուր հետաքրքրված ընթերցողի համար պարզ լինի, որ ամենագլխավոր և սուրբ առաջադրանքների մեջ նրանց համար ում պատիվ է վիճակվել սկսել, ուղղորդել և կարգավորել Հավատի գործերը, կան առաջադրանքներ, որոնք նրանցից պահանջում են վաստակել նրանց սերն ու վստահությունը, ում ծառայելու բախտ է վիճակված: Նրանց պարտքն է ուսումնասիրել հետաքրքրվող կողմերի հայացքները, ծանոթանալ նրանց դիրքորոշումներին, անձնական համոզմունքներին, ում բարեկեցության ամրապնդումը նրանց սուրբ պարտականությունն է…»[85]

Շողի էֆֆենդի

Բահայիների խորհրդակցությունը

Բահաուլլայի ուսմունքը խորհրդակցության և խորհրդակցական սկզբունքի մասին ծանոթ իրերին նոր խորություն է տալիս: Բահայիների խորհրդակցությունը միաժամանակ նրա մասնակիցների հոգևոր աճի գործընթաց է և որոշումների կայացման գործնական մեթոդ, որը հարմարեցված է համատեղ գործողությունների հանդեպ մարդու ընդունակությունների հետ: Խորհրդակցության սկզբունքի օգնությամբ, խորհրդակցություն վարելու հմտությունների շնորհիվ բահայիները ստանում են ճշմարտությունը, բարդ խնդիրների լուծումները գտնելու և նոր գաղափարներ առաջ քաշելու հնարավորություն: Այդ գործընթացը բահայիները ձգտում են օգտագործել իրենց կյանքի բոլոր ոլորտներում, կիրառել ընտանեկան և անձնական խնդիրների լուծման համար, իրենց աշխատանքում և իրենց համայքների գործունեությունում: Աբդուլ-Բահան գրել է. *«... խորհրդակցությունը ղեկավարման լույս է, որն իր ետևից է տանում և շնորհում է ըմբռնմամբ»*[86]: Դրանում է բարեկեցության բանալին և՛ առանձին մարդկանց, և՛ խմբերի համար, սակայն միայն վերջին ժամանակներում է մարդկությունը բավականին հասունացել այդ սկզբունքի ըմբռնման համար:

Բահայիները խորհրդակցության ժամանակ զարգացնում են իրենց հոգևոր և մտավոր ունակությունները և սովորում են ներդաշնակորեն համագործակցել այլոց հետ: Հեշտ չէ սովորել այդ արվեստը, քանի որ այն պահանջում է հոգևոր ջանքեր յուրաքանչյուր մասնակցից: Աբդուլ-Բահան գրել է. *«Ճշմարիտ խորհրդակցությունը կարծիքների հոգևոր փոխանակում է սիրո մթնոլորտում»*[87]: Չկան կուսակցություններ, խմբեր, խմբակցություններ, ոչ ոք չպետք է ապահովի իր գաղափարների աջակցությունը կամ պաշտպանի դրանք մյուսներից: Մշտապես դիմելով հոգևոր սկզբունքների ժողովածուին, որոնք առկա են Գրվածքներում՝ բահայիները մեծ ուշադրություն են դարձնում փաստերին անաչառ մոտեցմանը խորհրդակցությունից առաջ: Նրանում մասնակցող բոլոր անդամները, իրենց մտքերը, դատողությունները, կարծիքներն են բերում և սովորում են բաժանվել նրանցից այնպես, կարծես դրանք չեն պատկանում իրենց, դրանք դառնում են ընդհանուր ձեռքբերում: Այսպիսով տեղ ունի սեփական «եսից» հրաժարվելու գործընթաց: Նման մոտեցումով կարելի է հասնել ավելի մեծ օբյեկտիվության, քան՝ երբ

մարդիկ պայքարում են այլոց գաղափարների հետ, ձգտելով հաջողության հասնել ներկա գտնվողների աջակցության ձեռքբերման միջոցով:

Հավասար ուշադրություն է պետք դարձնել բոլոր առաջարկներին՝ անկախ այնպիսի պաշտոնական պահերից, ինչպես կրթությունն է և նրա նյութական դիրքը, ով արտահայտել է դրանք: Բահաուլլան սովորեցնում է առանձնացնել մտքերը անհատներից: Միաժամանակ ընդունում է, որ կարծիքները հաճախ բախվում են իրար հետ: Աբդուլ-Բահան բացատրում էր, որ *«Ճշմարտության փայլող կայծը հայտնվում է միայն տարբեր կարծիքների բախումից»*[88]: Բահայիների խորհրդակցությունը միջոց է, որի օգնությամբ կարծիքների նման բախումը բերում է արդյունավետ և պտղաբեր արդյունքների, խորհրդակցողների միջև ներդաշնակությունն այդ դեպքում մեծանում է:

Սեփական խղճի հետ համապատասխան իր հայացքների արտահայտման ազատությունը բահայիների խորհրդակցության նշանակալից գիծն է, բայց այդ միջոցը պետք է օգտագործվի չափավորությամբ, քաղաքավարությամբ և առանց այլոց կարծիքների նվաստացման: Բարերար մթնոլորտում, որը ստեղծվում է աղոթքով, անհատական հոգևոր ջանքերով և սրտերի «երկնային թագավորության» փոխադարձ դիմելով ազատ է արձակվում նոր ստեղծագործական էներգիա: Հաճախ վերջնական որոշումը չի նմանվում այն առաջարկությանը, որն առաջ է քաշվում առանձին անհատների կողմից. խորհրդակցության ընթացքում բացարձակապես նոր միտք է ծնվում:

Բահայի համայնքներում կիրառվում է նաև այնպիսի իրավիճակ, որի ժամանակ յուրաքանչյուրը կարող է մասնակցել քննարկումներին, ընդ որում նման մասնակցությունն անգամ ողջունվում է: Երբեմն խորրդակցությունները կազմակերպվում են բահայիների խմբի կողմից որևէ իրավիճակ ավելի լավ հասկանալու և բոլորի կարծիքները լսելու նպատակով: Սակայն երբ խոսքը գնում է Հոգևոր Ժողովի կողմից որոշումներ կայացնելու անհրաժեշտությանը, ուժի մեջ է մտնում մեկ այլ սկզբունք: Երբ Հոգևոր Ժողովի որոշումն ընդունված է, յուրաքանչյուրը պետք է ամբողջ սրտով նրան աջակցի և գործի ընդունված որոշմանը համապատասխան, եթե անգամ նա արտահայտվել է կամ քվեարկել է

դրան դեմ: Չնայած, որ նախընտրությունը տրվում է միաձայն որոշումներին, դա պարտադիր պահաջ չէ, երբեմն պետք է լինում քվեարկել: Բոլոր Հոգևոր Ժողովները ղեկավարվում են մեծամասնության քվեարկության արդյունքները կամավոր ընդունելու սկզբունքով: Աբդուլ-Բահան բացատրում էր, որ բահայիները պետք է *«ցանկացած հարցում ճշմարտություն փնտրեն և չհամառեն սեփական կարծիքի վրա, քանի որ համառությունը և չխոսնակությունը վերջ ի վերջո տանում են բաժանության և վեճի, իսկ ճշմարտությունը թաքնված է մնում»*[89]*:*

Հեշտ չէ սովորել խորհրդակցել, բայց դա Բահայիների Համաշխարհային Կարգի նշանակալից տարր է: Աբդուլ-Բահան գրում է. *«Խորհրդակցության սկզբունքը աստվածային շենքի հիմնարար տարրերից մեկն է»*[90], իսկ Շողի Էֆֆենդին գրել է, որ «անկեղծ և ազատ խորհրդակցությունը այդ չլսված կարգի հիմքն է»[91]:

Տասնիներորդ օրվա հանդիպումները

Ներքևում դիտարկելով բահայիների օրացույցը՝ մենք կտեսնենք, որ այն ունի 19 ամիս: Ցանկացած բահայի ամսվա սկզբում անցկացվում է բավականին անսովոր հանդիպում: Այդ միջոցառումը գլխավորապես վարչական բնույթ է կրում, որի ընթացքում Տեղական Հոգևոր Ժողովը խորհրդակցում է համայնքի հետ, ծանոթացնում է նրան իր պլանների հետ և փնտրում է այն հարցերով խորհուրդներ, որոնք ընդհանուր հետաքրքրություն են ներկայացնում: Այդ հավաքը կոչվում է Տասնիներորդ օրվա հանդիպում: Այն բաղկացած է երեք մասից և այնպես է կազմակերպված, որ հենց նրանում է արտահայտվում հոգևոր միասնությունը և համայնքի հոգևոր վերելքը: Տասնիներորդ օրվա հանդիպմանը կարող են մասնակցել միայն «պաշտոնապես ընդունված» բահայիները, սակայն ողջունվում է նաև այն բահայիների մասնակցությունը, որոնք իրենց հարազատ համայնքից դուրս են գտնվում: Հատկապես տոնական է առաջին մասը, երբ երգվում են, ընթերցվում կամ հռչակվում են բահայի Գրվածքներից ընտրված հատվածներ: Այնուհետև դրան հետևում է երկրորդ մասը, որի ընթացքում Տեղական Հոգևոր Ժողովի անդամների ղեկավարությամբ խորհրդակցում են, հաշվետվություններ

են ներկայացվում Հոգևոր Ժողովի և նրա կոմիտեների գործունեության տարբեր տեսակների մասին, ինչպես նաև ընթերցվում է գանձապահի զեկույցները տեղական հիմնադրամի մասին: Երբ այդ մասն ավարտվում է, ընկերներն անցնում են հյուրասիրության, որը կախված հանգամանքներից կարող է տարբերակվել ջրով հասարակ բաժակից մինչև հիմնավոր ճաշ:

Այսպիսով բահայի համայնքի կյանքի ևս մեկ տարբերակիչ գիծ է Տասնիներորդ օրվա հանդիպումները:

Տասնիներորդ օրվա հանդիպումների հետ կապված հետաքրքիր է նկատել, որ բահայի երեխաները մինչև 15 տարեկան կարող են ազատորեն հաճախել դրանց: Հաճախ ծնողները գրանցում են իրենց երեխաներին որպես բահայիների՝ միաժամանակ նրանց ուսուցանելով օրենքներ, ուսմունքներ և բոլոր համաշխարհային կրոնների պատմություն: Սակայն 15 տարեկանում մարդը պետք է հաստատի որպես բահայի իր պարտավորությունները: Այնուամենայնիվ ինչպես մենք տեսնում ենք, նա չի կարող մասնակցել բահայիների ընտրությանը մինչև 21 տարին լրանալը: Երիտասարդ տղան կամ աղջիկը, ով մեծ է 15 տարեկանից և ով չի հաստատել իր պատկանելիությունը Բահայի հավատին, Տասնիներորդ օրվա հանդիպումներին չի կարող մասնակցել, եթե անգամ նրա ծնողները բահայի են:

Եթե բահայի համայնքն ուրախ, եռանդուն և արդյունավետ է անցկացնում Տասնիներորդ օրվա հանդիպումները, դա ակտիվ, աճող և համախմբված համայնքի նշան է:

Օժանդակ կոլեգիայի անդամների օգնականները

Աստծո Գործի Աջերը և Խորհրդատուների կոլեգիաներն աշխատում են անմիջականորեն Ազգային Հոգևոր Ժողովների հետ, Օժանդակ կոլեգիայի անդամները Տեղական Հոգևոր Ժողովների և առանձին բահայիների հետ շփման մեջ են: Աջերը և Խորհրդատուները նշանակվել են համապատասխանաբար Պահապանի և Արդարության Համաշխարհային Տան կողմից և չեն պատկանում այսպես կոչված վարչակարգի «ընտրովի կողմին», նրանք չեն կարող ընտրվել որպես Ազգային Հոգևոր Ժողովի անդամներ: Կոլեգիայի անդամներն այնուամենայնիվ կարող են նշանակել «Օգնականների» առանձին առաջադրանքների կատարման համար, և այդ Օգնականները կարող են մնալ ցանկացած ընտրված վարչական պաշտոնում, կամ նշանակվել ցանկացած կոմիտեի անդամ, ինչպես տեղական, այնպես էլ ազգային մակարդակում:

1969թ հոկտեմբերի 1-ին Արդարության Համաշխարհային Տունը լրացուցիչ պարզաբանումներ է տվել ընտրված և նշանակովի պաշտոնների համեմատական դերի մասին.

«Համապատասխան կոմիտեների կողմից աջակցվող Հոգևոր Ժողովների՝ իրավասությունների մեջ մտնում է ուսմունքի տարածման աշխատանքների կազմակերպումն ու ուղղորդումը. այդ առաջադրանքների շրջանակում նրանք իհարկե կարող են անել ամեն հնարավոր բան համայնքի բոլոր անդամների քաջալերման և ոգեշնչման համար: Դրա հետ մեկտեղ Հոգևոր Ժողովները, որոնք ծանրաբեռնված են վարչական գործերով և Ուսմունքի տարածմամբ, ինչպես նաև բահայի կյանքի այլ որոտներով, անխուսափելիորեն ժամանակ չեն ունենա հավատացյալներին ոգեշնչելու համար:

Որոշումներ կայացնելու իրավասությունները պատկանում են Հոգևոր Ժողովներին, իսկ նրանք ուղղորդում են հավատացյալներին, որոնք իրենց հերթին իրենց մեջ մարմնավորում են այդ որոշումների իրականացման առաջնային ուժը: Օժանդակ Կոլեգիաների գլխավոր առաջադրանքն է օգնել կյանքի կոչելու այդ ուժը և կազմակերպելու այն: Գործունեության այդ տեսակը կենսական կարևորություն ունի, այդ պատճառով, եթե Օժանդակ կոլեգիայի անդամներն ի վիճակի են

արդյունավետորեն իրականացնել այդ գործառույթները, նրանք պետք է հնարավորության դեպքում խուսափեն վարչական աշխատանքներում մասնակցությունից»[92]*:*

Այսպիսով Օգնականների աշխատանքն ուղղված է Օժանդակ կոլեգիաներին աջակցությանը «նախաձեռնությունների արտահայտմանը և համապատասխան առաջադրանքերի կատարմանն ուղղված գործունության ուղղորդմանը», ինչպես նաև բահայիներին խրախուսելու՝ դիմելու Օգնականների կոլեգիային ոգեշնչման և Հոգևոր ժողովներին ղեկավարության և աջակցության համար:

Տեղական և ազգային կոմիտեները

Ազգային և Տեղական Հոգևոր ժողովների անդամներն ընտրվում են իրենց հատկություններով՝ նվիրվածությամբ, հավատարմությամբ, ընդունակություններով, փորձով, բայց նրանք հազվադեպ են մասնագետ լինում հասարակական գործունեության բոլոր ոլորտներում: Այդ պատճառով Հոգևոր ժողովները մասնագետների կոմիտեներ են նշանակում: Կոմիտեները պատասխանատու են միայն իրենց ընտրած Հոգևոր ժողովների առջև: Նրանք հանդիպումներ են անցկացնում, ընտրում են պաշտոնակատար անձանց, խորհրդակցում են իրենց գործունեության հարցերով, սահմանում են իրենց իրավասությունների շրջանակները, մշակում են իրենց նշանակող վարչական մարմինների համար հաշվետվություններ: Բահայի համայնքում այսպիսով պատասխանատվությունն ընկած է ոչ թե առանձին անհատների վրա, այլ ընտրված վարչական մարմինների վրա, իրենց հերթին այդ մարմինները ձգտում են օգտագործել համայնքի անդամների փորձը, եռանդը և խանդավառությունը, որպեսզի յուրաքանչյուրը կարողանա լիարժեք մասնակցություն ունենալ իր համար հետաքրքրական գործունեության որևէ տեսակում: Այդ անձնական մասնակցությունը և պատասխանատվությունը բահայի կյանքի ևս մեկ առանձնահատուկ և հետաքրքրաշարժ կողմն է:

Երկու սյուն

Այսպիսով Բահաուլլայի համաշխարհային Վարչակարգում կա երկու կողմ կամ երկու մաս: Մի կողմից դա «նշանակովի» մասն է, որի մեջ մտնում են Հավատի Պահապանը, որը նշված է Աբդուլ-Բահայի «Կամք և կտակում», Աստծո Գործի Աջերը, որոնք նշանակվում են Պահապանի կողմից, Խորհրդատուները, որոնք նշանակվում են Արդարության Համաշխարհային Տան կողմից, Օժանդակ Կոլեգիայի անդամները, որոնք նշանակվում են Խորհրդատուների կողմից, Օգնականները, որոնք նշանակվում են Օժանդակ Կոլեգիայի անդամների կողմից: Վարչական համակարգի տեսանկյունից շարքային բահայիներն ընտրում են Տեղական Հոգևոր Ժողովներ, նրանց պատվիրակներն ընտրում են Ազգային Հոգևոր Ժողովներ, իսկ վերջիններիս անդամներն ընտրում են Արդարության Համաշխարհային Տունը:

Բահայի հավատի Պահապանը 1934թ փետրվարի 8-ի իր նամակում, որը հետագայում տպագրվել է «Բահաուլլայի կտակը» անվամբ, խոսում էր երկու ինստիտուտների մասին՝ Պահապանության և Արդարության Համաշխարհային Տան որպես «երկու սյուների, որոնք պահպանում են հզոր վարչական շինությունները»: Այդ նամակի պարբերություններից մեկում Պահապանը գրել է.

«… Բահաուլլայի վարչակարգի այդ երկու իրար փոխլրացնող հաստատությունները պետք է դիտարկել որպես աստվածային՝ իրենց ծագումով, հիմնարար գործառույթներով և փոխլրացնող՝ նպատակներով և առաջադրանքներով: Նրանց հիմնարար, ընդհանուր նպատակն է ապահովել այն աստվածատուր իշխանության անընդհատությունը, որը բխում է մեր Հավատի Ակունքից, պահպանել նրա հետևորդների միասնությունը և պահպանել նրա ուսմունքների ամբողջականությունն ու ճկունությունը: Այդ երկու հաստատությունները միասին են կառավարում Հավատի գործերը, համակարգում են ամբողջ գործունեությունը, նպաստում են նրա շահերին, իրականացնում են նրա օրենքները և պաշտպանում են նրա օժանդակ ինստիտուտները: Այսպիսով այդ հաստատություններից յուրաքանչյուրը գործում է կոնկրետ ոլորտում, յուրաքանչյուրին տրված են օժանդակ մարմիններ՝ կոնկրետ առաջադրանքների և պարտավորությունների կատարման գործիքներ»[93]:

1965թ Արդարության Համաշխարհային Տունը տվել է այդ դիրքի հետևյալ լրացուցիչ բացատրությունը.

«Ուսմունքի միասնությունն ապահովվում է Գրվածքների բնագիրների առկայությամբ և մանրամասն մեկնաբանություններով, որոնք տրվել են Աբդուլ-Բահայի և Շողի էֆֆենդիի կողմից որևէ «հեղինակային» կամ «ոգենշնչված» մեկնաբանություն տալու կամ Պահապանի գործառույթների զավթման բացարձակ արգելքի հետ համակցված: Վարչակարգի միասնությունն ապահովվում է Արդարության Համաշխարհային Տան հեղինակությամբ: Այսպիսին է Շողի էֆֆենդիի բառերով «նրա Հայտնած Խոսքի անփոփոխությունը: Այդպիսին է նրա նշանակած կատարողների գործառույթները բնորոշող ճկունությունը: Նրանցից առաջինը պաշտպանում է Հավատի իսկությունը և պահպանում է Օրենքի մաքրությունը: Երկրորդը նման է կենդանի օրգանիզմի՝ ապահովում է Հավատի տարածման հնարավորությունը, որը համապատասխանեցված է մշտապես փոփոխվող հասարակության կարիքներին և պահանջներին»»[94]:

Եվս մեկ հայացք գցելով այդ յուրահատուկ նկարին, որը կոչվում է «Նոր համաշխարհային վարչակարգ» մենք կտեսնենք, թե ինչպես է իրականացվում «այն իդեալների գործնական կիրառումը, որոնց մասին երազել են Աստծո Մարգարեները և որոնք անհիշելի ժամանակներից վառել են բոլոր դարերի կանխատեսողների և բանաստեղծների երևակայությունը»: Այս բառերը վերցված են «Համաշխարհային վարչակարգի» մասին մի վաղ նամակից, որը հասցեագրված էր Արևմուտքի բահայիներին: Այն գրելու ամսաթիվը 1930թ է: Նամակում բացատրվում են բահայի Հավատի և այլ կրոնների եկեղեցական մարմինների միջև տարբերությունները: Տեղին կլիներ այստեղ բերել ևս մի քանի արտահայտություններ այդ վերին աստիճանի հրաշալի նամակից:

«Բահաուլլան ոչ միայն հրամցրեց մարդկությանը նոր և հարություն տվող Ոգով… Նա, ինչպես նաև Աբդուլ-Բահան Նրանից հետո, հստակորեն և կոնկրետ մի շարք օրենքներ հաստատեցին, հիմնեցին որոշակի հաստատություններ և մատնացույց արեցին Աստվածային Նախախանամության էակի: Այդ ամենը դառնալու է ապագա հասարա-

կության մոդել… աշխարհը միավորելու միասնական միջոց… Երկրի վրա արդարության թագավորության հռչակում…»[95]

Բահայիների հիմնադրամը

Աշխարհում Բահայի հավատի արագ տարածման, բոլոր մայրաքաղաքներում հրաշալի Խոնարհման Տների կառուցման, Բահայի հավատի բազմաթիվ տեղական և ազգային կենտրոնների համար անշարժ գույքի ձեռքբերման և հարյուրավոր տեղական և ազգային հիմնադրամների, ինչպես նաև բահայի դպրոցների, կրթական և այլ հաստատությունների հիմնադրման հետ կապված, հաճախ հարց է բարձրացվում, թե «որտեղի՞ց են վերցվում այդ միջոցները»:

Հիմնադրամներում կարող են մասնակցել միայն բահայիները: Չի կարելի անցկացնել Ուսմունքի տարածման որևէ աշխատանք, ձեռք բերել որևէ անշարժ գույք, հիմնադրել որևէ հատուկ հիմնադրամ, ընդհանրապես զբաղվել որևէ գործունեությամբ այլ կերպ, եթե ոչ այն միջոցներով, որոնք եկել են ճանաչված և ընդունված աբյուրից: Հիմնադրամում ներդրում կատարելը յուրաքանչյուր բահայիի պարտականությունն է: Ներդրումների չափը, նրանց ժամկետները, ձևը, նպատակը (ընդհանուր օգտագործման, թե որևէ կոնկրետ նպատակի) յուրաքանչյուր անհատ հավատացյալի խղճի հարցն է: Ներդրումները կատարվում են տեղական, ազգային կամ միջազգային գանձապահին՝ առանց շրջապատի ուշադրության գրավման, հաճախ անգամ գաղտնի:

Այն դեպքում, եթե հիմնադրամում ներդրում ընդունելու մեջ համառում է ոչ բահային, նրան պետք է բացատրել, որ նման աղբյուրներից միջոցները չեն կարող օգտագործվել Հավատի նպատակների համար, դրանք պետք է փոխանցել որևէ այլ բարեգործական կազմակերպության: Շողի էֆֆենդին գրել է.

«Ես զգում եմ, որ պետք է շտապ հիշեցնեմ ձեզ հիմնադրամում բոլոր ներդրումների բացառապես և պարտադիր կամավոր լինելու հիմնարար սկզբունքը ի նկատի ունենալու անհրաժեշտության մասին:

Պետք է բոլորին բացատրել, որ ստիպելու բոլոր ձևերը, որքան էլ դրանք անուղղակի կամ աննշան թվան, արմատապես կործանում են այն սկզբունքները, որոնք ընկած են հիմնադրամի հիմքում, նրա հիմնադրման օրվանից…»[96]

«Հիմնադրամների ապահովումը կազմում է այն ծագող հաստատությունների հիմքը, որոնց հիմքը դուք ջանում եք դնել: Անկասկած չի կարելի գերագնահատել դրանց նշանակությունը: Կասկած չկա, որ անարտահայտելի օրհնությունը կպսակի յուրաքանչյուր ջանք, որն ուղղված է այդ նպատակին…[97]»:

«Մենք պետք է նման լինենք աղբյուրի կամ ակունքի, որն անընդհատ դատարկվում է և անընդհատ լցվում է անտեսանելի պահուստից: Միշտ պատրաստ լինել տալու մերձավորի բարիքի համար, առանց վախենալու աղքատությունից և հուսալով ամեն տեսակի հարստության և բոլոր բարիքների աղբյուրի անփոփոխ շնորհի վրա, ահա ճշմարիտ կյանքի գաղտնիքը»[98]:

Բահայիների Խոնարհման տները

Ապագայում բահայիների Խոնարհման տներ կկառուցվեն յուրաքանչյուր քաղաքում և յուրաքանչյուր գյուղում, բայց այսօր դրանք կառուցվում են «յուրաքանչյուր մայրցամաքում կամ կղզիախմբում մեկ տաճար» սկզբունքով, ընդ որում ապագա շինարարության համար արդեն ձեռք է բերված ոչ քիչ քանակությամբ հողատարածք: Հավատացյալների համեմատաբար փոքր քանակության դեպքում առավել տրամաբանական է համարվում ներդրումները ծախսել Հավատի տարածման և զարգացող երկրներում աղքատներին և ոչ բավականաչափ կրթված հավատացյալների օգնությանը: Այդ պատճառով հրաշալի տաճարների կառուցումը մնում է ապագային, երբ հավատը կընդգրկի միլիոնավոր նոր մարդկանց: Արդեն կառուցված Խոնարհման Տները, ինչպես նաև նրանք, որոնք կառուցվում են այժմ, ցուցադրում են պաշտամունքի գործընթացի նոր սկզբունքները և ծառայում են ավելի

շուտ որպես մոդել նրա, թե ինչպիսի տեսք պետք է ունենան այդ կառույցներն ապագայում:

Խոնարհման Տան կենտրոնական շենքն ունի ինը կողմ, նրա դռները բաց են բոլոր ծագման մարդկանց համար: Այն պսակված է գմբեթով: Խոնարհման Տներում երգեցողությունը, ասմունքը, ընթերցումներն անցկացվում են միայն ձայնով, երաժշտական գործիքներ օգտագործել չի թույլատրվում: Կարող են ընթերցվել տարբեր կրոնների Գրվածքներից հատվածներ, քարոզները և վարչական գործունեությունը անցկացվում է նրա պատերից դուրս:

Խոնարհման Տան զարգացմանը զուգահեռ նրա կենտրոնական կառույցի շուրջ կառուցվում են լրացուցիչ շինություններ, օրինակ բահայի դպրոց, մանկատուն, հիվանդանոց, ապաստարան: Այլ խոսքերով բահայիների ըմբռնմամբ Խոնարհման Տունը ծառայում է համայնքի ոչ միայն հոգևոր, այլև սոցիալական կարիքներին, նրա օժանդակ և հումանիտար պահանջմունքներին: Խոնարհման Տան անվանումն արաբերեն հնչում է «Մաշրիկուլ-Ազկար» և թագմանաբար նշանակում է «Վայր, որտեղ բարձրանում է Աստծուն Գովերգելու արևածագը»:

Այժմ Խոնարհման Տներ կառուցված են Ուիլմեթում (Չիկագոյի մոտակայքում, ԱՄՆ), Կամպալում (Ուգանդա), Ֆրանկֆուրտ-Մայնում (Գերմանիա), Սիդնեյում (Ավստրալիա), Պանամա-Սիթիում (Պանամա), Նոր Դելիում (Հնդկաստան), Ապիայում (Արևմտյան Սամոա) և Սանտյագոյում (Չիլի): Ուիլմեթի Խոնարհման Տունն ունի մեկ օժանդակ կառույց՝ ծերանոց: Ուիլմեթում, Կամպալում և Ֆրանկֆուրտում այդ երկրների Ազգային Հոգևոր ժողովները տեղակայված են Խոնարհման Տների կենտրոնական շինությունների մոտակայքում:

Բահայիների օրացույցը

Աշխարհում կան զարմանալի մեծ քանակությամբ օրացույցների համակարգեր, այդ պատճառով եթե նպատակ է դրվում հասնել ճշմարիտ համաշխարհային միասնության, անհրաժեշտ է ընդունել միասնական, բոլորի կողմից ընդունված ամսաթվերի համակարգ: Բահայիների կյանքի ևս մեկ տարբերակիչ գիծ է նրանց նվիրվածությունը օրացույցին, որը ժամանակին ներդրել էր Բաբը: Այդ օրացույցն օգտագործվում է բահայիների համայնքի կյանքի բոլոր ոլորտներում և իր մեջ ներառում է որոշ սկզբունքայնորեն նոր գաղափարներ, որոնք վերաբերվում են ժամանակի չափմանը և ամսաթվերի հաստատմանը: Որպես հիմնական միավոր օգտագործվում է արևային տարին, բայց այն սկսվում է ինչպես Հին Պարսկաստանում մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը և նշվում է որպես Նովրուզի տոն, որը նշվում է նաև ժամանակակից Իրանում և նրան կից որոշ երկրներում: Այսպիսով տարվա սկիզբը ստանում է աստղաբանական բացատրություն: Ինչ վերաբերվում է բահայի դարաշրջանի սկզբին, ապա դրա առաջին տարին Բաբի հռչակման տարին է, այսինքն 1844թ:

Բահայի օրացույցում կա 19 ամիս 19 օրով դրանցից յուրաքանչյուրում, դա ընդհանուր դառնում է 361 օր, այդ պատճառով տասնութերորդ և տասնիներորդ ամիսների միջև տեղադրվում են 4 կամ 5 օրեր՝ «Ներդրված օրեր»: Նովրուզի տոնին նախորդում է տասնիներորդ ամիսը, որը համընկնում է պասի հետ: Բաբն ամիսներն անվանել է Աստծո անուններին համապատասխան, ինչ վերաբերվում է բահայիների օրվան, դրանք սկսվում և ավարտվում են արևամուտով: Ամիսների անվանումներն են.

Ամիս	Արաբական անվանումը	Հայերեն թարգմանությունը	Առաջին օրը
1	Բահա	Վեհություն	մարտի 21
2	Ձալալ	Փառք	ապրիլի 9
3	Ձամալ	Գեղեցկություն	ապրիլի 28
4	Ազամաթ	Հոյակապություն	մայիսի 17
5	Նուր	Լույս	հունիսի 5
6	Ռահմաթ	Ողորմածություն	հունիսի 24
7	Կալիմաթ	Բառեր	հուլիսի 13
8	Կամալ	Կատարելություն	օգոստոսի 1
9	Ասմա	Անուններ	օգոստոսի 20
10	Իզզատ	Հզորություն	սեպտեմբերի 8
11	Մաշիյաթ	Կամք	սեպտեմբերի 27
12	Իլմ	Գիտելիքներ	հոկտեմբերի 16
13	Հուդրաթ	Ուժ	նոյեմբերի 4
14	Գոուլ	Խոսք	նոյեմբերի 23
15	Մասայիլ	Հարցեր	դեկտեմբերի 12
16	Շարաֆ	Պատիվ	դեկտեմբերի 31
17	Սուլթան	Տիրապետություն	հունվարի 19
18	Մուլք	Գերիշխանություն	փետրվարի 7
Ներդրված օրեր փետրվարի 26-ից մինչև մարտի 1-ը			
19	Ալա	Բարձունք	մարտի 2

Տարվա ընթացքում նշվում են հետևյալ տոները և արեդարձները.

Նովրուզի տոն (Նոր տարի)	մարտի 21
Ռիզվանի տոն (Բահաուլլայի հռչակումը)	ապրիլի 21-ից մինչև մայիսի 2
Բաբի հռչակումը և Աբդուլ-Բահայի ծնունդը	մայիսի 23
Բահաուլլայի համբարձումը	մայիսի 29
Բաբի նահատակությունը	հուլիսի 9
Բաբի ծնունդը	հոկտեմբերի 20
Բահաուլլայի ծնունդը	նոյեմբերի 12
Կտակի օրը	նոյեմբերի 26
Աբդուլ-Բահայի համբարձումը	նոյեմբերի 28
Պաս: 19 օր Ալա ամսի առաջին օրից սկսած	մարտի 2-ից 20-ը

Բահայի տարում կա ինը տոն, երբ դադարեցվում են բոլոր աշխատանքները: Դրանցից երեքը սահմանված են ի հիշատակ Բահաուլլայի Հռչակման, մեկն ի պատիվ Բաբի Հռչակման: Մյուս երկուսը նշանավորում են Բաբի և Բահաուլլայի ծնունդները, երկու ամսաթվերը հաստատվել են ի հիշատակ նրանց մահվան: Իններորդ տոնը Նոր Տարին է:

«Արտաքին» աշխարհի հետ փոխհարաբերությունները

Գրքի երրորդ մասում հիմնական ուշադրությունը դարձվում է բահայի կյանքի առանձնահատկություններին, համայնքի գործունեությանը և բահայիների հատուկ օրացույցին: Սակայն չարժե մտածել, որ բահայիներն ուզում են ապրել և աշխատել աշխարհից հեռու, յուրահատուկ «համայնքով» կամ ինչ-որ այլ կերպ մեկուսանալ մարդկանցից: Ընդհակառակը, նրանք ամեն կերպ ձգտում են որքան հնարավոր է ավելի լիարժեքորեն ներգրավվել գործունեության ցանկացած տեսակում, որոնք իրենց կարծիքով կարող են լավագույնս ծառայել մերձավոր-

ների և ընդհանուր առմամբ ամբողջ մարդկության շահերին: Նրանք ստիպված են մտածել իրենց ժամանակի տեղաբախշման մասին, քանի որ բավականին ակտիվ և զբաղված են: Երիտասարդ տարիքում նրանք ձգտում են հաջողության հասնել կրթության ոլորտում, որ ապագայում ընդունակ լինեն հասարակությանը առավելագույն օգուտ տալ: Միաժամանակ նրանք այրվում են բահայիների երիտասարդական միջոցառումներում մասնակցելու ցանկությամբ, կիրակնօրյա դպրոցներում, դառնում են Հավատի ճանապարհորդող ուսուցիչներ ինչպես իրենց երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Բազմաթիվ երիտասարդ բահայիներ, օգտագործում են իրենց արձակուրդները, որպեսզի այցելեն այն համայնքներին, որոնք հազվադեպ են այցելվում արտասահմանյան հյուրերի կողմից: Իրենց ժամանակը տեղաբախշելով՝ բահայիները պետք է ի նկատի ունենան շարժումներում միգուցե առավել լիարժեքորեն մասնակցելու անհրաժեշտությունը, որոնք նպաստում են մարդկության առաջընթացին:

Տեղական և ազգային մակարդակում բահայիները, կախված երկրից հաճախ համագործակցում են ոչ պետական և հասարակական կազմակերպությունների և շարժումների հետ, էսպերանտո ակումբների, էկոլոգիական խմբերի և այլոց, որոնք իրենց գործունեության մեջ օգտագործում են ունիվերսալության սկզբունքը: Այն դեպքերում, երբ այս կամ այն կազմակերպությունը ներգրավվում է կուսակցական կամ քաղաքական պայքարի մեջ, սկսում է առաջնայնություն տալ հակամարտող կողմերից մեկին, նախընտրություն ցուցաբերել իրար հակասող գաղափարախոսություններից մեկի հանդեպ, Արևմուտքին կամ Արևելքին, սպիտակներին կամ սևերին, բահայիները դադարում են իրենց մասնակցությունն այդ կազմակերպությունում և դադարեցնում են այն գործունեությանը աջակցելը, որն ուղղված է մյուսների հաշվին մի խմբի շահերի հաղթանակին:

Բահայիների միջազգային ընկերակցությունը

Միջազգային մակարդակում վերջին տասնամյակում հասել ենք հրաշալի հաջողությունների: 1947թ գարնանը ԱՄՆ-ի և Կանադայի Ազգային Հոգևոր Ժողովը լիազորվեց ՄԱԿ-ի Տեղեկատվական բյուրոյում որպես ոչ պետական կազմակերպություն, որը ներկայացված է որպես դիտորդ: Մեկ տարի անց արդեն ութ նման Ազգային Հոգևոր Ժողովներ կոլեկտիվ ճանաչվեցին որպես միջազգային ոչ պետական կազմակերպություն «Բահայիների միջազգային ընկերակցություն» անունով:

Բահայիների միջազգային ընկերակցությունն ակտիվորեն մասնակցում է ՄԱԿ-ի ավելի մեծ քանակությամբ հաստատությունների աշխատանքում, ներառյալ Սոցիալ-Տնտեսական Խորհուրդը, Մարդու Իրավունքների հանձնաժողովը, Կանանց իրավունքների հանձնա-ժողովը, Սոցիալական զարգացման հանձնաժողովը, Բնակչության թվաքանակի հանձնաժողովը և Թմրանյութերի չարաշահման դեմ պայքարի հիմնադրամը ՄԱԿ-ում, ինչպես նաև ՄԱԿ-ի համարյա բոլոր վեհաժողովներում և «միջազգային տարիներում»: Համանքը նաև համագործակցում է ՄԱԿ-ի զարգացման և հումանիտար հարցերով զբաղվող աճող քանակությամբ մարմինների հետ, այնպիսիք ինչպիսիք են Յունիսեֆը՝ ՄԱԿ-ի փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի գրասենյակը, ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի նախագիծը և ՄԱԿ-ի Պարենի ու գյուղատնտեսական կազմակերպությունը: Բահայիների միջազգային ընկերակցությունը բազմաթիվ գրքույկներ և հղումներ է հրատարակել այն հարցերի վերաբերյալ, որոնք վերաբերվում են ՄԱԿ-ի իրավասություններին, ինչպես օրինակ խաղաղությունն ու սպառազինությունը, սոցիալ-տնտեսական զարգացումը, ռասայական խտրականության վերացումը, գիտությունը և տեխնիկան, մարդու իրավունքները, կանանց դիրքը, բնակչությունը, թմրանյութերի չարաշահումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, երեխաների, երիտասարդների և ծերերի խնդիրները, ընտանիքը, ջուրը, իրավունքների խախտման կանխարգելումը, անապատացումը, բնակելի վայրերի խնդիրները, տիեզերքը, ազգային փոքրամասնությունները, ՄԱԿ-ի համալսարանը և ատոմային էներգիայի խաղաղ օգտագործումը: Այդ փաստաթղթերում առաջարկվում է ոչ միայն բահայիների տեսակետը կյանքի և հասարակության խնդիրներին, այլ

նաև առաջարկվում է բահայիների սկզբունքների կիրառում կոնկրետ համաշխարհային խնդիրների լուծման համար:

1987թ հոկտեմբերին պաշտոնական պայմանագիր է կնքվել Բահայիների համաշխարհային համայնքի և Բնության համաշխարհային հիմնադրամի (ԲՀՀ) միջև: Այսպիսով Բահայի հավատը դարձավ վեցերորդ համաշխարհային կրոնը, որը միացավ ԲՀՀ-ի «Կրոնը և բնության պահպանությունը» Ցանցին, որը ստեղծվել է շրջակա միջավայրի պահպանության գործում 1986թ բնապահպան և կրոնական խմբերի փոխգործակցության համար:

Սոցիալ-տնտեսական զարգացումը

Այն դեպքում, երբ սոցիալ-տնտեսական զարգացումը դարձել է միջազգային կարևորության գործ միայն վերջին տասնամյակում, բահայիների համար այդ խնդիրները իրենցից ներկայացնում են հասարակության զարգացման բնական արդյունք վերջին 100 տարվա համար: 1897թ Իրանի բահայիների համայնքներն ընդունեցին ընդլայնված կրթական նախագիծ, որն այնքան հաջողակ ստացվեց, որ 1930-ական թթ-ին բազմաթիվ իրանական համայնքներում գործնականում վերացվեց տգիտությունը, կանանց բավականին լիարժեք ազատություն տրվեց և ամենուր ընդունվեց գիտության, կրթության և ֆիզիկական առողջության ամրապնդման նշանակությունը: Անկախ հավատից, ռասայից կամ ազգից բոլորին ծառայելը բահայի կյանքի նշանակալից տարր է:

Բահայի համայնքի զարգացումը սկսվում է այն պահից, երբ բահայիները սկսում են կյանքում կիրառել իրենց կրոնի հոգևոր սկզբունքները: Այդ գործընթացը «պահվածքի ուղղամտության» և խորհրդակցելու սկզբունքի հետ միասին, որը պահանջվում է յուրաքանչյուրից, սեփական ուժերում ավելի խորը վստահություն է տալիս: Սեփական կյանքի պայմանների բարելավման ուղիների ըմբռնմանը զուգահեռ, բահայիներն ընդունակ են այլոց համար ցուցադրել իրենց կենսակերպի առավելությունները, ընդ որում կարևոր չէ, թե համայնքը գտնվում է «զարգացող երկրում», թե նյութապես ավելի նպաստավոր

պայմաններ ունեցող աշխարհի մասում: Բահայի հավատի ուսմունքն իր հետևորդներին տալիս է հաջողության բանալի, միասնություն, ինչպես հոգևոր, այնպես էլ գործողության ոլորտում:

1983թ Բահայի հավատի Համաշխարհային կենտրոնում բացվեց սոցիալ-տնտեսական զարգացման բյուրո, այդ ոլորտում գործունեության աջակցման և համակարգման նպատակով: 1988թ բահայիները մասնակցել են ավելի քան 1200 զարգացման նախագծերում ամբողջ աշխարհի համարյա 100 երկրում հաճախ ոչ քաղաքական հաստատությունների հետ համագործակցելով: Չնայած նրան, որ բահայիներն իրենց վարչակարգի շնորհիվ ընդունակ են հասնել միջազգային համագործակցության բարձր մակարդակի, բահայիների զարգացման ծրագրերը հիմնված են մարդկանց լայն մասսաների ակտիվության վրա, և իրենց էներգիան ստանում են այդ աղբյուրից: Յուրաքանչյուր տարի ընտրվող Տեղական Հոգևոր Ժողովներն իրենցից ներկայացնում են իդեալական միջոց զարգացման նախագծերի մշտական ուղղորդման, աջակցման և գնահատման համար: Իրենց սոցիալ-տնտեսական զարգացման բոլոր նախագծերում, որոնք նպաստում են ինքնավստահության զարգացմանը, բահայիները զարգացնում են միջազգային քաղաքացիության և ազգերի ու երկրների փոխկապվածության սկզբունքները:

Այն շրջաններում, որտեղ նյութական մակարդակն առավել ցածր է, և տեղի բնակչության համար չկան հասանելի դպրոցներ, բահայիները բացում են նախակրթական հաստատություններ գրաճանաչությանը նպաստելու համար: Նրանք ներմուծվում են գյուղատնտեսության զարգացման ծրագրերում, կրթական ռադիոկայանների աշխատանքում, ագրարային և բժշկական նախագծերում: Որպես սոցիալ-տնտեսական զարգացման և խաղաղության հաստատման մեջ կանանց դերին տրվող նշանակության հետևանք, նրանց կարիքներին և հույսերին հատուկ ուշադրություն է դարձվում:

Համաշխարհային խաղաղության խոստումը

1985թ-ի հոկտեմբերին Արդարության Համաշխարհային Տունը հրատարակեց մի ուղերձ, որն ուղղված էր մոլորակի բոլոր մարդկանց և կոչվեց «Համաշխարհային խաղաղության խոստում»: 1986թ-ի դեկտեմբերին Խաղաղության տարվա եզրափակիչ ամսին այդ փաստաթուղթը հանձնվեց 186 պետությունների ղեկավարներին: Մեծամասամբ Ազգային Հոգևոր ժողովների ներկայացուցիչներն անմիջականորեն իրենք են հանձնել երկրի ղեկավարներին այդ ուղերձները՝ միաժամանակ բացատրելով բահայիների աշխարհայացքը՝ խաղաղության հաստատման ճանապարհի վերաբերյալ: Միաժամանակ բահայիները տարածեցին կոչերը նաև տեղական և ազգային մակարդակի քաղաքական գործիչների վրա: Խաղաղության Միջազգային տարվա ընթացքում ուղարկվեց և առձեռն տրվեց այդ կոչի մոտ մեկ միլիոն տարբերակ՝ թարգմանված 63 լեզուներով: Այդ աշխատանքն այժմ էլ է շարունակվում, որպեսզի կոչի բովանդակությունը հայտնի դառնա բոլոր երկրների բնակչության բոլոր շերտերին: Շատ համայնքներ ամբողջությամբ կամ մասնակիորեն հրատարակեցին այդ կոչի բովանդակությունն իրենց տեղական պարբերականներում, որպեսզի դրա բովանդակության հետ ծանոթանան իրենց քաղաքացիներից որքան հնարավոր է մեծ քանակությամբ համերկրացիներ:

«Համաշխարհային խաղաղության խոստումը» սահմանեց բահայիների գործունեության կենտրոնը ինչպես նախքան, այնպես էլ Խաղաղության միջազգային տարվանից հետո: Այն օգնում է մոլորակի բոլոր մարդկանց հասկանալ, թե ինչ ուղիներով կարելի է հասնել ժողովուրդների միջև խաղաղության: Բահայիները շարունակում են միջոցառումներ կազմակերպել, որոնք նպաստում են խաղաղության գործին՝ ցույց տալով ժողովուրդներին միավորման ճանապարհները և ցուցադրելով բոլոր մարդկանց խաղաղության կառուցման ունակությունը: Նրանք հատկապես ընդգծում են այժմ գոյություն ունեցող կամքի կաթվածը հաղթահարելու միջոցները և իրենց քաղաքացիների մեջ պահպանում են մարդկության ապագայի հետ կապված հույսերը: Ինչպես բացատրում է Արդարության Համաշխարհային Տունը «Այն փաստի անկեղծ ընդունումը, որ նախապաշարմունքները, պատերազմը և շահագործումը արտացոլում են լայնարձակ պատմական գործընթացի

ոչ հասուն փուլերը և որ մարդկային ցեղն այժմ անխուսափելի շփոթմունք է զգում, որն արտացոլում է նրա կոլեկտիվ դժգոհությունը, հուսահատության առիթ չէ, այլ անհրաժեշտ պայման է հսկայական աշխատանքի սկզբի համար, որն ուղղված է խաղաղասեր կարգի կառուցմանը: Թեմայի հիմնական ուղղությունները, որոնք մենք առաջարկում ենք Ձեր ուշադրությանը, կայանում են նրանում, որ նման աշխատանքը հնարավոր է, որ դրա համար անհրաժեշտ ստեղծարար ուժերը գոյություն ունեն, որ մարդկությունը միավորող սոցիալական կառույցները կարող են ստեղծվել»:

Չնայած նրան, որ գալիք տարիները կարող են նոր աղետներ և տառապանքներ բերել, որքան էլ մշուշոտ թվա մոտական ապագան, բահայի համայնքը համոզված է, որ մարդկությունը կդիմավորի այդ բարձրագույն փորձությունը՝ բարենպաստ ավարտի հավատով: Տենդագին փոփոխությունները, որոնց ավելի ու ավելի արագ է մոտենում մարդկությունը, բնավ չեն նշանավորում քաղաքակրթության ավարտը: Ընդհակառակը նրանք կծառայեն «մարդու թաքնված հնարավորությունների» ազատ արձակմանը, «Երկրի վրա նրա առաքելության, նրա էության ներքին գեղեցկության ամբողջական»[99] բացահայտմանը:

Մեր լավատեսության աղբյուրը պատերազմների ավարտից այն կողմ տեսնող կանխատեսումն է և միջազգային համագործակցության կազմակերպությունների ստեղծումն է: Ժողովուրդների միջև մշտական խաղաղությունը նշանակալից փուլ է, բայց ինչպես պնդում է Բահաուլլան, մարդկության սոցիալական զարգացման վերջնական նպատակը չէ: Նախնական հաշտությունից այն կողմ, որը առաջացել է ատոմային աղետի առջև վախով, քաղաքական խաղաղությունից հետո, որի մեջ ազգերն անվստահորեն և փոխադարձ կասկածելի մրցակցությամբ մուտք կգործեն, համագործակցության բազմաթիվ փորձերից անդին, որոնք կկարողանան այդ քայլերն իրական դարձնել, ընկած է վեհանձն նպատակ. «ԲՈԼՈՐ ԱԶԳԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ՄԵԿ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ»[100]:

Հղումներ

---

[1] Տվյալ բառում շեշտն ընկնում է վերջին վանկի վրա:

[2] The Dawn-Breakers. Nabil's Narrative of the Early Days of the Baha'I Revelation. Translated from the original Persian by Shoghi Effendi. London: Baha'i Publishing Trust, 1975, p.19: Կա ռուսերեն թարգմանությունը: Նաբիլի պատմվածքը՝ «Նոր դարաշրջանի լուսավորիչը», s.l., s. a.

[3] The Dawn-Breakers, p. 40

[4] ibid., p.40

[5] ibid., p.42.

[6] ibid., p.41.

[7] ibid., p.44.

[8] ibid., p.44.

[9] ibid., p.45.

[10] ibid., p.49.

[11] ibid., p.65.

[12] Բաբիները (շեշտը դրվում է վերջին վանկի վրա) Բաբի և Նրա հավատքի հետևորդներն էին: Պատմական գործերում հնարավոր է հանդիպել նաև բաբիդ տերմինին: Տես. օր., Իսլամ, Աթեիստի բառարան M.: Politicized, 1988.

[13] ibid., p. 373

[14] ibid., p.375

[15] ibid., p.376. Baha'i

[16] Baha'u'llah. Epistle to the Son of the wolf. Translated by Shoghi Effendi. Wilmette, Ill.: Baha'i Publishing Trust, 1988,p. 141.

[17] The Dawn-Breakers, p. 445.

[18] ibid., p.461,462.

[19] Shoghi Effendi. God Passes By. Wilmette, Ill.: Baha'I Publishing Trust, 1979, p. 101.

[20] ibid., p.102.

[21] Prince D. I. Dolgorukov

[22] God Passes By, p. 101.

[23] Baha'u' llah. Gleanings from the Writings of Baha'u'llah. Wilmette, Ill.: Baha'i Publishing Trust, 1976, p. 254.

[24] J.E. Esslemont. Baha'u'llah and the New Era. London, Baha'i Publishing Trust, 1974, p. 37. Կա ռուսերեն թարգմանությունը՝ Ջ. Էսլեմոնտ: Բահաուլլան և Նոր դարաշրջանը: Langenhain: Baha'i –Verlag, 1984.

[25] Gleanings, p. 223

[26] ‘Abdu’l-Baha. Selections from the writings of ‘Abdu’l –Baha. Haifa: Baha’i World Centre, 1982, p.27
[27] Gleanings, p. 216
[28] ‘Abdu’l – Baha.Paris Talks. London: Baha’i Publishing Trust, 1979, p. 131.
[29] God Passes By, p. 217.
[30] Paris Talks, p. 129.
[31] God Passes By, p. 217.
[32] Gleanings, p. 216.
[33] Gleanings, p.139.
[34] Gleanings, p.213.
[35] H.M Balyuzi. ‘ Abdu’l – Baha. The Centre of the Covenant of Baha’u’llah. Oxford: George Ronald, 1987, p. 141.
[36] Gleanings, p.49-50.
[37] Gleanings, p.52.
[38] Shoghi Effendi. The Advent of Divine Justice. Wilmette, Ill.: Baha’i Publishing Trust, 1939, p. 31.
[39] ibid., p.31.
[40] ‘ Abdu’l- Baha. Selections from the Writings of ‘ Abdu’i – Baha. Haifa: Baha’i World Centre, 1978, p.291.
[41] Paris Talks, p. 143.
[42] ibid., p.139.
[43] ibid., p. 53.
[44] ibid., p. 129.
[45] Baha’i World Faith. Wilmette, Ill.: Baha’i Publishing Trust, 1956, p. 341.

[46] Gleanings, p.166.
[47] ibid., p. 47.
[48] ibid., p. 62
[49] Baha’u’llah. Hidden Words. Wilmette: Baha’i Publishing trust, 1985, p. 4. Կա ռուսերեն թարգմանությունը: Բահաուլլա, Նվիրական խոսքեր. Langenhain: Baha’i – Verlag, 1983.
[50] Gleanings, p.77.
[51] Hidden Words, p. 32.
[52] Gleanings, p. 155-156.
[53] Gleanings, p.149
[54] ‘Abdu’l- Baha. Tablets of ‘Abdu’l –Baha ‘ Abbas, Vol. II. Chicago, Baha’i Publsihing Society, 1915, p. 98.
[55] Gleanings, p.250.
[56] Bah’i Prayers, Wilmette, Ill.: Baha’i Publishing Trust, 1985, p. 105.

[57] ibid., p. 105.
[58] Baha'i World Faith, p. 364.
[59] Living the Life. London: Baha'i Publishing Trust, 1984, p. 42.
[60] Tablets of 'Abdu'l –Baha , Vol. II, p. 474.
[61] Faith for Every Man. London: Baha'i Publishing Trust, 1972, p. 63.
[62] The Baha'i Revelation, 1955, p. 291-292.
[63] Paris Talks, p. 162.
[64] Baha'u'llah and The New Era, p. 141.
[65] Baha'i Education (A Compilation from Baha'i Writings). London: Baha'i Publishing Trust, 1976, p.83.
[66] Shoghi Effendi. Guidance for Today and Tomorrow. London: Baha'i Publishing Trust, 1953, p. 168.
[67] ibid., p. 173-174.
[68] Guidance for Today and Tomorrow, p. 86
[69] ibid., p. 86-87.
[70] ibid., p. 87
[71] ibid., p. 87-88.
[72] The Covenant of Baha'u'llah. London: Baha'i Publishing Trust, 1963, p. 101.
[73] ibid., p. 101-102.
[74] Wellspringof Guidance (Universal House of Justice). Wilmette, Ill.: Baha'i Publishing Trust, 1969, p. 11.
[75] ibid., p.41.
[76] ibid., p. 141.
[77] ibid., p. 142-143.
[78] Baha'i Journal of the United Kingdom, No. 218, p. 2.
[79] Local Spiritual Assemblies. London: Baha'i Publishing Trust, 1970, p. 3
[80] ibid., p.3.
[81] Baha'i Journal of the United Kingdom, No. 222, p. 2.
[82] Local Spiritual Assemblies,p. 9.
[83] National Spiritual Assemblies: London: Baha'i Publishing Trust, 1972, p. 1.
[84] ibid., p.3.
[85] ibid., p.18-19.
[86] Baha'u'llah. Tablets of Bah'u'llah Revealed after the kitab-i-Aqdas. Haifa; Baha'i World Centre, 1982, p. 168.
[87] 'Abdu'l – Baha. The Promulgation of Universal Peace. Wilmette, Ill.: Baha'i Publishing Trust, 1982, p. 72-73.
[88] Shoghi Effendi. Baha'i Administration: Selected Messages 1922- 1932. Wilmette: Baha'i Publishing Trust, 1972, p. 21-22
[89] ibid., p. 22-23.

[90] ‘Abdu’l – Baha. Tablets of Abdu’l – Baha, Vol.II, P. 553.

[91] Lights of Guidance. A Baha’i Referenece File. New Delhi: Baha’i Publishing Trust, 1988, p. 176.

[92] Covenant of Baha’u’llah, p.17-19.

[93] Guidance for Today and Tomorrow, p. 84-85.

[94] Wellspring of guidance, p.53.

[95] Shoghi Effendi. The World Orderof Baha’u’llah.Wilmette: Baha’i Publishing Trust, 1938, p. 19-20.

[96] Lifeblood of the Cause. London: Baha’i Publishing Trust, 1970, p. 4.

[97] ibid., p.9.

[98] ibid., p.12.

[99] The Promise of World Peace. A Statement by thee Universal House of Justice. Haifa: Baha’i World Centre, 1985, p.1-4. Կա ռուսերեն թարգմանությունը. Ամբողջ աշխարհի խաղաղության խոստումը: Արդարության Համաշխարհային Տան ուղերձը աշխարհի ազգերին: hofheim- langenhain: Baha’i –Verlag , 1989.

[100] ibid., p. 18.

Բովանդակություն

Ներածություն 3

Ինչպես է ծագել Բահայի հավատը 5

Իրան 5

Ավետյացի փնտրտուքները.....6

Բաբի հռչակումը 8

Բաբի քարոզը 13

Բաբի մահապատիժը 15

Բաբը և Նրա առաքելությունը 17

Բահաուլլա 18

Աքսորը դեպի Իրաք 22

Աքսորը դեպի Թուրքիա 25

Աքսորը դեպի Սուրբ Երկիր 28

Աբդուլ-Բահա 32

Աբդուլ-Բահայի դերի յուրահատկությունը 35

Բահայի հավատի զարգացումը նրա երեք
Գլխավոր Մարմինների կենդանության օրոք 36

Աբդուլ-Բահայի ուղերձը 36

Ինչին են հավատում բահայիները ……..……..38

Մարդկության միասնությունը ……..……38

Կրոնների միասնությունը ……40

Նախապաշարմունքների հաղթահարումը ……..……43

Կրոնի և գիտության ներդաշնակությունը ……...44

Ճշմարտության ինքնուրույն որոնումը ……..…45

Աստծո էությունը ……...46

Մարդու բնույթը ……..…48

Մարդու հոգին, կյանք և մահ ……..…49

Զարգացում ……...51

Չարը և բարին ……..51

Ինչպես պետք է մարդն ապրի……..……53

Ընտանիք ……...…56

Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը ……60

Համընդհանուր պարտադիր կրթությունը ……62

Համաշխարհային քաղաքակրթության զարգացումը ……..…… 63

Արգելքները ……65

Ինչպես են ապրում բահայիները ……66

Ներածություն ……66

Նոր համաշխարհային վարչակարգը……68

Բահայիների հիմնադրամը ……94

Բահայիների Խոնարհման տները ……95

Բահայիների օրացույցը ……97

«Արտաքին աշխարհի» հետ փոխհարաբերությունները ……99

Բահայիների միջազգային ընկերակցությունը ……101

Սոցիալ-տնտեսական զարգացումը ……102

Համաշխարհային խաղաղության խոստումը ……104

Հղումներ ……106